



# Աշխատանքի իմ որոնումը

---

ԻՆՔՆԱՊԱՀՆՈՎՈՒՄ

# ՆԱԽԱԲԱՆ

## ԿԱՐՈՂ Է ԱՅՍ ԽՈՒՄԲԸ ՕԳՆԵԼ ԻՆՉ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՏԵԼ:

Աշխատանք գտնելը հեշտ գործ չէ, սակայն այս ինքնապահովման խումբը կօգնի ձեզ սովորել աշխատանք գտնելու և հաջողության հասնելու լավագույն ուղին: Խմբի ժողովներին դուք կպարտավորվեք կատարել հատուկ վարժություններ, իսկ խումբը ձեզ գաղափարներ կտա և կքաջալերի: Այս խմբի նպատակն է ոչ միայն օգնել աշխատանք գտնել, այլև գործել առ Տերն ավելի մեծ հնազանդությամբ և հավատքով, ստանալ Նրա կողմից խոստացված նյութական և հոգևոր ինքնապահովման օրհնությունները:

## ԻՆՉ Է ԻՐԵՆԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ԻՆՔՆԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՈՒՄԲԸ:

Ինքնապահովման խումբը տարբերվում է եկեղեցու դասարաններից, դասերից և սեմինարներից: Այնտեղ չկան ուսուցիչներ, դեկավարներ կամ հրահանգիչներ: Խմբի անդամները սովորում են միասին, աջակցում և խրախուսում են միմյանց: Մենք միմյանց զեկուցում ենք մեր պարտավորությունների վերաբերյալ և միասին խորհրդակցում ենք խնդիրները լուծելու համար:

## ԻՆՉ ԵՆ ԱՆՈՒՄ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ:

Ժողովներին խմբի անդամները պարտավորվում են գործել: Մենք ոչ միայն *սովորում ենք*, այլև *անում ենք* այն, ինչը մեզ ինքնապահով է դարձնում: Մենք պարտավորություններ ենք ստանձնում, օգնում միմյանց պահել այդ պարտավորությունները և զեկուցում մեր առաջընթացի մասին: Քանի որ խումբն աշխատում է որպես խորհուրդ, կարևոր է կանոնավոր և ժամանակին հաճախել ժողովներին: Միշտ ձեզ հետ բերեք այս աշխատանքային տետրը, *Իմ ուղին դեպի ինքնապահովումը* և *Իմ հիմքը. սկզբունքներ, հմտություններ, սովորություններ*: Յուրաքանչյուր խմբի ժողով կտևի մոտ երկու ժամ: Մեր պարտականությունները կատարելու համար կպահանջվի օրական մեկից երկու ժամ:

## ԻՆՉ Է ՎԱՐՈՂՆ ԱՆՈՒՄ:

Վարողները զբաղվածության մասնագետներ կամ ուսուցիչներ չեն: Նրանք չեն առաջնորդում կամ ուսուցանում խմբին: Նրանք պարզապես օգնում են խմբին հետևել նյութերին, ճիշտ՝ ինչպես գրված է: Սովորաբար ինքնապահովման մասնագետն է վարում խմբի ժողովները. սակայն, մի քանի շաբաթ հետո անհրաժեշտության դեպքում գուցե խմբի անդամներին հանձնարարվի վարել ժողովը: Ավելին սովորելու համար, տես *Ղեկավարի ուղեցույց* և ուղեկցող տեսանյութերը՝ [srs.lds.org](http://srs.lds.org) կայքում:

## ԱՎԱՐՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Խմբի անդամները, ովքեր հաճախում են ժողովներին և պահում իրենց պարտավորությունները, հավակնում են ստանալ ինքնապահովման վկայական ՎՕՍ Բիզնես քոլեջից: Պահանջների համար տես *Իմ հիմքը* գրքույկի էջ 29:



«Ընտանիքում, ծխում կամ ցցում բոլոր խնդիրները հնարավոր է լուծել, եթե մենք լուծումները փնտրում ենք Տիրոջ ձևով՝ խորհրդակցելով, իսկապես խորհրդակցելով միմյանց հետ»:

**Մ. ՌԱՍՍԵԼ ԲԱԼԼԱՐԴ,**  
*Counseling with Our Councils*, rev. ed. (2012), 4

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ինչպե՞ս կարող եմ աշխատանքի լավ հնարավորություններ գտնել: .....	1
2. Ինչպե՞ս կարող եմ ինձ համոզիչ կերպով ներկայացնել: .....	21
3. Ինչպե՞ս կարող եմ «թաքնված» աշխատաշուկա մուտք գործել: .....	35
4. Ի՞նչ կարող եմ անել, որ ընտրությունն ինձ վրա կանգնի: .....	53
5. Ինչպե՞ս կարող եմ արագացնել իմ աշխատանքի որոնումը: .....	77
6. Ինչպե՞ս կարող եմ ինձ լավ դրսևորել աշխատանքում և շարունակել հաջողություններ գրանցել: .....	95
7. Որո՞նք են այս պահին աշխատանքային իմ ամենամեծ դժվարությունները: .....	113
8. Որո՞նք են այս պահին աշխատանքային իմ ամենամեծ դժվարությունները: .....	121
9. Որո՞նք են այս պահին աշխատանքային իմ ամենամեծ դժվարությունները: .....	129
10. Որո՞նք են այս պահին աշխատանքային իմ ամենամեծ դժվարությունները: .....	137
11. Որո՞նք են այս պահին աշխատանքային իմ ամենամեծ դժվարությունները: .....	145
12. Որո՞նք են այս պահին աշխատանքային իմ ամենամեծ դժվարությունները: .....	153
Աշխատանքի որոնման հաջողության քարտեզ.....	163

Հրատարակվել է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու կողմից  
Սուլթ Լեյք Սիթի, Յուտա

© 2014 by Intellectual Reserve, Inc.

Բոլոր իրավունքները վերապահված են:

Անգլերենի հաստատումը. 8/14

Թարգմանության հաստատումը. 8/14

*My Job Search*-ի թարգմանությունը

Armenian

12375 201



# 1

*Ինչպե՞ս կարող եմ  
աշխատանքի լսվ  
հնարավորություններ  
գտնել:*

---

**Աշխատանքի իմ որոնումը**

# ՎԱՐՈՂՆԵՐԻ ՇԱՄԱՐ

## Ժողովի օրը.


- Ձանգահարեք կամ հաղորդագրություն ուղարկեք խմբի անդամներին, եթե դուք ունեք նրանց կոնտակտային տվյալները: Հետաքրքրվեք՝ արդյոք նրանք գալու են ժողովին: Հրավիրեք նրանց 10 րոպե շուտ գալ՝ ցուցակագրվելու համար:
- Պատրաստեք ժողովի նյութերը.
  - Խմբի յուրաքանչյուր անդամի համար բերեք այս աշխատանքային տետրի և *Իմ հիմքը. սկզբունքներ, հմտություններ և սովորություններ* գրքույկի մեկ օրինակ:
  - Բերեք *Իմ ուղին դեպի ինքնապահովում* գրքույկի հինգ լրացուցիչ օրինակ, գուցե խմբի անդամները չեն ստացել այդ գրքույկից:
  - Հնարավորության դեպքում, պայմաններ ստեղծեք տեսանյութեր ցուցադրելու համար:
  - Գրքեր կամ տեսանյութեր չունե՞ք: Կարող եք ձեռք բերել առցանց՝ [srs.lds.org](http://srs.lds.org):

## Ժողովից 30 րոպե առաջ.

- Աթոռները դասավորեք սեղանի շուրջն այնպես, որ բոլորը մոտ լինեն:
  - Ժողովի ժամանակ վարողը չի կանգնում և չի նստում սեղանի գլխավերևում: Վարողը չպետք է ուշադրության կենտրոնում գտնվի, սակայն պետք է օգնի խմբի անդամներին կենտրոնանալ միմյանց վրա:


## Ժողովից 10 րոպե առաջ.

- Ջերմորեն ողջունեք խմբի անդամներին, երբ նրանք ներս մտնեն: Սովորեք նրանց անունները:
- Մի թուղթ տվեք, որ խմբի անդամները հերթով գրեն իրենց լրիվ անունը, ծուխը կամ ճյուղը և ծննդյան ամսաթիվը (օրը և ամիսը, *ոչ թե տարին*): Խմբի ժողովից հետո, այցելեք [srs.lds.org/report](http://srs.lds.org/report) կայք և հետևեք հրահանգներին՝ խմբի բոլոր անդամներին գրանցելու համար:
  - Առաջին հանդիպումից հետո կազմեք կոնտակտային տվյալներով ցուցակ՝ խմբին տրամադրելու համար:
- Ժամապահին հանձնարարեք, որ խմբին պահի ժամանակային գրաֆիկի մեջ: Խնդրեք նրան ժամը պահել, ինչպես ասվում է գրքում:
  - Օրինակ, դուք կտեսնեք հրահանգներ, որոնք ասում են՝ «Ժամանակ. 60 րոպե ժամանակ պահեք Սովորել բաժնի համար»: Ժամապահը հեռախոսի, ժամացույցի կամ այլ սարքի օգնությամբ ժամ է պահում և խմբին տեղեկացնում, թե երբ է ժամանակը լրացել: Այնուհետև խումբը կորոշի՝ անցնել հաջորդ բաժնին, թե մի քանի րոպե ևս շարունակել քննարկումը:



**Երբ սկսում եք՝**

- Ասեք. «Քարի գալուստ այս ինքնապահովման խումբ»:
- Խնդրեք մասնակիցներին անջատել հեռախոսները և այլ սարքերը:
- Ասեք հետևյալը.
  - «Մա «Աշխատանքի իմ որոնումը» ինքնապահովման խումբն է: Դուք այստեղ եք, որ աշխատա՞նք գտնեք, թե՞ բարելավեք ձեր աշխատանքը:
  - Աշխատանք գտնելն ինքնապահովման մեր նպատակի միայն մի մասն է: Աշխատանք գտնելուց հետո մենք շարունակելու ենք բարելավումը: Կհաճախե՞ք մեր խմբի ժողովներին աշխատանք գտնելուց հետո:
  - «Մենք հանդիպելու ենք 12 անգամ: Յուրաքանչյուր ժողով կտևի մոտ երկու ժամ: Մենք ամեն օր մեկից երկու ժամ ևս տրամադրելու ենք մեր պարտավորությունները կատարելուն, որը կօգնի մեզ աշխատանք գտնել: Կտրամադրե՞ք այդքան ժամանակ»:
- Բացման աղոթք ասել (և ցանկության դեպքում՝ օրհներգ կատարել):
- Ասեք հետևյալը.
  - «Ամեն անգամ հանդիպելիս մենք սկսում ենք *Իմ հիմքը. սկզբունքներ, հմտություններ և սովորություններ* անունը կրող գրքույկի մեկ թեմայով: Այդ գրքույկն օգնում է մեզ սովորել և ապրել սկզբունքներով, հմտություններով և սովորույթներով, որոնք տանում են դեպի հոգևոր և նյութական ինքնապահովում»:
- **20 րոպե ժամանակ պահեք *Իմ հիմքը գրքույկի թեմայի համար:***
- Կարդացեք Առաջին Նախագահության ներածական նամակը, որը տրված է էջ 2-ում, *Իմ հիմքը* գրքույկ: Այնուհետև լրացրեք այդ գրքույկի սկզբունք 1-ը և վերադարձեք այս աշխատանքային տետրին:





# ՍՈՎՈՐԵԼ

## ԻՆՉ ԵՆՔ ԱՆԵԼՈՒ ԱՅՍ ԽՄԲՈՒՄ:

**Ժամանակ.** 60 րոպե ժամանակ պահեք Սովորել բաժնի համար:

**Կարդացեք.** Այս ինքնապահովման խմբի նպատակը հասկանալու համար բացեք աշխատանքային տետրի շապիկի ներսի էջը և կարդացեք նախաբանը: Մենք այստեղ ենք օգնելու միմյանց գտնել նոր կամ ավելի լավ աշխատանք: Մենք նաև ունենք ավելի մեծ նպատակ՝ դառնալ ինքնապահով, որ կարողանանք ավելի լավ ծառայել մյուսներին:

**Կիրառեք.** Կիրառելով սկզբունքները, մենք միասին կսովորենք հաճախ շատ արագ աշխատանք գտնել: Այնպես որ դա արժե անել: Բացեք այս աշխատանքային տետրի վերջին էջում տրված Աշխատանքի որոնման հաջողության քարտեզը և հերթով կարդացեք այն:

**Կարդացեք.** Ամեն օր մենք կբարելավենք մեր աշխատանքի որոնումը: Սկսելով այսօր, մենք կկենտրոնանանք Աշխատանքի որոնման հաջողության քարտեզի վեց հարցերին ինքնուրույն պատասխանելու վրա: Մենք պարտավորություններ կստանձնենք, կգործենք և ապա կզեկուցենք խմբին: Մենք հաջողության կհասնենք միասին:

Անգամ աշխատանք գտնելուց հետո մենք պիտի շարունակենք հաճախել խմբի ժողովներին, որ սովորենք և գործնականում կիրառենք *Հիսթի* սկզբունքները: Մենք կարող ենք շարունակել օգնել՝ բարձրացնելով մեր խմբի անդամներին և ստանալով խմբի օգնությունը աշխատանքի որոնման դժվար պահերին:

Տրված է այս շաբաթվա հարցը և վարժությունը:

**Կարդացեք.** **ՇԱԲԱԹՎԱ ՀԱՐՑ**—Ինչպե՞ս կարող եմ աշխատանքի լավ հնարավորություններ գտնել:

**ՇԱԲԱԹՎԱ ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆ**—Պատրաստվել և պարապել «Իմ մասին 30 վայրկյանում»-ը և կիսվել դրանով հնարավորինս շատ մարդկանց հետ: Կարող եք կատարել Աշխատանքի արագացված որոնում (ոչ պարտադիր վարժություն):

Այս ժողովի մնացած մասը կօգնի մեզ պատասխանել այս հարցին և ձեռնարկել այդ քայլերը:

**Կիրառեք.** Եկեք խմբով կատարենք առաջին վարժությունը: Եկեք հինգ րոպեում որոշենք, թե ինչպես կոչենք մեր խումբը:

Ներքևում գրեք խմբի անունը.





## ԻՆՉ ՊԵՏՔ Է ԵՍ ԱՌԱՋԱՐԿԵՍ:

**Քննարկեք.** Եղե՞լ է այնպես, որ ամաչել եք ասել մարդկանց, որ դուք աշխատանք եք փնտրում:

**Կարդացեք.** Մենք չպետք է մտահոգվենք: Բոլորն էլ ինչ-որ պահի աշխատանք են փնտրել: Մեզանից յուրաքանչյուրը տաղանդներ և փորձ ունի: Բացի այդ, մենք Աստծո զավակներն ենք: Մենք կարո՞ղ ենք հաջողության հասնել: Մենք պետք է բոլորին ասենք, որ լավ աշխատանք ենք փնտրում և արժանի ենք դրան:

**Կիրառեք.** Բաժանվեք երեք հոգանոց փոքր խմբերի: Ձեր աթոռներն այնպես դրեք, որ նստեք դեռ առ դեմ և կատարեք հետևյալ վարժությունը:

1. Ձեզանից մեկը թող պատմի մյուսներին իր նվաճումներից մեկի մասին: Եղեք հակիրճ: Կարող եք ասել. «Աշխատավայրում ինձ շնորհեցին «լավագույն սպասարկում» պարգևը կամ «Ես միսիա եմ ծառայել» (կամ նշեք Եկեղեցու այլ կոչում), կամ «Ես մայր եմ»:
2. Այժմ հնարավորինս արագ մյուս երկուսն ասում են ձեզ, թե ինչ հմտություններ և ունակություններ են անհրաժեշտ այդ ձեռքբերումն ունենալու համար: Եթե ասեք. «Ես միսիա եմ ծառայել», մյուսները կարող են արագ ասել. «Ուրեմն դու քաջ ես, լավ ուսանող ես, աշխատասեր ես, ղեկավար, նպատակասլաց, մարդկանց հանդեպ բարյացակամ, ուսուցիչ, լավ պլանավորող և կարող ես դժվար առաջադրանքներ կատարել»:
3. Այդ վարժությունը կրկնեք ձեր խմբի բոլոր անդամների համար:

**Քննարկեք.** Ինչպե՞ս եք զգացել, երբ մյուսները խոսել են ձեր տաղանդների և հմտությունների մասին:

**Կարդացեք.** Այս վանդակում շրջանակի մեջ առեք ձեր ձեռքբերումները և գրեք ավելին: Ամաչկոտ մի եղեք: Այնուհետև շրջանակի մեջ առեք ձեր ունակությունները, հմտությունները, հատկանիշները և գրեք ավելին: Փորձեք ձեզ տեսնել, ինչպես Երկնային Հայրն է տեսնում ձեզ:

ՁԵՈՔԲԵՐՈՒՄՆԵՐ (Շրջանակի մեջ առեք և գրեք ավելին)		ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ (Շրջանակի մեջ առեք և գրեք ավելին)	
Եկեղեցու կոչում	_____	Ազնիվ	Աշխատասեր _____
Միսիա	_____	Վաճառքի հմտություններ	Լավ ունկնդիր _____
Ծնող	_____	Հուսալի	Բարի _____
Աշխատանքային պարգևատրումներ	_____	Մաքրելու հմտություններ	Մեխանիկ _____
Կրթություն	_____	Նպատակներ դնող	Ուսուցիչ _____
Ղեկավարություն	_____	Հաղորդակցում	Խելամիտ _____
Սպասարկման պարգևներ	_____	Լավ բնավորություն	Սպասարկում _____
Վարել եմ ժողովներ	_____	Շինարարություն	Համբերատար _____
Վաճառել եմ ինչ-որ բան	_____	Ստեղծարար	Խելացի _____
Պատրաստել եմ ինչ-որ բան	_____	Արագ սովորող	Թիմ կառուցող _____
Ելույթի խոսք եմ հղել	_____	Պլանավորող	Դրական _____

## ԻՆՉՊԵ՝Ս ՊԱՏՄԵՍ ՄՅՈՒՍՆԵՐԻՆ ԻՄ ՄԱՍԻՆ:

**Կարդացեք.** Այժմ դուք գիտեք, որ շատ բան ունեք առաջարկելու: Լավ աշխատանք գտնելու համար դուք պետք է ասեք մարդկանց, թե ինչպես կարող եք օգտագործելով ձեր հմտություններն օգնել նրանց, և դուք պետք է այդ ամենն ասեք արագ և տպավորիչ ձևով: Ամբողջ խմբով հերթով կարդացեք «Մոֆյայի բնութագիրը»:

### ՍՈՖՅԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ողջո՛ւյն: **1** Իմ անունը Սոֆյա Գոնգալես է, և **2** ես ցանկանում եմ ուսուցչի աշխատանք գտնել մասնավոր դպրոցում: **3** Ես ունեմ հիևգ տարվա ուսուցչի փորձ և վկայական կրթության ոլորտում: Իմ ուսանողները քննական բարձր թվանշաններ են ստանում: **4** Ես զվարճալի ուսուցիչ եմ, և իմ ուսանողները լավագույնս են դրսևորում իրենց:

**1** Անուն **2** Նպատակ **3** Մասնագիտական որակավորումներ **4** Բնավորության գծեր

**Կիրառեք.** Այժմ գրեք ձեր անձնական բնութագիրը այս չորս մասերով: Գրեք ստորև տրված տողերում: Վերցրեք 2-3 բուպե: Ընդգրկեք.

1. Ձեր անունը \_\_\_\_\_

2. Ինչ աշխատանք եք ցանկանում գտնել (նպատակը) \_\_\_\_\_

3. Դուք ինչու լավ կկատարեիք այդ աշխատանքը (մասնագիտական որակավորումներ) \_\_\_\_\_

4. Բնավորության գծեր կամ հմտություններ, որոնք կօգնեն ձեզ հաջողության հասնել տվյալ աշխատանքում \_\_\_\_\_

Այսպիսի բնութագիրը կոչվում է «Իմ մասին 30 վայրկյանում»: Մեկ առ մեկ կանգնեք և ներկայացեք 30 վայրկյանում: Մահմանափակվեք 30 վայրկյանով: Ծափահարենք և ոգևորենք միմյանց:

*«Իմ մասին 30 վայրկյանում» խորհուրդ. եղեք հակիրճ: Մարդիկ կլսեն միայն մի քանի վայրկյան:*

**Կարդացեք.** «Իմ մասին 30 վայրկյանում» բնութագիրը ձեզ ներկայացնելու հրաշալի եղանակ է, հատկապես, երբ դա յուրահատուկ է: Ավելի տպավորիչ է դառնում, երբ մենք վերջում հարց ենք ավելացնում, որը հատուկ է այն մարդուն, ում հետ խոսում ենք: Մոֆյան պարապեց, իր խոսքին ավելացնելով տարբեր հարցեր, կախված նրանից, թե ում էր նա հանդիպել: Ընկեր, ընտանիք. Ի՞նչ ուսուցիչների կամ դպրոցների տնօրենների եք դուք ճանաչում:

Քարտուղար. Կարո՞ղ եք ինձ ուղեկցել տնօրենի՝ տիկին Գոմեսի մոտ:

Գործատու. Ինչպե՞ս կօգնի ձեզ իմ փորձառությունը:

Մենք պետք է ներկայացնենք մեզ՝ որքան հնարավոր է շատ մարդկանց, տեղյակ պահելով նրանց, որ մենք աշխատանք ենք փնտրում:

**Կիրառեք.** Մի քանի բույս տրամադրեք «Իմ մասին 30 վայրկյանում» ձեր բնութագիրը կրկին գրելու համար: Բարելավեք այն: Ավելացրեք հատուկ որակավորումներ և բնավորության գծեր: Ավելացրեք հարց, որ կարող եք օգտագործել գործատուի հետ խոսելիս:

---

---

---

---

Հարց. \_\_\_\_\_

**Կիրառեք.** Խմբով կատարեք հետևյալ վարժությունը: Այն չպիտի տևի 5-6 րոպեից ավել:

1. Յուրաքանչյուրը թող կանգնի և շարժվի դեպի բաց տարածք: Բոլորը պիտի կանգնեն միմյանց դեմ առ դեմ:
2. Ձեր ընկերոջը ներկայացեք 30 վայրկյանում:
3. Այնուհետև թող մյուս անձը ձեզ ներկայանա 30 վայրկյանում:
4. Միմյանց համար արագ ամփոփեք.
  - Արդյո՞ք նշվում էին բոլոր չորս մասերը: (անուն, նպատակ, մասնագիտական որակավորումներ, հատկանիշներ)
  - Ավարտվե՞ց հարցով:
  - Վստահորեն և անկե՞ղծ էր ասված: Արդյո՞ք վստահություն էր ներշնչում:
  - Արդյո՞ք այդ մարդը ժպտում էր:
  - Դուք ցանկություն կունենայի՞ք միջնորդ լինել այդ անձնավորության համար կամ աշխատանք առաջարկել նրան:
5. Այնուհետև փոխեք ընկերներին և կատարեք նորից: Եվ նորից:
6. Կատարեք որքան հնարավոր է արագ, մինչև ամեն ոք փորձել է կատարել հինգ անգամ:

**Կարդացեք.** Այսուհետ մենք անհարմար չենք զգա ասելու մարդկանց, որ աշխատանք ենք փնտրում: Մենք կարող ենք բացել մեր բերանը և ասել *բոլորին*, որ մենք աշխատանք ենք փնտրում և որքան որակավորված ենք մենք:

Պատրաստ ենք արդյոք գնալ և մեզ ներկայացնել 30 վայրկյանում բոլոր նրանց, ում մենք կտեսնենք մինչև մեր հաջորդ ժողովը: Կանե՞նք:

**ՈՉ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԱԳԱՑՎԱԾ ՈՐՈՆՈՒՄ**

**(ԴԱ ԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆԱԿ ՄԻ ԱՐԵՔ:)**

Մեր հինգերորդ ժողովին մենք կսովորենք՝ ինչպես արագացնել մեր աշխատանքի որոնումը: Ինչևէ, **եթե ցանկանում եք այժմ ավելի արագ աշխատանք փնտրել**, դուք կարող եք մինչ այդ այս լրացուցիչ վարժությունը կատարել: Դուք կարող եք դա անել ինքնուրույն կամ մյուսների հետ:

Անգամ ավելի արագ հաջողության հասնելու համար դուք կարող եք ուսումնասիրել «Աշխատանքի արագացված որոնում», Ռեսուրսներ բաժնում, էջ 15-20: Քննարկեք և սովորեք ձեր ընտանիքի, խմբի անդամի կամ մեկ այլ ընկերոջ հետ: Անցեք գործի՝ գտեք ռեսուրսներ, ստեղծեք կապեր և հանդիպումներ ունեցեք՝ որքան հնարավոր է շատ մարդկանց հետ: Ամենայն հավանականությամբ սա ձեզանից կպահանջի 2-4 ժամ:

Աշխատանք որոնելն ինքնին *աշխատանք* է: Բայց երբ մարդիկ հետևում են այս ամենին, նրանք շատ ավելի արագ են աշխատանք գտնում:

Եթե դուք ընտրում եք կատարել սա՝ վերադարձեք և զեկուցեք խմբին: Ձեր փորձը կօգնի խմբի մյուս անդամներին:

## ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ԽԵԼԱՄԻՏ ԶԵՎՈՎ ՏՆՕՐԻՆԵԼ ԻՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԸ:

- Կարդացեք.** Ինքնապահով լինելն իր մեջ ներառում է մեր վաստակածից քիչ ծախսելը և գումար խնայելը: Խնայողությունների շնորհիվ կարող ենք հոգալ չկանխատեսված ծախսերը կամ ապահովել մեզ և մեր ընտանիքը, երբ մեր եկամուտը սպասվածից ավելի քիչ է: Որպես այս խմբի մաս, մենք պարտավորվում ենք ամեն շաբաթ խնայել, թեկուզ փոքրիկ գումար:
- Քննարկեք.** Որոշ տարածքներում լավ գաղափար է՝ գումարը կուտակել բանկում: Որոշ տարածքներում էլ դա այդքան էլ լավ գաղափար չէ, մասնավորապես, երբ երկրում բարձր սղաճ է կամ բանկերն անկայուն են: Ձեր տարածաշրջանում արդյո՞ք պայմանները բավարար են բանկում գումարը խնայելու համար: Ո՞ր բանկերն են բարձր տոկոսադրույք առաջարկում խնայողությունների համար:
- Կարդացեք.** Ինքնապահով լինելու համար կարևոր է անձնական պարտք չունենալը: Անձնական վարկերն օգտագործվում են մեր ունեցածից ավելի շատ գումար ծախսելու համար: Մարգարենները խորհուրդ են տվել մեզ խուսափել անձնական պարտքերից, և ավելի ինքնապահով դառնալու հետ մեկտեղ մենք կկրճատենք անձնական պարտքերը և կազատվենք դրանցից (թեպետ որոշ դեպքերում բիզնես պարտքը կարող է իմաստալից լինել):
- Բժշկական առումով արտակարգ իրավիճակները հաճախ մեծ ֆինանսական բեռի պատճառ են դառնում: Ապահովագրությունը և պետական բուժապահովագրական ծրագրերը հաճախ կարող են օգնել պաշտպանված լինել նման բեռից: Մեր ինքնապահովման ուղու կարևոր մասը կարող է լինել ապահովագրություն ձեռք բերելը կամ պետական բժշկական ծրագրին միանալը:
- Քննարկեք.** Ապահովագրության որոշ տեսակներ (ինչպես օրինակ առողջապահական ապահովագրությունը կամ կյանքի ապահովագրությունը) առավել մատչելի են և օգտակար, քան մյուս տեսակի ապահովագրությունները: Որոշ ապահովագրություն տրամադրողներն ազնիվ են, իսկ ոմանք էլ՝ խարդախ: Որո՞նք են ձեր տարածքի լավագույն ապահովագրության տարբերակները:

## ԻՆՉՈ՞Ւ Է ՏԵՐԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ, ՈՐ ԵՍ ԻՆՔՆԱՊԱՀՈՎ ԼԻՆԵՄ:

- Քննարկեք.** Ինչո՞ւ է Տերը ցանկանում, որ ես ինքնապահով լինեմ:
- Կարդացեք.** Կարդացեք աջ կողմում տրված մեջբերումը:
- Քննարկեք.** Ինչպե՞ս կարող եմ աշխատանք գտնելու մեր ջանքերը ծառայել «սուրբ նպատակի համար», ինչպես Երեց Քրիստոֆերսոնն է ասել:
- Կարդացեք.** Տերն ի գորու է օգնել մեզ ինքնապահով դառնալ: Նա ասել է. «Ահա ես եմ Աստված. և ես հրաշքների Աստված եմ» (2 Նեփի 27.23): Երբ մենք նվիրաբերենք կամ սրբագործենք աշխատանքում հաջողության հասնելու մեր ջանքերը ինքնապահով դառնալու սուրբ նպատակով, Տերը կառաջնորդի մեզ ոգեշնչում պարգևելով: Երբ մենք ցույց տանք մեր հավատքը՝ լսելով և հնազանդվելով Նրա հուշումներին, Տերը հրաշքներ կգործի և մեր ջանքերի արդյունքը կլինի առավել, քան եթե մենք ինքներս անեինք:

*«Նվիրաբերել նշանակում է ինչ-որ բան, որպես սուրբ, ի սպաս դնել կամ նվիրագործել՝ նվիրել սուրբ նպատակի համար»:*

**Դ. ԹՈՂ ԶՐԻՍՏՈՏԵՐՍՈՆ,**  
**«Մտորումներ**  
**նվիրաբերված կյանքի**  
**մասին», Ensign կամ**  
**Հիստորիա, նոյ. 2010, 16**



# ԽՈՐՀԵԼ

## Ի՞նչ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆԵԼ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՇԱՄԱՐ:

**Ժամանակ.** 10 րոպե ժամանակ պահեք Խորհել բաժնի համար:

**Կիրառեք.** Կարդացեք աջ կողմում տրված սուրբ գրության հատվածը կամ մեկ այլ սուրբ գրության հատված: Հանգիստ խորհեք ձեր սովորածի շուրջ: Գրեք ձեր տպավորությունները ներքևում:

---

---

---

---

---

**Ձևարկեք.** Ինչ-որ մեկը ցանկանո՞ւմ է կիսվել իր մտքերով:

*«Կանչեք առ [Աստված] ձեր դաշտերի բերքի համար, որպեսզի դուք կարողանաք բարգավաճել դրանով: Կանչեք ձեր դաշտերի հոտերի համար, որպեսզի դրանք կարողանան ավելանալ»:*

**ԱԼՄԱ 34.24-25**



# ՊԱՐՏԱՎՈՐՎԵԼ

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՕՐ-ՕՐԻ ԱՌԱՋԱԴԻՄԵԼ:

- Ժամանակ.** 10 րոպե ժամանակ պահեք Պարտավորվել բաժնի համար:
- Կարդացեք.** Յուրաքանչյուր շաբաթ մենք ընտրում ենք «վարժության ընկեր»: Դա խմբի անդամ է, որ կօգնի մեզ պահել մեր պարտավորությունները: Վարժության ընկերները շաբաթվա ընթացքում պիտի կապ պահեն միմյանց հետ և միմյանց զեկուցեն իրենց առաջընթացի մասին: Հիմնականում, վարժության ընկերները նույն սեռի են լինում և ոչ ընտանիքի անդամներ:
- Կիրառեք.** Ընտրեք ձեր վարժության ընկերոջը: Որոշեք երբ և ինչպես դուք կապ կպահեք միմյանց հետ:

Վարժության ընկերոջ անունը

Կոնտակտային տվյալներ

**Բարձրաձայն կարդացեք յուրաքանչյուր պարտավորությունը ձեր վարժության ընկերոջը: Խոստացեք պահել ձեր պարտավորությունները: Ստորագրեք ներքևում:**

### ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Ես կներկայանամ առնվազն 20 հոգու «իմ մասին 30 վայրկյանում» բնութագրով:**

Շրջանակի մեջ առեք ձեր նպատակը.                      20                      30                      40

Ես կպարապեմ *Իմ հիմքը* գրքուկի այսօրվա սկզբունքը և կուսուցանեմ իմ ընտանիքին:

Ես կավելացնեմ իմ խնայողություններին՝ թեկուզ փոքրիկ գումար:

Ես կզեկուցեմ իմ վարժության ընկերոջը:

Իմ ստորագրությունը

Վարժության ընկերոջ ստորագրությունը



## ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ԶԵԿՈՒՑԵԼ ԻՄ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ:

- Դիտեք.** «Վարժություն և պարտավորություն» (Չկա՞ տեսանյութ, կարդացեք էջ 14:)
- Կարդացեք.** Երբ մենք զեկուցում ենք մեր պարտավորությունների մասին, ամենայն հավանականությամբ պահում ենք դրանք: Կարդացեք աջ կողմում տրված մեջբերումը:
- Կիրառեք.** Նախքան հաջորդ ժողովը, օգտագործեք այս պարտավորության դիագրամը ձեր առաջընթացը գրանցելու համար: Մտորև տրված վանդակներում գրեք «Այո», «Ոչ» կամ քանի անգամ եք պարտավորություն ստանձնել:

«Իմ մասին 30 վայրկյանում» բնութագրող ներկայացրել եմ առավագու 20 մարդու (Գրել #)	Պարապել եմ Իմ հիմքը սկզբունքը և ուսուցանել իմ ընտանիքին (Այո/Ոչ)	Ավելացվել է խնայողություններին (Այո/Ոչ)	Զեկուցել եմ վարժության ընկերոջը (Այո/Ոչ)

**Կարդացեք.** Նաև, հիշեք նշել ձեր անձնական ծախսերը ձեր Իմ ուղին դեպի ինքնապահովում գրքույկի վերջին էջում:

Մեր խմբի հաջորդ ժողովին վարողը գրատախտակին կգծի պարտավորության աղյուսակը (ինչպես վերևում է տրված): Մենք կգանք ժողովը սկսելուց 10 րոպե առաջ և կգրենք մեր առաջընթացը աղյուսակի մեջ:

Ընտրեք որևէ մեկին, որ հաջորդ ժողովին վարի *Իմ հիմքը* թեման: Խնդրեք նրան կարդալ այս աշխատանքային տետրի շապիկի ներսի էջը, որպեսզի տեղեկանա, թե ինչ են անում վարողները: Նա պետք է վարի այնպես, ինչպես դա կատարվում էր այսօր.

- Հրավիրեք Հոգին, խնդրեք խմբի անդամներին փնտրել Հոգին:
- Վստահեք նյութերին, մի ավելացրեք, կատարեք այն, ինչ այնտեղ ասվում է:
- Տնօրինեք ժամանակը:
- Եռանդ ավելացրեք, զվարճացեք:

Խնդրեք որևէ մեկին ասել փակման աղոթքը:



«Երբ արդյունավետությունը չափվում է, այն բարելավվում է: Երբ արդյունավետությունը չափվում և զեկուցվում է, բարելավման ընթացքն արագանում է»:

**THOMAS S. MONSON,**  
in Conference Report,  
Oct. 1970, 107

### Դիտողությունները խրախուսվում են

Խնդրում ենք ուղարկել ձեր մտքերը, դիտողությունները, առաջարկները և փորձառությունները [srsfeedback@ldschurch.org](mailto:srsfeedback@ldschurch.org):

### Ծանոթագրություն վարողի համար.

Հիշեք գրանցել խմբի բոլոր անդամներին [srs.lds.org/report](http://srs.lds.org/report) կայքում:

Նաև հիշեք հաջորդ ժողովի համար պատրաստել խմբի կոնտակտային տվյալների օրինակները:

# ՌԵՏՈՒՐՍՆԵՐ

## ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ընտրեք դերերը և դերերով ներկայացրեք հետևյալը:

**ԽՍՔԻ ԱՆՊԱՏ 1.** Մենք հավատում ենք պարտավորություններ ստանձնելուն և պահելուն: Մեր ինքնապահովման խաբեքում ամեն ինչ պետք է անենք, որպեսզի պարտավորություններ ստանձնենք և զեկուցենք:

**ԽՍՔԻ ԱՆՊԱՏ 2.** Խնքի ժողովի վերջում մենք վերանայում ենք մեր վարժությունները շաբաթվա համար և մեր ստորագրությունն ենք դնում մեր պարտավորությունը ցույց տալու համար: Մենք նաև ընտրում ենք «վարժության ընկեր»: Վարժության ընկերը ստորագրում է մեր աշխատանքային տեսլակը որպես աջակցության երաշխիք: Եվ ժողովների միջև ամեն օր մենք կապ ենք հաստատում մեր վարժության ընկերոջ հետ, որպեսզի զեկուցենք մեր վարժությունների վերաբերյալ և անհրաժեշտության դեպքում օգնություն ստանանք:

**ԽՍՔԻ ԱՆՊԱՏ 3.** Ժողովների միջև մենք նշում ենք մեր առաջընթացն աշխատանքային տեսլակում և օգտագործում տրանսպարանտ գործիքները, օրինակ՝ աշխատաքային թերթիկներ կամ այլ ձևեր: Եվ եթե մենք լրացուցիչ օգնության կարիք ունենք, կարող ենք զանգահարել մեր ընտանիքին, ընկերներին կամ վարդերին:

**ԽՍՔԻ ԱՆՊԱՏ 4.** Մեր հաջող ժողովի սկզբին մենք վերադառնում և զեկուցում ենք մեր պարտավորությունների մասին: Դա պետք է հարմար , հզոր փորձատրություն

լինի յուրաքանչյուրի համար: Երբ խաբեք յուրաքանչյուր անդամ զեկուցում է, մտածեք, թե ինչ օգուտ է ստացել նա պարտավորություններ ստանձնելույ և առաջընթացի մասին զեկուցելույ:

**ԽՍՔԻ ԱՆՊԱՏ 1.** Առաջին անգամ իմ պարտավորությունների մասին զեկուցելիս ես մտածեցի. «Մա տարօրինակ է»: Ինչո՞ւ պետք է իմ խաբեք անդամներին հետաքրքրի, թե ինչ եմ արել ես: Բայց այդ ժամանակ ես պարզեցի, որ նրանց համար հետաքրքիր էր: Եվ դա օգնեց ինձ:

**ԽՍՔԻ ԱՆՊԱՏ 2.** Ես հասկացա, որ ուզում էի, որ իմ խաբեք սպասողներն արդարանային: Այնպես որ, ես իրոք տքնաջան աշխատեցի, որ պահեմ իմ պատվիրանները: Վստահ չէի, որ կարող էի կանոնավոր առաջատիմել որևէ այլ կերպ: Յուրաքանչյուր ժողովին զեկուցելն իրոք օգնում է ինձ իմ առաջնահերթությունների հարցում:

**ԽՍՔԻ ԱՆՊԱՏ 3.** Երբ ես մտածում էի դեպի ինքնապահովում տանող իմ ուղու մասին, վախենում էի, որովհետև դա այնպիսի մի մեծ բան էր: Բայց խաբեք ժողովներն օգնեցին ինձ բաժանել այն փոքր քայլերի: Եվ ես իմ խաբեքն զեկուցեցի յուրաքանչյուր քայլը: Այդ ժամանակ ես իրոք առաջատիմեցի: Կարծում եմ այս հաջողության գրավախանը նոր սովորություններ զարգացնելն էր:

**Վերադարձեք էջ 13-ին:**

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԱԳԱՑՎԱԾ ՈՐՈՆՈՒՄ (ՈՉ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ)

Ուսումնասիրեք և կիրառեք այդ նյութերը ձեր աշխատանքի որոնումն արագացնելու համար: Դուք կարող եք աշխատել այդ ուղղությամբ ձեր ընտանիքի, խմբի անդամի, մեկ այլ ընկերոջ կամ ուսուցչի հետ:

**Դիտեք.** «Ռաֆայել. աշխատանք 6 օրում»: (Տես տեսանյութ, այցելեք՝ [srs.lds.org](https://srs.lds.org)):

**Քննարկեք.** Ի՞նչն օգնեց Ռաֆայելին հաջողության հասնել իր աշխատանքի որոնման հարցում:

**Կարդացեք.** Աշխատանքի արագացված որոնումը աշխատանք փնտրելու ամենօրյա հզոր ռազմավարություն է: Որոշ տարածքներում այս մոտեցումը նվազեցրել է աշխատանք գտնելու ժամանակը 200-ից մինչև 20 օր: Դա պահանջում է անխոնջ ջանքեր: Դրա համար անհրաժեշտ է օրական երեք վարժություն կատարել.

- Գտեք 15 նոր ռեսուրսներ:
- Ստեղծեք 10 կապեր:
- Անցկացրեք 2 անհատական հանդիպումներ կամ հարցազրույցներ:

**Դիտեք.** «Աշխատանքի ամենօրյա որոնում. ռեսուրսներ» (Տեսանյութը դիտելու համար, այցելեք [srs.lds.org](https://srs.lds.org), կամ կարդացեք հետևյալը:)

*Մուրք գրությունների միջոցով մեզ ուսուցանել են, որ «մարդիկ պետք է ջերմեռանդ ներգրավված լինեն բարի գործերի մեջ և շատ բաներ անեն իրենց իսկ ազատ կամքով: . . Քանզի զոյություն կա նրանց մեջ, դրով նրանք գործակալն են իրենց կամքի»: Եվ այս պատվիրանը գալիս է խոստումով. «Որքան որ մարդիկ բարիք գործեն, նրանք ոչ մի դեպքում չեն կորցնի իրենց վարձքը» (Վևու 58:27–28):*

*Արդյունապետ աշխատանք փնտրողները հասկանում են, որ «զոյություն կա նրանց մեջ», և Մատիած կօզնի նրանց, երբ նրանք «ջերմեռանդ ներգրավված» լինեն: Հստակապես մենք կքննադրենք աշխատանք փնտրելու մեկ փորձված ռազմավարություն երեք մասով: Դա կոչվում է Աշխատանքի արագացված որոնում:*

*Առաջինը, հաջողակ աշխատանք փնտրողները սովորում են սա՛մն օր գտնել 15 նոր ռեսուրսներ: Երկրորդ, նրանք սա՛մն օր 10 կապեր են հաստատում: Եվ երրորդ, նրանք անցկացնում են առնվազն 2 անձնական հանդիպումներ կամ հարցազրույցներ:*

*Նախ, Աշխատանքի արագացված որոնման մոտեցումը կարող է ճնշող թվալ: Քննարկելով յուրաքանչյուր տարրը, դուք կտեսնեք, որ այն իրոք հնարավոր է և հաջողություն բերող:*

*Սկսենք ռեսուրսներից: Ի՞նչ է ռեսուրսը: Ռեսուրսը մարդն է, վայրը կամ նյութը, որն օգնում է աշխատանք փնտրողին գտնել ճիշտ հնարավորությունը:*

*Մարդիկ դրանք ընկերներն են և ընտանիքը, Եկեղեցու անդամները և դեկախարները, գործատուները կամ գործընկերները, դպրոցի ուսուցիչները և կարիերայի խորհրդատուները, մարդիկ խա՛ստում, գրեթե բոլորը, ովքեր կարող են ձեզ աշխատանքի վերաբերյալ օգտակար տեղեկատվություն և լրացուցիչ ռեսուրսներ տրասնադրել:*

### շարունակելի

**1. Ինչպե՞ս կարող եմ աշխատանքի լավ հնարավորություններ գտնել:**

*Վայրեր կայտղ են հանդիսանալ առևտրի պարտուները, զբաղվածության տեղական նախադրությունները և քաղաքացիական կամ մասնագիտական միավորումները: Մրանցից յուրաքանչյուրն օգտակար տեղեկություններ է տրամադրում:*

*Եվ ձեր որոնումը ընդլայնող միջոցներ են հանդիսանում գործարար և հեռախոսային տեղեկագրքերը, ընկերությունների վեբէջերը, համացանցը, առևտրային ամսագրերն ու լրագրերը, օրաթերթերը և այլ լրատվամիջոցները:*

*Կազմեք առնվազն ադրայիսի 15 ռեսուրսների ցանկ:*

**Կիրառեք.** Թուղթը բաժանեք երեք սյունակի: Սյունակների վերևում գրեք «Ռեսուրսներ», «Կապեր» և «Հանդիպումներ»: Մկսեք լրացնել թուղթը հենց հիմա՝ առաջին սյունակում թվարկելով որքան հնարավոր է շատ ռեսուրսներ: Դրանք մարդիկ, վայրեր և ձեզ համար օգտակար տեղեկություն տրամադրող աղբյուրներն են: Ահա որոշ օրինակներ: Դուք կլրացնեք մյուս սյունակներն ավելի ուշ:

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ (ցուցակ կազմեք)	ԿԱՊԵՐ (հեռախոս, Է-փոստ)	ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ (դեմառդեմ)
Համացանցի կայքեր	Քվորում կամ Սփոփող Միության անդամներ	Հավանական գործատուներ
Լրագրեր	Մարդիկ, որոնց հետ աշխատել եք	Տնային ուսուցիչներ
Աշխատանք	Ուսուցիչներ	Եկեղեցու անդամներ
Ինքնապահովման կենտրոն	Մարդիկ, ում դուք հանդիպում եք խանութում	

**շարունակելի**

**Դիտեք.** «Աշխատանքի ամենօրյա որոնում. Կապեր» (Տեսանյութը դիտելու համար այցելեք [srs.lds.org](http://srs.lds.org) կամ կարդացեք հետևյալը:)

*Այժմ եկեք գրուցենք կապերի մասին: Կասյը միայն ռեզյումե ուղարկելը կամ աշխատանքային դիմում-թերթիկ լրացնելը չէ: Բոլոր ռեսուրսներից, որոնք դուք բացահայտեցիք, սրբազան սխեմա է 10 աշխատանքային կապեր ստեղծեք:*

*Կասյերը աշխատանքի հետ կապված մարդկային փոխհարաբերություններն են. աշխատանքի հասար դիմելը, ռեզյումե կամ շնորհակալական գրություն ուղարկելը, ընկերներին, ընտանիքին և Եկեղեցու անդամներին տեղեկացնելը, որ աշխատանք եք փնտրում տեքստային հաղորդագրություններով կամ է-փոստով: Բոք նաև կարող եք գործակցել մյուս ծանոթների և, իհարկե հավանական գործատուների հետ: Տարբեր հնարավորություններ փնտրեք մարդկանց հետ շփվելու համար և նրանց տեղեկացնելու, որ դուք աշխատանք եք փնտրում: Հիմնականում մարդիկ ձեզ ոչնչությամբ կծանոթացնեն իրենց ծանոթների հետ: Այդ կապերը կհանգեցնեն հարցազրույցների, որի սրբանքում աշխատանք կգտնեք:*

**Կիրառեք.** Այժմ ձեր թղթի վրա գրեք որքան հնարավոր է շատ մարդկանց անուններ, ում հետ գուցե կապ կհաստատեք նախքան մեր հաջորդ ժողովը: Հիշեք, որ չպիտի շփոթվեք: Աշխատեք օրական գտնել 10 մարդ:

**Դիտեք.** «Աշխատանքի ամենօրյա որոնում. հանդիպումներ» (Տեսանյութը դիտելու համար, այցելեք [srs.lds.org](http://srs.lds.org), կամ կարդացեք հետևյալը:)

*Վերջապես արդյունավետ աշխատանք որոնողները սովորում են ստեղծել օր առնվազն երկու մարդու հետ անձնապես հանդիպելու կարևորությունը: Սա գուցե լինի ձեր ամենօրյա առավել արժեքավոր քայլը: Ինչո՞ւ: Անձնական հանդիպումների կամ հարցազրույցների արդյունքում այնքալ լավ հաղորդակցություն և հասկացողություն է ձեռք բերվում: Հաճախ մարդիկ հիմնականում «խտտում» են մարմնի լեզվով և դեմքի արտահայտություններով: Եվ այս ոչ բանավոր ուղերձները չեն փոխանցվում է-փոստով կամ հեռախոսով: Անձնապես մարդիկ կարող են տեսնել և զգալ, թե որքան լավն եք դուք:*

*Անձնական հանդիպումները հաճախ նաև թույլ են տալիս ձեզ տեսնել և զգալ միջավայրը, որտեղ դուք գուցե աշխատեք: Բոք կարող եք տեսնել, թե ինչպես են մարդիկ շփվում և որքան ընկերական կամ ոչնչությամբ են նրանք, տվյալ կազմակերպության հաջողությունը, ինչպիսի կարիքներ կամ հնարավորություններ կան, և դուք ինչպես կարող եք բավարարել այդ կարիքները: Ցանկացած տեսակի հարցազրույցներ մեծ հնարավորություններ են:*

**շարունակելի**

*Պարտադիր չէ, որ ամեն օր բոլոր անձնական հանդիպումները լինեն հավանական գործատուների հետ: Դուք կարող եք հանդիպել նաև մյուսների հետ, այդ թվում՝ ընկերների և ընտանիքի, ընկերների ընկերների, ինչպես նաև քարտուղարների, ուսուցիչների, խորհրդատուների կամ նրանց հետ, ովքեր կատարում են այնպիսի աշխատանք, որ դուք ցանկանում եք ձեռք բերել: Պարզապես հանդիպե՛ք մարդկանց հետ: Նրանց ներկայացե՛ք 30 վայրկյանում և օգտագործե՛ք վերջին հարցը՝ հանդիպում խնդրելով աշխատանքի դեկալարանների և այլ մարդկանց հետ: Շարունակե՛ք փորձել, ցույց տալ ձեր արժեքը, խնդրե՛ք, որ օգնեն և խորհուրդ տան: Հրաշալի բաներ տեղի կունենան:*

*Սա Աշխատանքի արագացված որոնումն է: Ամեն օր, եթե դուք գտնե՛ք 15 ռեսուրս և ստեղծե՛ք 10 կապ , հեշտուրթյանը 2 անձնական հանդիպում կունենաք: Դուք կզարմանաք, թե որքան է սա արագացնում աշխատանքի ձեր որոնումը: Կատարե՛ք դա մեծ հավատքով և դռները կբացվեն այնպես, որ երբեք չէ՛իք մտածի , որ հնարավոր կլինե՛ր:*

**Կիրառեք.** Այժմ ձեր թղթի վրա գրեք որքան հնարավոր է շատ մարդկանց անուններ, ում գուցե անձնապես հանդիպեք նախքան մեր հաջորդ ժողովը: Մտածեք, թե երբ և որտեղ կարող եք հանդիպել նրանց: Հիշեք, որ յուրաքանչյուր ժողովին 30 վայրկյանում ներկայացնեք ձեզ:

**Դիտեք.** «Աշխատանքի ամենօրյա որոնում. Ամեն ինչ միացնելով իրար» (Տեսանյութը դիտելու համար այցելեք [srs.lds.org](http://srs.lds.org), կամ կարդացեք հետևյալը:)

*Աշխատանքի արագացված որոնման երեք մասերն ստանձին քայլեր չեն: Երբ սկսե՛ք քայլեր կատարել, կոտանե՛ք, որ ռեսուրսներն ամենուր են: Ամեն օր սկսե՛ք՝ ռեսուրսներ այնպես գտնելով ձեր ցուցակին:*

*Այդ ընթացքում դուք կնստածե՛ք, ինչպես կապ հաստատել մարդկանց հետ, իսկ կապերը, բնականաբար, հանգեցնում են հանդիպումների:*

*Ձեր ինքնասպաստիման խումբը ռեսուրսների, կապերի և հանդիպումների մեծ աղբյուր է: Նման աղբյուր են հանդիսանում նաև Եկեղեցու անդամ ընկերները, հարևանները կամ գործընկերները: Կապեր հաստատելով՝ շարունակե՛ք այնպես ռեսուրսները: Անձնական հանդիպումների ժամանակ փորձե՛ք լրացուցիչ կապեր ձեռք բերել:*

*Լրացուցիչ հարցազրույցներ խնդրե՛ք նրանցից, ում հանդիպում եք:*

*Օգտագործե՛ք «Իմ մասին 30 վայրկյանում»-ը: Աշխատանքի արագացված որոնումը հնարավոր է և կարող է լինել հաճելի գործընթաց: Ուրեմն, մի սպասե՛ք: Խոսե՛ք բոլորի հետ: Միշտ փնտրե՛ք*

*Մուրբ Հոգու ստաջևորությունը և արժանի մնացե՛ք: Մանրակրկիտ գրառումներ կատարե՛ք և հետևե՛ք: Ընթացքում Տերը մշտապես ճանասպարհ ցույց կտա:*

**Կիրառեք.** Այժմ նայեք ձեր թղթին: Ի՞նչ պետք է անեք առաջինը: Ամեն օր ռեսուրսներ գտնելու, կապեր հաստատելու և անհատական հանդիպումներ ունենալու ծրագիր կազմեք: Որոշե՛ք, թե երբ կարող եք դա անել և խնդրեք ընտանիքին կամ վարժության ընկերոջն օգնել ձեզ:

Հետևե՛ք ձեր առաջընթացին՝ հաջորդ էջի աղյուսակն օգտագործելով: Հետամուտ եղե՛ք ձեր կապերին Կապերին հետևելու ձևաթղթի միջոցով, էջ 20: Շատ օրինակներ պատրաստե՛ք:



## ԿԱՊԵՐԻՆ ՀԵՏԵՎԵԼՈՒ ԶԵՎԱԹՈՒՂԹ

### ԿԱՊ

Անձնավորություն կամ կազմակերպություն. \_\_\_\_\_

Հեռախոս. \_\_\_\_\_ Հասցե. \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Ինձ երաշխավորել է. \_\_\_\_\_

**Ես կապ հաստատեցի այս անձնավորության հետ**  Այո  Ոչ

Ամսաթիվ. \_\_\_\_\_

ԹՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ.

1. \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_

3. \_\_\_\_\_

ՀԵՏԵՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. \_\_\_\_\_ Լրացրեք մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_ Լրացրեք մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

3. \_\_\_\_\_ Լրացրեք մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

ՆՈՐ ՄԻՋՆՈՐԴՆԵՐ.

1. Անուն. \_\_\_\_\_ Հեռախոս. \_\_\_\_\_ Ֆաքս. \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Հասցե. \_\_\_\_\_

2. Անուն. \_\_\_\_\_ Հեռախոս. \_\_\_\_\_ Ֆաքս. \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Հասցե. \_\_\_\_\_

### ԿԱՊ

Անձնավորություն կամ կազմակերպություն. \_\_\_\_\_

Հեռախոս. \_\_\_\_\_ Հասցե. \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Ինձ երաշխավորել է. \_\_\_\_\_

**Ես կապ հաստատեցի այս անձնավորության հետ**  Այո  Ոչ

Ամսաթիվ. \_\_\_\_\_

ԹՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ.

1. \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_

3. \_\_\_\_\_

ՀԵՏԵՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. \_\_\_\_\_ Լրացրեք մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_ Լրացրեք մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

3. \_\_\_\_\_ Լրացրեք մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

ՆՈՐ ՄԻՋՆՈՐԴՆԵՐ.

1. Անուն. \_\_\_\_\_ Հեռախոս. \_\_\_\_\_ Ֆաքս. \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Հասցե. \_\_\_\_\_

2. Անուն. \_\_\_\_\_ Հեռախոս. \_\_\_\_\_ Ֆաքս. \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Հասցե. \_\_\_\_\_





## 2

*Ինչպե՞ս կարող եմ  
ինձ համոզիչ կերպով  
ներկայացնել:*

---

**Աշխատանքի իմ որոնումը**

# ՎԱՐՈՂՆԵՐԻ ՇԱՄԱՐ

## Ժողովի օրը.

- Ջանգահարեք կամ հաղորդագրություն ուղարկեք խմբի բոլոր անդամներին: Խնդրեք նրանց 10 րոպե շուտ գալ՝ իրենց պարտավորությունների մասին զեկուցելու համար:
- Պատրաստեք ժողովի նյութերը: Գրքեր կամ տեսանյութեր չունե՞ք: Կարող եք դրանք ձեռք բերել առցանց՝ [srs.lds.org](http://srs.lds.org) կայքից:

## Ժողովից 30 րոպե առաջ.

- Աթոռները դասավորեք սեղանի շուրջն այնպես, որ բոլորը մոտ լինեն:
- Գծեք պարտավորության այս աղյուսակը գրատախտակին և գրեք ձեր խմբի անդամների անունները (տես ստորև տրված օրինակը):

ՆՈՐ

Խմբի անդամի անունը	«Իմ մասին 30 վայրկյանում» բնութագիրը ներկայացրել ենք անվազն 20 մարդու (Գրել #)	Պարապել ենք Հիմքի սկզբունքը և ուսուցանել իմ ընտանիքին (Այո/Ոչ)	Ավելացրել ենք խնայողություններին (Այո/Ոչ)	Ջնկուցել ենք վարժության ընկերոջը (Այո/Ոչ)
Գլորիա	28	Կ	Կ	Կ

## Ժողովից 10 րոպե առաջ.

- Ջերմորեն ողջունեք մարդկանց, երբ նրանք ներս են մտնում:
- Երբ խմբի անդամները ներս մտնեն, խնդրեք նրանց լրացնել գրատախտակի պարտավորության աղյուսակը:
- Ժամապահ նշանակեք:

ՆՈՐ

## Երբ սկսում եք՝

ՆՈՐ

- Կիսվեք խմբի անդամի կոնտակտային տվյալների պատճեններով (անցյալ ժողովից):
- Խնդրեք բոլորին անջատել հեռախոսները և այլ սարքերը:
- Բացման աղոթք ասել (և ցանկության դեպքում՝ օրհներգ կատարել):
- Ուշացողներին ցածր ձայնով խնդրեք անջատել իրենց հեռախոսները և լրացնել պարտավորության աղյուսակը՝ մինչ խումբը շարունակում է քննարկումը:
- 20 րոպե ժամանակ պահեք *Իմ կիսքը* գրքուկի համար:
- Լրացրեք սկզբունք 2-ը՝ *Իմ Հիմքում*: Այնուհետև վերադարձեք այս աշխատանքային տետրին և շարունակեք կարդալ հաջորդ էջը:



# ԶԵԿՈՒՑԵԼ


## ՊԱՇԵ՛Լ ԵՄ ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

- Ժամանակ.** 20 րոպե ժամանակ պահեք Ձեկուցել բաժնի համար:
- Քննարկեք.** Կարդացեք աջ կողմում տրված մեջբերումը: Ինչպե՞ս է սա առնչվում մեր խմբին:
- Կիրառեք.** Եկեք զեկուցենք մեր պարտավորությունների մասին: Խնդրում եմ կանգնեն նրանք, ովքեր պահել են իրենց բոլոր պարտավորությունները: (Օափահարեք նրանց, ովքեր պահել են իրենց բոլոր պարտավորությունները:)
- Կարդացեք.** Այժմ բոլորդ կանգնեք: Մենք պետք է փորձենք պահել մեր բոլոր պարտավորությունները: Դա է ինքնապահով մարդկանց հիմնական սովորություններից մեկը:  
Քանի դեռ կանգնած եմք, եկեք միասին ասենք մեր թեմայի խոսքերը: Այդ խոսքերը մեզ հիշեցնում են մեր խմբի նպատակը.

**«Եվ իմ նպատակն է՝ ապահովել իմ սրբերին. քանզի բոլոր բաներն իմն են»:**  
*Վարդապետություն և Ուխտեր 104.15*

**Առ Տերը հավատքով մենք միասին աշխատում ենք դառնալ ինքնապահով:**

- Կարդացեք.** Եկեք նստենք:
- Քննարկեք.** Ի՞նչ սովորեցիք ձեր պարտավորությունները պահելու արդյունքում: Ինչպե՞ս կարող եմք մենք օգնել: Եկեք միասին խորհրդակցենք և միմյանց օգնենք մեր աշխատանքի որոնման հարցում: Մա այս ժողովի ամենակարևոր քննարկումն է:  
Ի՞նչ սովորեցիք ձեզ 30 վայրկյանում մարդկանց ներկայացնելու արդյունքում: Արդյո՞ք բարելավեցիք դա: Գրի՞ եք առել ձեր կապերը և հետևել կատարմանը:  
Արդյո՞ք որևէ մեկը փորձել է Աշխատանքի արագացված որոնումը: Ի՞նչ արդյունքներ կան:



*«Երբ արդյունավետությունը չափվում է, այն բարելավվում է: Երբ արդյունավետությունը չափվում և զեկուցվում է, բարելավման ընթացքն արագանում է»:*

**THOMAS S. MONSON, in Conference Report, Oct. 1970, 107**



# ՍՈՎՈՐԵԼ

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ԻՆՉ ՀԱՍՈՋԻՉ ԿԵՐՊՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼ:

**Ժամանակ.** 60 րոպե ժամանակ պահեք Սովորել բաժնի համար:

**Դիտեք.** «Հարցազրույց» (Չկա՞ տեսանյութ, կարդացե՛ք էջ 32:)

**Քննարկեք.** Ձեր կարծիքով, այս մարդկանց ընդունեցի՞ն աշխատանքի:

Դուք գիտեք, թե որոնք են հարցազրույցի հարցերին տրված վատ պատասխանները, երբ դուք տեսնում եք դրանք: Իսկ դուք երբեմն լարվո՞ւմ եք հարցազրույցի ժամանակ լավ պատասխաններ տալու համար:

**Կարդացեք.** **ՇԱՐՔԱԹՎԱ ՀԱՐՑ—Ինչպե՞ս եմ ինձ համոզիչ կերպով ներկայացնում:**  
**ՇԱՐՔԱԹՎԱ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ—Կազմեք և օգտագործեք տպավորիչ արտահայտություններ ծանոթների շրջանում:**

**Կարդացեք.** Մեր վերջին ժողովի ժամանակ քննարկեցինք, թե ինչպես կարող է 30 վայրկյանում մեզ ներկայացնելն ի սկզբանե հետաքրքրություն առաջացնել: Մեր հաջորդ քայլը կլինի «տպավորիչ արտահայտություններ» ավելացնելը, որոնք կարող են մեր արժեքը ներկայացնել գործատուների և ուրիշների մոտ:

Տպավորիչ արտահայտությունները նպաստում են ռեզյումեի և հարցազրույցի ամրապնդմանը: Դրանք օգնում են մեզ խոսել մեր ծանոթների հետ: Դրանք անգամ կարող են օգնել մեզ պահել աշխատանքը և հաջողության հասնել:

Եկեք կարդանք տպավորիչ արտահայտություն կազմելու չորս հիմնական մասերը:

### ՏՊԱՎՈՐԻՉ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՉՈՐՍ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԵՐԸ

Բացահայտել արժեք, հմտություն կամ ուժեղ կողմ:

Բերել հատուկ օրինակ կամ ձեռքբերում:

Ցույց տալ արդյունքները:

Համապատասխանեցնել մեր արժեքը գործատուի պահանջներին:

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՏՊԱՎՈՐԻՉ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ ԿԱԶՄՈՒՄ:

**Կարդացեք.** Վիկտորիան հավանական գործատուի հետ հինգ ռուպեանոց քննարկում անցկացնելու պայմանավորվածություն է ձեռք բերել: Երբ գործատուն հարցնում է շուկայական ոլորտում նրա փորձի մասին, նա օգտագործում է իր տպավորիչ արտահայտությունները:

### ՎԻԿՏՈՐԻԱՅԻ ՏՊԱՎՈՐԻՉ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 1 Ես ստեղծագործ և արդյունքի վրա կենտրոնացած եմ: Օրինակ, 2 ABC Power Company-ում ես ստեղծեցի նոր շուկայական ծրագիր և բրոշյուր, որն
- 3 անմիջապես բարձրացրեց ամսական վաճառքը 5%-ով: Վստահ եմ, որ կարող եմ
- 4 օգնել նույն կերպ ավելացնել ձեր ընկերության վաճառքի քանակը:
- 1 Բացահայտել հմտություն կամ ուժեղ կողմ 2 Հատուկ օրինակ 3 Արդյունք
- 4 Համապատասխանեցնել կարիքները

**Քննարկեք.** Ինչպե՞ս կարող էին այդ խոսքերն օգնել Վիկտորիային իր աշխատանքի որոնման հարցում:

**Կարդացեք.** Ահա մի քանի տպավորիչ արտահայտություններ և աշխատանք փնտրող վերադարձած միսիոների, փոքր բիզնես ունեցող գործարարի և մոր համար: Կարդացեք դրանք: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես են այդ չորս մասերը միասին աշխատում:

1. ՀԱՏՈՒԹՅՈՒՆ	2. ՕՐԻՆԱԿ (Եղեք կոնկրետ)	3. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (Եղեք կոնկրետ)	4. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ
Ես կարող եմ ստեղծել և ուղղորդել թիմեր:	Օրինակ՝ <b>որպես եկեղեցու լիաժամկետ կամավոր</b> , ինձ խնդրեցին ղեկավարել ութ կամավորներից կազմված թիմը, որը միասնական չէր և նրանք հետամուտ չէին լինում դրված նպատակներին:	Այնպես որ ես ուսուցողական ժողովներ անցկացրի և օգնեցի նրանց գնահատել միմյանց, նպատակներ դնել և հասնել այդ նպատակներին:	Կարող եմ օգնել ձեր թիմերին միասնական ջանքերով հասնել ձեր նպատակներին և անել ավելին:
Ես խնդիրներ լուծելու փորձ ունեմ:	Օրինակ <b>մեր ընտանեկան բիզնեսում</b> , մենք քաջատեղյակ չէինք մեր ծախսերից: Ես որոշեցի ավելի լավ գրանցել և հետևել ամենօրյա ծախսերին:	Դիտելով իմ գրանցումները և հետևելով միտումներին, մենք պարզեցինք, որ առանց մեզ տեղյակ պահելու՝ մատակարարը մի փոքր ավելի էր գանձում հաշիվապարանքագրի դիմաց:	Այդ խնդիրները լուծելու հմտությունները ես կկիրառեմ ձեր առաջ ծառայած բոլոր խնդիրների լուծման համար և վստահ եմ, որ կարող եմ լավ լուծում գտնել:
Ես կազմակերպչական ձիրք ունեմ:	Օրինակ՝ <b>որպես մայր</b> , ես տանը հետևում եմ իմ երեք երեխաների տնային աշխատանքների և աշխատանքային հանձնարարությունների կատարմանը:	Վերահսկելով այդ աշխատանքային գրաֆիկները՝ ես կատարել եմ հնարավորինը, որ յուրաքանչյուր երեխան ավարտի դպրոցը և գիտենա, ինչպես աշխատել:	Կարող եմ այդ ղեկավարման հմտությունները կիրառելով, պահել ձեր ընկերության ժամանակացույցը, որպեսզի ձեր բոլոր պայմանավորվածությունները չխախտվեն:

**2. Ինչպե՞ս կարող եմ ինձ համոզիչ կերպով ներկայացնել:**

**Կիրառեք.** Օգտագործեք այս էջը անձնական տպավորիչ արտահայտություններ կազմելու համար: Այժմ սկսեք գրել դրանք ազատ տեղերում: Դուք կարող եք աշխատել խմբի մեկ այլ անդամի հետ:

1. ՀՄՏՈՒԹՅՈՒՆ	2. ՕՐԻՆԱԿ (Եղեք կոնկրետ)	3. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (Եղեք կոնկրետ)	4. ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆԵՑՆԵԼ ԿԱՐԻՔՆԵՐԻՆ

**Կիրառեք.** Ունենալով առնվազն երկու տպավորիչ արտահայտություն, հերթով օգտագործեք դրանք խմբի մյուս անդամի հետ: Սսեք դրանք բարձրաձայն մինչև վստահ կզգաք: Նախքան մեր հաջորդ ժողովը, լրացրեք առնվազն հինգ տպավորիչ արտահայտություններ:

**Կարդացեք.** Երբ ինչ-որ մեկի մասին խոսում եք աշխատանքի համար, կարող եք նախ 30 վայրկյանում ներկայացնել ձեզ: Դա կարող է լինել գործատու կամ ինչ-որ մեկը, ում կյանդրեք օգնել ձեզ: Այնուհետև տվյալ անձնավորությունը հավանաբար կտա ձեզ որոշ ընդհանուր հարցեր: Այդ հարցերին պատասխանելու համար դուք տպավորիչ արտահայտությունների կարիք ունեք: Մինչև մեր հաջորդ ժողովը, կիսվեք ձեր տպավորիչ արտահայտություններով շատ մարդկանց հետ:

**Կիրառեք.** Խմբով կարդացեք այս հրահանգները: Հրահանգները կարդալուց հետո սկսեք վարժությունը: 10 րոպեից ավել չհատկացնել:

1. Բոլորը թող կանգնեն և շարժվեն դեպի բաց տարածք՝ արագ վարժության համար: Բոլորը պիտի կանգնեն միմյանց դեմ առ դեմ:
2. Առաջին անձնավորությունը պետք է ընդհանուր հարց տա, ինչպես օրինակ.
  - Ի՞նչ կարող եք ինձ պատմել ձեր մասին:
  - Մենք ինչո՞ւ պիտի ձեզ աշխատանքի ընդունենք:
  - Ո՞րն է ձեր ամենաուժեղ կողմը:
  - Ի՞նչ պետք է ասեմ ձեր մասին իմ ծանոթներին:
3. Երկրորդ անձնավորությունը՝ ի պատասխան տպավորիչ արտահայտություն է ասում:
4. Այնուհետև դուք փոխվում եք: Երկրորդ անձնավորությունը մեկ այլ ընդհանուր հարց է տալիս, իսկ առաջին անձնավորությունը պատասխանում է տպավորիչ արտահայտությամբ:
5. Միմյանց համար արագ ամփոփեք. Բաղկացա՞՞՞՞՞՞՞՞ էր դա չորս մասից: Վստահորեն և անկե՞ղծ էր ասված:
6. Այնուհետև փոխեք ընկերներին և կատարեք նորից: Եվ նորից:
7. Կատարեք որքան հնարավոր է արագ, մինչև ամեն ոք դա կփորձի չորս անգամ:

**Քննարկեք.** Այդ հարցերին պատասխանելու համար դուք տպավորիչ արտահայտություններ օգտագործեցի՞ք: Որո՞նք են այդ հարցերի մոտ տարբերակները: Ուրիշ ի՞նչ հարցեր կարող են տալ հարցազրույց վարողները:

**ՈՉ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ԲԱՅԱՍԱԿԱՆԸ ԴՐԱԿԱՆԻ ՓՈԽՈՒՄ:**


**(ԴԱ ԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆԱԿ ՄԻ ԱՐԵՔ:)**

**Ցանկության դեպքում,** շաբաթվա ընթացքում դուք կարող եք կատարել այս վարժությունը:

Դուք կարող եք օգտագործել տպավորիչ արտահայտություններ՝ բացասական հարցերը և իրավիճակները դրական հնարավորությունների փոխելու համար: Ուսումնասիրեք Ռեսուրսներ, Էջ 33:

## ՈՐՏԵՂ ԵՄ ԵՍ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ՏՊԱՎՈՐԻՉ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

**Կարդացեք.** Մենք հզոր գործիքներ ունենք մեր նոր տպավորիչ արտահայտություններով և «Իմ մասին 30 վայրկյանում» բնութագրով: Բայց ինչպե՞ս գտնենք մարդկանց, ովքեր կլսեն: Կարևորն այն է, որ պետք է խոսել բոլորի հետ: Ապա խնդրեք նրանց խոսել *իրենց* ծանոթների հետ: Դա է «ծանոթ կապերը», և դա նման է սեփական վաճառքի թիմ ունենալուն:



**Կիրառեք.** Տեղափոխեք ձեր աթոռն այնպես, որ խոսեք ձեր կողքին նստած անձնավորության հետ:

1. Մինչև մեր հաջորդ ժողովը, խոսեք այն մարդկանց մասին, ում հետ կապնվելու եք՝ ներկայանալով 30 վայրկյանում և տպավորիչ արտահայտություններ ասելով: Թվարկեք որոշ անուններ այստեղ.

---

---

2. Խոսեք այն մասին, թե ինչպես եք դուք ընդլայնելու ձեր ծանոթների շրջանակը՝ ավելի շատ կապեր ստեղծելու համար: Գրեք ձեր մտքերն այստեղ.

---

---

**Կիրառեք.** Նախքան հաջորդ ժողովը, ասեք ձեր տպավորիչ արտահայտությունները ձեր ծանոթներին: Եվ խնդրեք ձեր ծանոթներին խոսել *իրենց* ծանոթների հետ: «Իմ մասին 30 վայրկյանում» և ձեր տպավորիչ արտահայտությունները երկու հզոր գործիքներն են ձեր ծանոթների շրջանակը ստեղծելու համար: Ձեր աշխատանքի որոնումը սկսվում է:

### ՈՉ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԱԳԱՑՎԱԾ ՈՐՈՆՈՒՄ

#### (ԴԱ ԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆԱԿ ՄԻ ԱՐԵՔ:)

**Ցանկության դեպքում** կարող եք այս վարժությունն անել մեր ժողովից հետո.

Ավելի արագ առաջ գնալու համար ուսումնասիրեք «Աշխատանքի արագացված որոնում», էջ 15: Փորձեք՝ ամեն օր 15 րոպեով, 10 կոնտակտ, 2 հանդիպում:





# ԽՈՐՀԵԼ

## Ի՞նչ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆԵԼ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

**Ժամանակ.** 10 րոպե ժամանակ պահեք Խորհել բաժնի համար:

**Կիրառեք.** Կարդացեք աջ կողմում տրված մեջբերումը կամ մեկ այլ սուրբ գրության հատված: Հանգիստ խորհեք ձեր սովորածի շուրջ: Գրեք ձեր տպավորությունները ներքևում:

---

---

---

---

---

**Ձևարկեք.** Ինչ-որ մեկը ցանկանո՞ւմ է կիսվել իր մտքերով:

*«Բայց Տերը գիտի բոլոր բաները՝ ի սկզբանե. ուստի, նա պատրաստում է ուղի՝ կատարելու իր բոլոր գործերը մարդկանց զավակների մեջ»:*

**1 ՆԵՓԻ 9.6**



# ՊԱՐՏԱՎՈՐՎԵԼ

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՕՐ-ՕՐԻ ԱՌԱՋԱԴԻՄԵԼ:

- Ժամանակ.** 10 րոպե ժամանակ պահեք Պարտավորվել բաժնի համար:
- Կիրառեք.** Ընտրեք ձեր վարժության ընկերոջը: Որոշեք երբ և ինչպես դուք կապ կպահեք միմյանց հետ:

*Վարժության ընկերոջ անունը*

*Կոնտակտային տվյալներ*

## Բարձրաձայն կարդացեք յուրաքանչյուր պարտավորությունը ձեր վարժության ընկերոջը: Խոստացեք պահել ձեր պարտավորությունները: Ստորագրեք ներքևում:

### ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Այս շաբաթ առնվազն 20 հոգու ես կասեմ իմ տպավորիչ արտահայտությունները:**

*(Դրանցից ոմանք պետք է լինեն մարդիկ, ում հետ դուք նախկինում կապ եք հաստատել:)*

Շրջանակի մեջ առեք ձեր նպատակը. 20 30 40

Ես կպարսպեմ Իմ հիմքը գրքույկի այսօրվա սկզբունքը և կուսուցանեմ իմ ընտանիքին:

Ես կավելացնեմ իմ խնայողություններին՝ թեկուզ փոքրիկ գումար:

Ես կզեկուցեմ իմ վարժության ընկերոջը:

*Իմ ստորագրությունը*

*Վարժության ընկերոջ ստորագրությունը*

## ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ԶԵԿՈՒՑԵԼ ԻՄ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ:

**Կիրառում.** Նախքան հաջորդ ժողովը, օգտագործեք այս պարտավորության դիագրամը ձեր առաջընթացը գրանցելու համար: Մտորև տրված վանդակներում գրեք «Այո», «Ոչ» կամ քանի անգամ եք պահել ստանձնած պարտավորությունը:

Տպավորիչ արտահայտությունները օգտագործել են առնվազն 20 մարդու հետ (Գրել #)	Պարապել են <b>Հիմքի</b> սկզբունքը և ուսուցանել իմ ընտանիքին (Այո/Ոչ)	Ավելացրել են խնայողություններին (Այո/Ոչ)	Ջեկուցել են վարժության ընկերոջը (Այո/Ոչ)

**Կարդացեք.** Հիշեք նաև նշել ձեր անձնական ծախսերը Իմ ուղին դեպի ինքնապահովում գրքույկի վերջին էջում:

Մեր խմբի հաջորդ ժողովին վարողը թող գրատախտակին գծի պարտավորության աղյուսակը (ինչպես տրված է վերևում): Մենք կգանք ժողովը սկսելուց 10 րոպե առաջ և կգրենք մեր առաջընթացը աղյուսակի մեջ:

Ընտրեք որևէ մեկին, որ մեր հաջորդ ժողովին վարի *Իմ հիմքը* թեման: Հիշեցրեք նրան, որ մատուցի հիմնական նյութը և ոչ թե լրացուցիչ նյութը ընդգրկի: (Զգիտե՞ք ինչպես վարել *Իմ հիմքը* թեման: Կարդացեք էջ 13 և դիմացի շապիկի ներսի էջը:)

Խնդրեք որևէ մեկին ասել փակման աղոթքը:

### Դիտողությունները խրախուսվում են

Խնդրում ենք ուղարկել ձեր մտքերը, դիտողությունները, առաջարկները և փորձառությունները [srsfeed-back@ldschurch.org](mailto:srsfeed-back@ldschurch.org):

# ՌԵՏՈՒՐԱՆԵՐ

## ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

Ընտրեք դերերը և դերերով ներկայացրեք հետևյալը:

**ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՐՈՂ.** Այսպիսով, ի՞նչ կարող եք ինձ պատմել ձեր մասին:

**ԹԵԿՆԱԾՈՒ 1.** Ի նկատի ունեք ինչ եմ սիրում անե՞լ: Իրականում դրանք այդքան էլ շատ չեն: Իրականում, ես ոչ մի հոբբի կամ հետաքրքրություն չունեմ: Հիմնականում այդքան շատ բաներ չեմ անում:

**ԹԵԿՆԱԾՈՒ 2.** Հըր . . . լավ, ես . . .

**ԹԵԿՆԱԾՈՒ 3.** Ես կոզենայի: Հասկանում եք, ես շատ ժամանակ եմ տրամադրում ծանրություններ բարձրացնելու վրա: Ես պետք է հաճախեմ նաև գայլույթի կառավարման դասընթացներին: Բայց ո՞վ է ուզում հաճախել այդ դասերին: Գիտե՞ք չէ՞, ինչ ի նկատի ունեմ:

**ԹԵԿՆԱԾՈՒ 1.** Կամ ի նկատի ունեք, թե ինչպիսին եմ աշխատանքում: Իրականում աշխատանքի մեջ այդքան էլ երկար չեմ մնացել, որ սսեմ: Ես արագ ձանձրանում եմ և պարզապես այլևս չեմ երևում աշխատավայրում: . . . Գուցե չպետք է դա սսեի:

**ԹԵԿՆԱԾՈՒ 2.** Հըր . . .

**ԹԵԿՆԱԾՈՒ 3.** Ուզում եմ սսել, որ գայլույթի կռապարհան դասընթացը վարող ուսուցչին . . . ես կարող էի երկու կես անել: Եվ ո՞վ է լինելու իմ դեկալիարը: Դո՞ւք: Դե, դուք այնպիսիներից չեք չէ՞, ով մշտապես ստուգում է՝ մենք զբաղված ենք, թե ոչ: Ինչ է, մենք մի խումբ մանուկներ՞ չեմք: Իմ վերջին դեկավարն այդպիսին էր, և ինձ դա դուր չէր գալիս:

**ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՐՈՂ.** Մենք ինչո՞ւ պետք է ձեզ աշխատանքի ընդունենք:

**ԹԵԿՆԱԾՈՒ 2.** Դուք պետք է ինձ աշխատանքի ընդունեք, որովհետև . . . հըր . . .

**ԹԵԿՆԱԾՈՒ 1.** Դե, ինձ աշխատանք է հարկավոր: Կարծում էի, մայրս երեկ եկել և խոսել է ձեզ հետ: Լա սասց, որ ես պետք է աշխատանքի ընդունվեմ: Լա չի սսե՞լ:

**ԹԵԿՆԱԾՈՒ 3.** Դուք անխելք պետք է լինեք, որ ինձ աշխատանքի չընդունեք: Երբ ներս մտա, զգացի, որ որոշ բաներ այստեղ պետք է փոխվի: Չարևանում եմ, որ ձեր բիզնեսը դեռևս գործում է: Կարող եմ այդ սսեեր ուղղել: Այո: Դուք շնորհակալ կլինեք ինձանից ձեր բիզնեսը փրկելու համար:

**ԹԵԿՆԱԾՈՒ 2.** Որովհետև . . . հըր . . .

**ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՐՈՂ.** Ո՞րն է ձեր սսե-նաթույլ տեղը:

**ԹԵԿՆԱԾՈՒ 3.** Ես ոչ մի թույլ տեղ չունեմ: Իսկ ձե՞րը որն է: Գիտե՞ք, ես չեմ սիրում նման հարցեր:

**ԹԵԿՆԱԾՈՒ 2.** Թույլություններ: Հըր . . .

**ԹԵԿՆԱԾՈՒ 1.** Հըր . . . գողությունը: Իրականում, դա այդպես չէ: Դա գողություն չէր: Երկար պատմություն է: Ես իրականում դա պետք է ետ վերադարձնեի: Կարծեցի, դեկավարս թույլ կտար այն վերցնել մի որոշ ժամանակով:

**Վերադարձեք էջ 24**

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ԲԱՑԱՍԱԿԱՆԸ ԴՐԱԿԱՆԻ ՓՈԽՈՒՄ: (ՈՉ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ)

**Քննարկեք.** Ինչպե՞ս եք պատասխանում այս հարցին. «Ո՞րն է ձեր ամենաթույլ տեղը»: Կարդացեք Գլոբիալի պատասխանը:

«Դե, ես աշխատում եմ իմ ժամանակն առավելապես արդյունավետ տնօրինել: Ես օրացուցային գործիք եմ գտել, որն իսկապես օգնում է ինձ, և ես ամեն օր օգտագործում եմ այն: Վերջերս, չնայած բազմաթիվ մրցակցող առաջնահերթություններին, ես օգնեցի մեծ վաճառքի նախագիծը ժամանակին ավարտին հասցնել»:

**Կարդացեք.** Ուշադրություն դարձրեք, որ Գլոբիան.

- Կիսվեց մի թույլությամբ, որն ընդհանուր է շատ մարդկանց համար:
- Մասնավորապես նկարագրեց, թե ինչպես է հաղթահարում այդ թույլությունը:
- Տեղեկություն ավելացրեց տպավորիչ արտահայտությունից:

**Կիրառեք.** Փորձեք սա ընտանիքի անդամի կամ ընկերոջ հետ: Խնդրեք նրանց բացասական հարց տալ ձեզ: Պատասխանեք՝ կիսվելով մի թույլությամբ, որն ընդհանուր է շատ մարդկանց համար: Նկարագրեք, թե ինչպես եք դուք հաղթահարում այդ թույլությունը: Տեղեկություն ավելացրեք ձեր տպավորիչ արտահայտությունից:





### 3

*Ինչպե՞ս կարող  
եմ ել «Թաքնված»  
աշխատաշուկա և  
մուտք գործել:*

---

**Աշխատանքի իմ որոնումը**

# ՎԱՐՈՂՆԵՐԻ ՇԱՄԱՐ

## Ժողովի օրը.

- Ջանգահարեք կամ հաղորդագրություն ուղարկեք խմբի բոլոր անդամներին: Խնդրեք նրանց 10 րոպե շուտ գալ՝ իրենց պարտավորությունների մասին զեկուցելու համար:
- Պատրաստեք ժողովի նյութերը:

## Ժողովից 30 րոպե առաջ.

- Աթոռներն այնպես դասավորեք սեղանի շուրջը, որ բոլորը մոտ լինեն:
- Գրատախտակին գծեք այս պարտավորության աղյուսակը:

Խմբի անդամի անունը	Տպավորիչ արտահայտությունները օգտագործել են առնվազն 20 մարդու հետ (Գրել #)	Պարապնց Հիմքի սկզբունքը և ուսուցանեց ընտանիքին (Այո/Ոչ)	Ավելացրեց խնայողություններին (Այո/Ոչ)	Ջեկուցեց վարժության ընկերոջը (Այո/Ոչ)
Գլորիա	32	Կ	Կ	Կ

## Ժողովից 10 րոպե առաջ.

- Ջերմորեն ողջունեք մարդկանց, երբ նրանք ներս են մտնում:
- Երբ խմբի անդամները ներս մտնեն, խնդրեք նրանց լրացնել գրատախտակի պարտավորության աղյուսակը:
- Ժամապահ նշանակեք:

## Երբ սկսում եք՝

- Խնդրեք բոլորին անջատել հեռախոսները և այլ սարքերը:
- Բացման աղոթք ասել (և ցանկության դեպքում՝ օրհներգ կատարել):
- Ուշացողներին ցածր ձայնով խնդրեք անջատել իրենց հեռախոսները և լրացնել պարտավորության աղյուսակը, մինչ խումբը շարունակում է քննարկումը:
- 20 րոպե ժամանակ պահեք *Իմ կիսքը* գրքուկի թեմայի համար:
- Լրացրեք սկզբունք 3-ը՝ *Իմ Հիսթորիա*: Այնուհետև վերադարձեք այս աշխատանքային տետրին և շարունակեք կարդալ հաջորդ էջը:





# ԶԵԿՈՒՑԵԼ

## ՊԱՇԵՂ ԵՄ ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

- Ժամանակ.** 20 րոպե ժամանակ պահեք Ձեկուցել բաժնի համար:
- Կիրառեք.** Եկեք զեկուցենք մեր պարտավորությունների մասին: Խնդրում եմ կանգնեն նրանք, ովքեր պահել են իրենց բոլոր պարտավորությունները: (Ծափահարեք:)
- Կարդացեք.** Այժմ, բոլորդ կանգնեք: Եկեք միասին կրկնենք մեր թեմայի խոսքերը.

**«Եվ իմ նպատակն է՝ ապահովել իմ սրբերին. քանզի բոլոր բաներն իմն են»:**

*Վարդապետություն և Ուխտեր 104.15*

**Առ Տերը հավատքով մենք միասին աշխատում ենք դառնալ ինքնապահով:**


- Կարդացեք.** Եկեք նստենք:
- Քննարկեք.** Ի՞նչ սովորեցիք մարդկանց տպավորիչ արտահայտություններ ասելով: Արդյո՞ք բարելավեցիք դրանք: Գրի՞ եք առել ձեր կապերը և հետևել կատարմանը:  
Արդյո՞ք որևէ մեկը փորձել է Աշխատանքի արագացված որոնումը: Ի՞նչ արդյունքներ կան:



# ՍՈՎՈՐԵԼ

## ԻՆՉ Է «ԹԱՔՆՎԱԾ» ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՆ:

- Ժամանակ.** 60 րոպե ժամանակ պահեք Սովորել բաժնի համար:
- Դիտք.** «Նայեք, թե որտեղ ավելի քիչ մրցակցություն կա» (Չկա տեսանյութ, կարդացեք էջ 48:)
- Կարդացեք.** Եկեք միասին կարդանք ստորև տրված ձկնորսության դիագրամի վրա գրված խոսքերը: Չուկը ներկայացնում է աշխատանքները: Ուշադրություն դարձրեք, թե որտեղ են հիմնականում ձկները, կամ որտեղ կարելի է հիմնականում աշխատանք գտնել:
- Քննարկեք.** Ո՞ր անձնավորությունը կարող է ամենաշատը ձուկ բռնել: Շրջանակի մեջ առեք այդ անձնավորությանը: Որտե՞ղ է «Թաքնված» աշխատաշուկան:
- Կարդացեք.** Շատ ավելի հնարավորություններ կան թաքնված աշխատաշուկայում, քան ավանդական աշխատաշուկայում: Որտե՞ղ ենք աշխատանք փնտրում: Որտե՞ղ *սխառ* է մենք աշխատանք փնտրենք:



**Կարդացեք. ՀԱՐԲԱԾՎԱԿԱՆ ՀԱՐՑ—Ինչպե՞ս կարող եմ ես «թաքնված» աշխատաշուկա մուտք գործել:**  
**ՀԱՐԲԱԾՎԱԿԱՆ ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆ—Անձնական հանդիպումներ ունեցեք հավանական գործատուների հետ:**

Այդ հանդիպման ժամանակ մենք կտվորենք և կկիրառենք հմտություններ, որոնք կօգնեն մեզ պատասխանել այս հարցին և կատարել այդ վճռորոշ քայլը:

**ՈՐՏԵՂ Է ԹԱՔՆՎԱԾ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՆ:**

**Դիտեք.** «Առավել արդյունավետ աղբյուրները» (Ձև՞ տեսանյութ, Կարդացեք էջ 48):

**Կարդացեք.** Աշխատանք փնտրող որոշ ռազմավարություններ առավել արդյունավետ են, քան մյուսները: Որոշ երկրներում տարբեր եղանակներով աշխատանք գտած մարդկանց թվի ցուցանիշը գրեթե նման է ստորև տրված աղյուսակի ցուցանիշին: Ձեր տարածքում գուցե տարբեր լինի:

- Կիրառեք.** Խմբով պատասխանեք այս հարցերին.
1. Ըստ այս աղյուսակի, ամենաշատը ո՞ր եղանակն են մարդիկ օգտագործում աշխատանք փնտրելիս:
  2. Ո՞ր եղանակով են առավելապես հաջողության հասնում աշխատանք փնտրելիս:


ԵՂԱՆԱԿ	ՈՐՏԵՂ ԵՆ ՄԱՐԴԻԿ ԺԱՄԱՆԱԿ ԾԱԽՍՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐԵԼՈՎ	ՈՐՏԵՂ ԵՆ ԻՐԱԿԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔ ԳՏՆՈՒՄ
Գովազդներ/Համացանց	65%	14%
Աշխատանքի տեղավորման պետական կամ մասնավոր ծառայություններ	27%	21%
Անհատական կապեր ընկերությունների հետ	3%	30%
Բարեխոսելով (անձնական կապերով և միջնորդներով)	5%	35%

**Բայց մի անտեսեք այս տարբերակները, կամ դուք բաց կթողնեք աշխատանքների 35%-ը:**

**Սա է թաքնված աշխատաշուկան: Ուշադրությունը կենտրոնացրեք այստեղ և խույս տվեք 92% մրցակցությունից:**

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ «ԹԱՔՆՎԱԾ» ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ ՄՈՒՄ ԳՈՐԾԵԼ:

**Կարդացեք.** Մենք արդեն ունենք այդ թաքնված աշխատաշուկա մուտք գործելու բանալիները: Անհրաժեշտ են անձնական կապեր: Եվ մենք անձնական կապեր ենք ստեղծում օգտագործելով մեր (1) «իմ մասին 30 վայրկյանում» և մեր (2) տպավորիչ արտահայտությունները մեր (3) աճող կապերով: Ինչպես մենք սովորեցինք մեր նախորդ ժողովի ընթացքում, մեզ համար կապեր են հանդիսանում մարդիկ, ում մենք ճանաչում ենք, և մարդիկ, ում նրանք են ճանաչում:



**Դիտեք.** «Ստեղծել մեր կապերի շրջանակը» (Չկա՞ տեսանյութ, կարդացեք էջ 49:)

**Ձևարկեք.** Մեր վերջին ժողովից հետո օգտագործե՞լ եք «իմ մասին 30 վայրկյանում»-ը և տպավորիչ արտահայտությունները: Խնդրե՞լ եք արդյոք ձեր ծանոթներին ձեր մասին ասել *լիեմեց* ծանոթներին:

- Կիրառեք.** Մեր խումբը կապեր հաստատելու մեր առաջին աղբյուրն է: Եկեք հենց հիմա սկսենք ընդլայնել մեր կապերի շրջանակը: Կարողացեք ստորև տրված հրահանգները և ապա սկսեք.
1. Կանգնեք և շրջվեք դեպի ձեր կողքին կանգնած անձնավորությանը:
  2. Մյուս անձնավորությանն ասեք «Իմ մասին 30 վայրկյանում»-ը և ավարտեք այս երկու հարցերով.  
**«Գիտե՞ք ինչ-որ մեկի, ով ինձ կօգնի կապեր գտնել»:**  
**«Կարո՞ղ եք խոսել այդ մարդկանց հետ և խնդրել նրանց օգնությունը»:**
  3. Գրեք այդ կապերի տվյալները ծանոթների ցուցակի հաջորդ էջում և խնդրեք մյուս անձնավորությանը ձեզ տրամադրել ավելի շատ կապերի տվյալներ մինչև մյուս ժողովը, երբ հիշեն նրանց:
  4. Այնուհետև փոխվեք տեղերով և կրկնեք նույնը:
  5. Տեղափոխվեք և կատարեք նույնը խմբի մյուս անդամների հետ:
  6. Հաջորդ էջի վրա գրի առեք որքան հնարավոր է շատ կապերի տվյալներ:
  7. Մեր ժողովից հետո նույնը կատարեք ձեզ ծանոթ այլ մարդկանց հետ:
  8. Առաջնահերթություն սյունակում 1-20 թվերով համարակալեք յուրաքանչյուր անձնավորությանը, ում հետ կապ կհաստատեք:

**Ծանոթություն ստեղծելու խորհուրդներ**

1. Հարցրեք  
ծանոթներին թափուր աշխատատեղերի, տեղեկության և գաղափարների համար:
2. Մշտապես  
խնդրեք ավելի շատ կապ հաստատելու տեղեկություն:
3. Մանրակրկիտ  
գրառումներ կատարեք և հետևեք կատարմանը:



## ԻՆՉՊԵ՛Ս ԵՄ ԵՍ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՂ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՇԵՏ:

**Կարդացեք.** Կապերի շրջանակը կարող է մեզ մոտեցնել աշխատատեղեր ունեցող բիզնեսներին: Բայց մենք պետք է հանդիպենք այն մարդու հետ, ով աշխատանքի ընդունելու որոշումներ է կայացնում:

**Կիրառեք.** Եկեք խմբով պարապենք:

1. Նշանակեք մեկին՝ որպես աշխատանք փնտրող: Այդ անձնավորությունը պետք է պատրաստ լինի, որպեսզի գործատուին ներկայանա 30 վայրկյանում, հարց տա և տպավորիչ արտահայտություն ասի:
2. Հանձնարարեք երկու անձանց լինել աշխատակիցները. աշխատակից 1 և աշխատակից 2:
3. Հանձնարարեք մեկ ուրիշին լինել տնօրենը:
4. Թող բոլոր չորսն էլ կանգնեն: Վարողը կարդում է այդ դերերով ներկայացման առաջին տողը: Այնուհետև մյուսները կարդում են իրենց տողերը:

*Վարող. Այս աշխատանք փնտրողը մտնում է խամուռ կամ գրասենյակ, որտեղ նա ցանկանում է աշխատել: Նա խոսում է իրեն հանդիպող առաջին աշխատակցի հետ:*

*Աշխատանք փնտրող. Բարև ձեզ: Ո՞վ է տնօրենը:*

*Աշխատակից 1. Պր. Վալենդոնյան է, բայց ես չգիտեմ, թե որտեղ է նա այս պահին: Կարող եք հարցնել այնտեղ՝ նրա օգնականին:*

*Աշխատանք փնտրող. Շնորհակալություն: [Շրջվում է դեպի աշխատակից 2-ը:]*

*Աշխատանք փնտրող. Բարև ձեզ: Կարո՞ղ եք ասել, թե որտեղ է Պր. Վալենդոնյան:*

*Աշխատակից 2. Նա գնաց ինչ-որ բան բերելու: Շուտով կվերադառնա: Միայն նա գալիս է:*

*Աշխատանք փնտրող. Այո, տեսա: Շնորհակալություն: [Շրջվում է դեպի Պր. Վալենդոնյան:]*

*Աշխատանք փնտրող. Բարի լույս, Պր. Վալենդոնյա: Ես \_\_\_\_\_ [անուն] եմ: [Ներկայանում է 30 վայրկյանում և ավարտում հարցով:] Իմ հետաքրքրություններով օժտված մարդը կարո՞ղ է օգտակար լինել ձեր բիզնեսին:*


*Տնօրեն. Իրականում մենք սկսել էինք ձեզ նման աշխատող փնտրել: Ես ընդամենը մեկ լույսե ունեմ: Հակիրճ պատմե՞ք ձեր մասին:*

*Աշխատանք փնտրող. [Ասում է համապատասխան տպավորիչ արտահայտությունը:] Ես գիտեմ, որ դուք զբաղված եք: Ե՞րբ կարող եմք մի փոքր ավելի երկար զրուցել՝ այսօր կեսօրից հետո կամ վաղը:*

**Քննարկեք.** Եթե ղեկավարն ասում է «ոչ», «հետո եկեք» կամ «լրացրեք դիմում-թերթիկը», ի՞նչ պետք է ասի աշխատանք փնտրողը:

**Կարդացեք.** Մենք պետք է հարմարվենք ամեն իրավիճակի:

**Կիրառեք.** Կանգնեք և բաժանվեք չորս հոգանոց խմբերի: Կրկնեք դերերով խաղն այնքան, որ ամեն մեկը հնարավորություն ունենա աշխատանք փնտրող լինել:



**Կարդացեք.** Մենք այժմ մի քանի հզոր գործիքներ ունենք կապեր հաստատելիս օգտագործելու համար. «Իմ մասին 30 վայրկյանում», տպավորիչ արտահայտություններ և հանդիպում տնօրենի հետ: Դուք կարող եք նաև սովորել ինչպես բացասականը փոխել դրականի էջ 33-ում:

**Քննարկեք.** Նախքան մեր հաջորդ հանդիպումը, ինչպե՞ս կօգտագործեք այդ գործիքները արդյունավետ շատ հանդիպումներ ունենալու համար:

**Կիրառեք.** Բացեք էջ 50-ը և հերթով կարդացեք՝ ինչպես կարող եք հետևել ձեր աշխատանքի որոնման ջանքերին: Այնուհետև վերադարձեք այստեղ:





# ԽՈՐՀԵԼ

## Ի՞նչ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆԵԼ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

**Ժամանակ.** 10 րոպե ժամանակ պահեք Խորհել բաժնի համար:

**Կիրառեք.** Կարդացեք աջ կողմում տրված մեջբերումը կամ մեկ այլ սուրբ գրության հատված: Հանգիստ խորհեք ձեր սովորածի շուրջ: Գրեք ձեր տպավորությունները ներքևում:

---

---

---

---

---

**Ձևարկեք.** Ինչ-որ մեկը ցանկանո՞ւմ է կիսվել իր մտքերով:

*«Տիրոջն ապավինիր  
քո բոլոր սրտովը, և  
քո հասկացողությանը  
մի վստահիր: Քո  
բոլոր ճանապարհ-  
ներումը ճանաչիր  
սրան, և նա կուղղե քո  
ճանապարհները»:*

**ԱՈՍԿՍՑ 3.5–6**



# ՊԱՐՏԱՎՈՐՎԵԼ

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՕՐ-ՕՐԻ ԱՌԱՋԱԴԻՄԵԼ:

- Ժամանակ.** 10 րոպե ժամանակ պահեք Պարտավորվել բաժնի համար:
- Կիրառեք.** Ընտրեք ձեր վարժության ընկերոջը: Որոշեք երբ և ինչպես դուք կապ կպահեք միմյանց հետ:

*Վարժության ընկերոջ անունը*

*Կոնտակտային տվյալներ*

**Բարձրաձայն կարդացեք յուրաքանչյուր պարտավորությունը ձեր վարժության ընկերոջը: Խոստացեք պահել ձեր ստանձնած պարտավորությունները: Ստորագրեք ներքևում:**

### ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ես կօգտագործեմ «Իմ մասին 30 վայրկյանում»-ը և տպավորիչ արտահայտությունները առնվազն 30 մարդկանց հետ, ում ես ճանաչում եմ և ում նրանք են ճանաչում (իմ ծանոթները): (Շեղանկով եղեք ձեր կապերին էջեր 50–51-ում: Դրանցից ոմանք պետք է լինեն մարդիկ, ում հետ դուք նախկինում կապ եք հաստատել:)

Շրջանակի մեջ առեք ձեր նպատակը.                    30                    40                    50

Ես կաշխատեմ իմ կապերի հետ և կփորձեմ հանդիպել տնօրեններին՝ ունենալով առնվազն 10 անձնական հանդիպումներ հավանական գործատուների հետ: (Շեղանկով եղեք ձեր կապերին էջեր 50–51-ում:)

Շրջանակի մեջ առեք ձեր նպատակը.                    10                    15                    20

Ես կպարապեմ Իմ հիմքը գրքույկի այսօրվա սկզբունքը և կուսուցանեմ իմ ընտանիքին:

Ես կավելացնեմ իմ խնայողություններին՝ թեկուզ փոքրիկ գումար:

Ես կգեկուցեմ իմ վարժության ընկերոջը:

*Իմ ստորագրությունը*

*Վարժության ընկերոջ ստորագրությունը*

### ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ԶԵԿՈՒՑԵԼ ԻՄ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ:

**Կիրառեք.** Նախքան հաջորդ ժողովը, օգտագործեք այս պարտավորության դիագրամը ձեր առաջընթացը գրանցելու համար: Մտորև տրված վանդակներում գրեք «Այո», «Ոչ» կամ քանի անգամ եք պահել ստանձնած պարտավորությունը:

Կապ հաստատելի առնվազն 30 մարդու հետ (Գրել #)	Հանդիպելի առնվազն 10 հավանական գործատուների հետ (Գրել #)	Պարապելի <b>Հիմքի</b> սկզբունքը և ուսուցանելի ընտանիքին (Այո/Ոչ)	Ավելացրելի խնայողություններին (Այո/Ոչ)	Ջեկուցելի վարժության ընկերոջը (Այո/Ոչ)

**Կարդացեք.** Հիշեք նաև նշել ձեր անձնական ծախսերը *Իմ ուղին դեպի ինքնապահովում* գրքույկի վերջին էջում:

Ընտրեք որևէ մեկին, որ հաջորդ ժողովին վարի *Իմ հիմքը* թեման: (Չգիտե՞ք ինչպես վարել *Իմ հիմքը* թեման: Կարդացեք էջ 13 և դիմացի շապիկի ներսի էջը:)

Խնդրեք որևէ մեկին ասել փակման աղոթքը:

#### **Դիտողությունները խրախուսվում են**

Խնդրում ենք ուղարկել ձեր մտքերը, դիտողությունները, առաջարկները և փորձառությունները [srsfeed-back@ldschurch.org](mailto:srsfeed-back@ldschurch.org)

# ՌԵՏՈՒՐԱՆԵՐ

## ՓՆՏՐԵՔ ԱՅՆՏԵՂ, ՈՐՏԵՂ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԵԼԻ ՔԻՉ Է

Ընտրեք դերերը և դերերով կատարեք հետևյալը:

**ԿՈՒՄՄԻ.** Օհ, սովելի քան 200 հոգի է դիմել աշխատանքի համար, որ ես էի ցանկանում: Բիսարկե ես ոչ մի շանս չունեմ:

**ԿՈՅԻ.** Կուսակի, հիշո՞ւմ ես այն վայրը, որտեղից մենք ձուկ էինք որսում, երբ դու փոքր էիր:

**ԿՈՒՄՄԻ.** Այո: Դա հիանալի վայր էր, անտառի ետևում թաքնված: Նույնիսկ չէիր սափ, որ այնտեղ աղյալիս վայր կար: Բակ այժմ, բոլորը գիտեն դրա մասին: Այժմ

այնտեղ այնքան մարդ է գնում, որ դժվար է ինչ-որ բան որսալ:

**ԿՈՅԻ.** Բակ աշխատանք փնտրելիս, ինչո՞ւ ես «որսում» այնտեղ, որտեղ բոլորն են «որսում»: Ինչո՞ւ չես փնտրում այնտեղ, որտեղ մրցակցությունն սովելի քիչ է: Կարծում եմ, դու չես տեսնում «Թաքնված» աշխատաշուկան: Չկնորարության զևս այնտեղ, որտեղ ձուկ կա:

**Վերադարձեք էջ 38**

## ԱՌԱՎԵԼ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ընտրեք դերերը և դերերով կատարեք հետևյալը:

**ԿՈՅԻ.** Ես քեզ համար լրագիր եմ քերել:

**ԿՈՒՄՄԻ.** Ես այլևս թերթում աշխատանք չեմ նայում: Չիշո՞ւմ ես: Ես փնտրում եմ այնտեղ, որտեղ մրցակցությունն սովելի քիչ է:

**ԿՈՅԻ.** Լավ, դու պետք է կենտրոնանաս առավել արդյունավետ աղբյուրների վրա:

Բայց լրագրերում լավ աշխատանքների հայտարարություններ կան: Մենք պետք է փորձենք բոլոր տարբերակները: Պարզապես պետք է ճիշտ քանակի ժամանակ ծախսես քեզ համար առավել արդյունավետ աղբյուրների վրա:

**Վերադարձեք էջ 39-ին**

## ՍՏԵՂՏԵՔ ՁԵՐ ԿԱՊԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

Ընտրեք դերերը և դերերով կատարեք հետևյալը:

**ԿՈՒՄՄԻ.** Ես փորձում եմ ամեն օր ստեղծել 10 նոր կապ, բայց զնալով դժվարանում է նոր կապեր գտնելը:

**ԿՈՖԻ.** Դե, այս վերջին օրերին ես հետևում եմ քեզ, և ինձ թվում է՝ դու փորձում ես այդ ամենն ինքնուրույն ամեն: Գիտես, դու այլե՞լի լավ արդյունքների կհասնես, եթե ժամանակիդ մի մասը ծախսես ծանոթներիդ ներգրավելու վրա:

**ԿՈՒՄՄԻ.** Ծանոթներիս ներգրավելո՞ւ:

**ԿՈՖԻ.** Այո, դու պետք է մի թիվ ստեղծես, ծանոթ մարդկանց շրջանակ, ովքեր աշխատանքի հնարավորությունների մասին խնամարտն պես քեզ տեղյակ կպահեն: Դու պետք է որոշ ժամանակ հասկացնես ուրիշներին օգնելուն, նրանք էլ գուցե կարողանան քեզ օգնել:

**ԿՈՒՄՄԻ.** Ես բավմիջա խոսել եմ իմ բոլոր ծանոթների հետ:

**ԿՈՖԻ.** Ճիշտ է: Բայց քո ծանոթների շրջանակը չպետք է սահմանափակվի միայն այն մարդկանցով, ում դու ճանաչում ես: Այն պետք է ընդգրկի մարդկանց, ում նրանք են ճանաչում: Խնդրիր քո ծանոթներին, որ քեզ ներկայացնեն մարդկանց, ում իրենք են ճանաչում:

**ԿՈՒՄՄԻ.** Հրմ: Բայց ի՞նչ ասեմ այդ մարդկանց, երբ ես չեմ ճանաչում նրանց: Դու չես կարող նրանց հետ խոսել այնպես, ինչպես կխոսեիր քեզ ծանոթ մարդկանց հետ: Որտեղի՞ց պետք է սկսեմ:

**ԿՈՖԻ.** Սկսիր հարցնել քո ընկերներին, արդյոք ճանաչում են ինչ-որ մեկին (1) ով որոշակի տեղեկություն ունի քո ընտրած կարիերայի մասին, (2) ով կարող է աշխատանքի տեղափոխման հարցում ազդեցություն ունենալ, կամ (3) ով սարգսպես շատ մարդկանց է ճանաչում: Ձեր ծանոթների շրջանակն այլե՞լի սրագ կմեծանա: Եվ այլե՞լի շատ հասիանական է, որ աշխատանքի հնարավորությունների մասին լսեք ձեր ծանոթների հետ խոսելու ընթացքում: Նրանք կօգնեն քեզ գտնել թաքնված աշխատաշուկան:

**ԿՈՒՄՄԻ.** Իսկ ի՞նչ ասեմ նրանց:

**ԿՈՖԻ.** Այդքան կարևոր չէ, թե՛ ինչ ես ասում, որքան՝ ինչպես ես ասում: Այլե՞լի կարևոր է՝ ինչպես ես ներկայացնում քեզ: Պարսպիր քո «Իմ մասին 30 վայրկյանում»-ը և քո տպավորիչ արտահայտությունները և անսպասելի լավ տպավորություն կթողնես:

**ԿՈՒՄՄԻ.** Շատ լավ: Գուցե դա նոր դռներ բացի իմ ստղ:

**Վերադարձեք էջ 40**

### ՀԵՏԵՎԵՔ ՁԵՐ ՋԱՆՔԵՐԻՆ

Նախքան մեր հաջորդ ժողովը, ստեղծեք առնվազն 30 աշխատանքի որոնման կոնտակտներ՝ ձեր ծանոթների շրջանակի միջոցով: Դրա արդյունքում դուք պետք է ունենաք 10 անձնական հանդիպումներ հավանական գործատուների հետ:

Շարունակեք նայել գովազդային հայտարարությունները, փնտրել համացանցում և այցելել ինքնապահովման կենտրոն: Մակայն հիշեք, որ աշխատանքները թաքնված աշխատաշուկայում են: Ձեր ժամանակի մեծ մասը և ջանքերը տրամադրեք՝ ընկերությունների և ձեռնարկությունների հետ ուղղակիորեն կապվելով և ձեր ծանոթների միջոցով անհատական հանդիպումներ ձեռք բերելով:

Կարող եք հետամուտ լինել ձեր կապերին և հանդիպումներին այս աղյուսակի միջոցով (օրինակը տրված է): Գրառումներ կատարեք ձեր հանդիպումների մասին՝ օգտագործելով հաջորդ էջի Կապերին հետևելու ձևաթուղթը կամ կարող եք առանձին տետր օգտագործել:

ԳՈՎԱԶԴՆԵՐ/ ՀԱՄԱՑԱՆՑ	ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՍ ՄԱՍՆԱՎՈՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱՊԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ	ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ ՄԱՐԴԿԱՆՑ ՀԵՏ, ՈՒՄ ԳՏԵԼ ԵՔ ՁԵՐ ԾԱՆՈԹՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԻ ՄԻՋՈՑՈՎ
1. Դիմել եմ առցանց հաշվապահի աշխատանքի համար	1. Շնորհակալական գրություն եմ ուղարկել աշխատանքի սպասարկման գրասենյակ՝ Գլորիային	1. Հաջորդող այց Հաշվապահական ընկերություն՝ Մայքլին	1. Հանդիպեցի Խոսեի ընկերոջը Տորո ընկերությունում:
2.	2.	2.	2.
3.	3.	3.	3.
4.	4.	4.	4.
5.	5.	5.	5.
	6.	6.	6.
	7.	7.	7.
	8.	8.	8.
		9.	9.
		10.	10.
		11.	11.
		12.	12.
		13.	13.
			14.
			15.

**ԿԱՊԵՐԻՆ ՇԵՏԵԿԵԼՈՒ ԶԵՎԱԹՈՒՂԹ**

**ԿԱՊ**

Անձնավորություն կամ կազմակերպություն. \_\_\_\_\_

Հեռախոս. \_\_\_\_\_ Հասցե՝ \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Ինձ երաշխավորել է. \_\_\_\_\_

**Ես կապ հաստատեցի այս անձնավորության**

**հետ**  Այո  Ոչ Ամսաթիվ. \_\_\_\_\_

ԶՆՆԱՐԿԿԱԾ ՀԱՐՑԵՐ.

1. \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_

3. \_\_\_\_\_

ՇԵՏԵՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. \_\_\_\_\_ Կատարվել է մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_ Կատարվել է մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

3. \_\_\_\_\_ Կատարվել է մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

ՆՈՐ ՄԻՋՆՈՐԴՆԵՐ.

1. Անուն. \_\_\_\_\_ Հեռախոս. \_\_\_\_\_ \$աքս. \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Հասցե՝ \_\_\_\_\_

2. Անուն. \_\_\_\_\_ Հեռախոս. \_\_\_\_\_ \$աքս. \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Հասցե՝ \_\_\_\_\_

**ԿԱՊ**

Անձնավորություն կամ կազմակերպություն. \_\_\_\_\_

Հեռախոս. \_\_\_\_\_ Հասցե՝ \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Ինձ երաշխավորել է. \_\_\_\_\_

**Ես կապ հաստատեցի այս անձնավորության**

**հետ**  Այո  Ոչ Ամսաթիվ. \_\_\_\_\_

ԶՆՆԱՐԿԿԱԾ ՀԱՐՑԵՐ.

1. \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_

3. \_\_\_\_\_

ՇԵՏԵՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. \_\_\_\_\_ Կատարվել է մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_ Կատարվել է մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

3. \_\_\_\_\_ Կատարվել է մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

ՆՈՐ ՄԻՋՆՈՐԴՆԵՐ.

1. Անուն. \_\_\_\_\_ Հեռախոս. \_\_\_\_\_ \$աքս. \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Հասցե՝ \_\_\_\_\_

2. Անուն. \_\_\_\_\_ Հեռախոս. \_\_\_\_\_ \$աքս. \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Հասցե՝ \_\_\_\_\_







# 4

*Ի՞նչ կարող եմ անել,  
որ ընտրությունն  
իմձ վրա կանգնի:*

---

Աշխատանքի իմ որոնումը

# ՎԱՐՈՂՆԵՐԻ ՇԱՄԱՐ

## Ժողովի օրը.

- Ջանգահարեք կամ հաղորդագրություն ուղարկեք խմբի բոլոր անդամներին: Խնդրեք նրանց 10 րոպե շուտ գալ՝ իրենց պարտավորությունների մասին զեկուցելու համար:
- Պատրաստեք ժողովի նյութերը:

## Ժողովից 30 րոպե առաջ.

- Աթոռները դասավորեք սեղանի շուրջն այնպես, որ բոլորը մոտ լինեն:
- Գրատախտակին գծեք այս պարտավորության աղյուսակը:

Խմբի անդամի անունը	Կապվել են ծանոթ շրջանակի առնվազն 30 մարդու հետ (Գրել #)	Հանդիպել են առնվազն 10 հավանական գործատուների հետ (Գրել #)	Պարապել են Հիմքի սկզբունքը և ուսուցանել իմ ընտանիքին (Այո/Ոչ)	Ավելացրել են խնայողություններին (Այո/Ոչ)	Ջեկուցել են վարժության ընկերոջը (Այո/Ոչ)
Գլորիա	40	12	Կ	Կ	Կ

## Ժողովից 10 րոպե առաջ.

- Ջերմորեն ողջունեք մարդկանց, երբ նրանք ներս են մտնում:
- Երբ խմբի անդամները ներս մտնեն, խնդրեք նրանց լրացնել գրատախտակի պարտավորության աղյուսակը:
- Ժամապահ նշանակեք:

## Երբ սկսում եք՝

- Խնդրեք բոլորին անջատել հեռախոսները և այլ սարքերը:
- Բացման աղոթք ասել (և ցանկության դեպքում՝ օրհներգ կատարել):
- Ուշացողներին ցածր ձայնով խնդրեք անջատել իրենց հեռախոսները և լրացնել պարտավորության աղյուսակը՝ մինչ խումբը շարունակում է քննարկումը:
- 20 րոպե ժամանակ պահեք *Իմ հիմքը* գրքույկի թեմայի համար:
- Լրացրեք սկզբունք 4-ը՝ *Իմ Հիմքում*: Այնուհետև վերադարձեք այս աշխատանքային տետրին և շարունակեք կարդալ հաջորդ էջը:



# ԶԵԿՈՒՑԵԼ

## ՊԱՇԵ՛Լ ԵՄ ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

- Ժամանակ.** 20 րոպե ժամանակ պահեք Ձեկուցել բաժնի համար:
- Կիրառեք.** Եկեք զեկուցենք մեր պարտավորությունների մասին: Ովքեր պահել են իրենց բոլոր պարտավորությունները, խնդրում եմ կանգնել: (Ծափահարել:)
- Կարդացեք.** Այժմ բոլորը կանգնեք: Եկեք միասին կրկնենք մեր թեմայի խոսքերը.

**«Եվ իմ նպատակն է՝ ապահովել իմ սրբերին. քանզի բոլոր բաներն իմն են»:**  
*Վարդապետություն և Ուխտեր 104.15*

**Առ Տերը հավատքով մենք միասին աշխատում ենք դառնալ ինքնապահով:**

- Կարդացեք.** Նստենք:
- Քննարկեք.** Ի՞նչ սովորեցիք՝ կապ հաստատելով ձեր ծանոթների շրջանակի մարդկանց հետ: Հանդիպումներ ունեցե՞լ եք աշխատանքի ընդունող տնօրենների հետ: Գրի՞ եք ամել ձեր կապերը և հետևել կատարմանը: Արդյոք որևէ մեկը փորձե՞լ է Աշխատանքի արագացված որոնումը: Ի՞նչ արդյունքներ կան:



# ՍՈՎՈՐԵԼ

## Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆԵԼ, ՈՐ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՉ ՎՐԱ ԿԱՆԳՆԻ:

**Ժամանակ.** 60 րոպե ժամանակ պահեք Սովորել բաժնի համար:

**Դիտք.** «Ի՞նչ է նա փնտրում: Մաս 1» (Չկա՞ տեսանյութ, կարդացեք էջ 66:)

**Քննարկեք.** Ի՞նչ են գործատուները ցանկանում իմանալ հարցազրույցների ժամանակ կամ երբ են տալիս ձեզ դիմում-թերթիկը: Ձեր ո՞ր պատասխանները կնպաստեն, որ գործատուի ընտրությունը ձեզ վրա կանգնի:

**Կարդացեք.** **ՇԱԲԱԹՎԱ ՀԱՐՑ**—Ի՞նչ կարող եմ անել, որ ընտրությունն ինձ վրա կանգնի:

**ՇԱԲԱԹՎԱ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ**—Լավ պատասխաններ տվեք հարցազրույցի և դիմում-թերթիկի հարցերին:

Այս ժողովի ժամանակ դուք կսովորեք պատասխանել հարցազրույցի հարցերին և լրացնել դիմում-թերթիկներն այնպես, որի շնորհիվ դուք կտարբերվեք մյուսներից:



## ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՊԱՏՐԱՍՏՎԵՄ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻՆ:

**Կարդացեք.** Մենք վախենում ենք հարցազրույցներից: Մեզ հետաքրքիր է արդյոք, թե ինչ հարցեր են տալիս հարցազրույց վարողները կամ ինչ են իրոք ցանկանում իմանալ:

Իրականում, մենք *կարող ենք* իմանալ: Հարցազրույց վարողները հիմնականում ընդհանուր հարցեր են տալիս: Խմբով եկեք հերթով կարդանք այս աղյուսակը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ	ԻՆՉ Ե ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՐՈՂԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԼՍԵԼ	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ
Ի՞նչ կարող եք ինձ պատմել ձեր մասին:	Կարողանո՞ւմ եմ ևս լավ խոսել: Պատրաստվա՞ծ եմ:	«Իմ մասին 30 վայրկյանում»
Որո՞նք են ձեր ուժեղ կողմերը:	Արդյո՞ք նրա փորձը համապատասխանում է մեր կարիքներին:	Տպավորիչ արտահայտություններ
Ինչո՞ւ եք ցանկանում աշխատել մեզ համար:	Ունի՞ր նա արդյոք հստակ նպատակ:	Տպավորիչ արտահայտություն
Ի՞նչ կարծիք ունեք ձեր նախկին ղեկավարի մասին:	Արդյո՞ք նա հարգում է ղեկավարներին:	Տպավորիչ արտահայտություններ
Ինչպե՞ս եք արձագանքում ճնշմանը:	Արդյո՞ք նա զբաղվում է խնդիրների լուծմամբ:	Տպավորիչ արտահայտություններ
Ի՞նչ աշխատավարձ եք ակնկալում ստանալ:	Արդյո՞ք նրա ակնկալիքները խելամիտ են:	Պատասխանեք հարցով

**Դիտեք.** «Ի՞նչ է նա փնտրում: Մաս II» Դադարեցրեք և մասնակցեք՝ ինչպես հրահանգված է: (Տեսանյութ չկա՞: Կարդացեք էջ 67–68-ը:)

**Քննարկեք.** Ե՞րբ է 30 վայրկյանում ներկայանալը օգտակար գործիք հանդիսանում հարցազրույցի ժամանակ: Ե՞րբ են տպավորիչ արտահայտությունները ճիշտ գործիք հանդիսանում: Հասկանո՞ւմ եք, թե ինչպես բացասական դրականի փոխել:

**Կիրառեք.** Վեց-յոթ րոպե հատկացրեք հետևյալ «արագ վարժությունը» կատարելուն:

- Կանգնեք և շրջվեք դեպի խմբի մեկ ուրիշ անդամը:
- Ձեզանից մեկը գործատուն է: Տվեք ընդհանուր հարց վերը տրված աղյուսակից:
- Մյուսն աշխատանք փնտրողն է. պատասխանեք հարցին՝ ձեր գործիքներն օգտագործելով:
- Դերերով փոխվեք և կրկնեք նորից: Միմյանց համար արագ ամփոփեք ընթացքը:
- Երբ լինեք և գործատու և աշխատանք փնտրող, փոխեք ընկերոջը: Կրկնեք՝ մինչև ժամանակը լրանա:

Մեր ժողովից հետո շարունակեք պարապել ձեր ընտանիքի կամ ընկերների հետ: Ավելի շատ հարցերի համար տես էջ 69-ի աղյուսակը:



### ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ԵՍ ՀԱՐՑԵՐԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ:

**Կարդացեք.** Ի՞նչ անենք, եթե չենք կարողանում ասել այն, ինչ հարցազրույց վարողն է ցանկանում լսել: Կամ ինչ անենք, եթե ավելի շատ տեղեկության կարիք ունենք: Երբեմն մենք կարող ենք հարցով պատասխանել:


**Կարդացեք.** Եկեք դիտարկենք այս երկու ընդհանուր հարցերը: Մենք կկարդանք յուրաքանչյուր հարցը և ապա աջ կողմում տրված տեղեկությունը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ	ԻՆՉ Է ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԿԱՐՈՂԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԼՍԵԼ	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ	ՀԱՐՑՈՎ ՊԱՏԱՍԽԱՆԵՔ
Ի՞նչ աշխատավարձ եք դուք ցանկանում:	Արդյո՞ք նա վստահ է այնքան, որ բանակցություններ վարի:	Հարցով պատասխանեք	Որպես կանոն, ինչպե՞ս եք վճարում այս պաշտոնի համար:
Ունե՞ք որևէ հարց:	Արդյո՞ք նա հասկանում է այս աշխատանքը:	Հարցով պատասխանեք	Ի՞նչն է այստեղ աշխատելու առումով լավագույն բանը:

**Քննարկեք.** Ե՞րբ է նպատակահարմար հարցին հարցով պատասխանել: Երբ դա լավ գաղափար չէ: Ինչպե՞ս կարող եք նախապատրաստվել հարցազրույցի ժամանակ լավ հարցեր տալու համար:

**Կարդացեք.** Հարցազրույցից առաջ մենք պետք է հասկանանք, թե ով է գործատուն և պատրաստ լինենք լավ հարցեր տալուն: Մենք կարող ենք պատրաստվել նաև հարց ավելացնել 30 վայրկյանում ներկայանալու կամ տպավորիչ արտահայտություններ ասելու ընթացքում: Օրինակ. «Ուրիշ ի՞նչ հմտությունների մասին կուզենայիք, որ ես խոսեի»:

Լավ հարցերը կարող են լավ գրույցի հիմք հանդիսանալ:



#### Խորհուրդ.

Սովորեք, երբ պետք է տաք և երբ չպետք է տաք հարցերը: Շատ մի տարվեք հարցին հարցով պատասխանելով: Հարցազրույց վարողի զգացմունքների հանդեպ նրբանկատ եղեք: Շափից շատ մի համառեք:

### ՈՉ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ԵՍ ԲԱՆԱԿՑՈՒՄ ԻՄ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԲԱԿԱՐԱՐՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ:

#### (ԴԱ ՄԻ ԱՐԵՔ ԺՈՂՈՎԻ ԺԱՄԱՆԱԿ:)

Ցանկության դեպքում, նախքան հաջորդ ժողովը դուք կարող եք կատարել այս վարժությունը: Հարցազրույցի կարևոր մաս է կազմում բանակցելը: Եթե ցանկանում եք ավելի սովորել, ժամանակ հատկացրեք վերանայելու «Ինչպե՞ս եմ ես բանակցում իմ պահանջներին բավարարող աշխատանքի համար», էջ 70-72՝ Ռեսուրսներ բաժնում: Քննարկեք և պարապեք ձեր ընտանիքի հետ:

### ԻՆՉՊԻՍԻ՞Ն Է ԻՄ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԸ:

**Կիրառեք.** Թող բոլորը կանգնեն և երեք անգամ միասին կրկնեն այս արտահայտությունը.

**Մենք առաջին տպավորությունը ստեղծելու միայն մեկ առիթ ունենք:**

**Քննարկեք.** Ի՞նչ է սա նշանակում ձեզ համար, երբ ցանկանում եք «առանձնանալ»:

**Կիրառում.** Տեղափոխեք ձեր աթոռն այնպես, որ աշխատեք խմբի մեկ այլ անդամի հետ: Միմյանց համար կարդացեք այս աղյուսակը: Որոշեք, որ կարող եք կատարելագործվել՝ դառնալով լավագույնը, որ կարող եք լինել:

#### ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

<b>Մոտեցում</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Աղոթեք օգնության և խաղաղության համար:</li> <li>• Եղեք քաղաքավարի և հարգալից:</li> <li>• Մի ուշացեք:</li> <li>• Հետադրություն ցուցաբերեք տվյալ ընկերության և հարցազրույց վարողի հանդեպ:</li> <li>• Ժպտացեք և եղեք ուրախ:</li> <li>• Վստահ գործեք:</li> <li>• Հստակ խոսեք:</li> </ul>
<b>Հարդարանք</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Եղեք մաքուր՝ դեմքը, ձեռքերը, եղունգները:</li> <li>• Համեստ շպարվեք (կանայք):</li> <li>• Համեստ սանրվածք ունեցեք (կանայք):</li> <li>• Լավ բուրմունք ունեցեք:</li> <li>• Կարճացրեք կամ սափրեք դեմքի մազերը (տղամարդիկ):</li> <li>• Արհեստավարժ տեսք ունեցեք:</li> </ul>
<b>Հագուստ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Հագնվեք մաքուր, և ընտրեք այնպիսի հագուստ, որ անցքեր չունենա (պարտադիր չէ, որ հագուստը թանկարժեք լինի):</li> <li>• Արդուկեք հագուստը:</li> <li>• Աշխատանքային հագուստից մեկ աստիճան բարձր հագնվեք.                         <ul style="list-style-type: none"> <li>○ Եթե դուք աշխատանքի եք գնալու ջինսով և սպորտային վերնաշապիկով, հագեք տաբատ և համեստ վերնաշապիկ:</li> <li>○ Եթե աշխատանքի եք գնալու համեստ վերնաշապիկով, հագեք վերնաշապիկ և փողկապ (տղամարդկանց համար) կամ բլուզ (կանանց համար):</li> </ul> </li> </ul>

## ԻՆՉՊԵ՛Ս ՊԵՏՔ Է ԼՐԱՑՆԵՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԴԻՄՈՒՄ-ԹԵՐԹԻԿԸ:

- Կարդացեք.** Մենք ցանկանում ենք մեր ժամանակի մեծ մասն անցկացնել մեր ծանոթների շրջանակի միջոցով ձեռք բերված անձնական կապերի հետ հանդիպելով և հարցազրույց անցնելով: Բայց մենք հավանաբար պետք է նաև դիմում-թերթիկներ լրացնենք՝ թղթի վրա կամ առցանց: Դիմում-թերթիկը նման է հարցազրույցի՝ թղթի վրա:
- Կիրառեք.** Միացեք խմբի երկու այլ անդամներին: Լրացրեք հաջորդ երկու էջերի վրա տրված դիմում-թերթիկը: Այնուհետև կարդացեք հետևյալը և քննարկեք, թե ինչպես կարող եք բարելավել ձեր դիմում-թերթիկները: Մեր ժողովից հետո վերանայեք էջ 73-75:

ԴԻՄՈՒՄ-ԹԵՐԹԻԿԻ ԲԱԺԻՆ	ԻՆՉ ԵՆ ՆՐԱՆՔ ՓՆՏՐՈՒՄ	ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՎ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ
<b>Անձնական տեղեկություն</b>	Առկա՞ է նրան որակագրկող ինչ-որ բան (օրինակ՝ հանցանք կամ այլ խնդիր):	Պատասխանեք բոլոր հարցերին: Օգտագործեք «իմ մասին 30 վայրկյանում» տեղեկությունը: Եղեք ազնիվ, խուսափեք ոչ կարևոր մանրամասներից:
<b>Կրթություն</b>	Ունի՞ արդյոք անհրաժեշտ վերապատրաստում:	Հնարավորության դեպքում սկսեք բարձրագույն աստիճանից կամ վկայականից և գնացեք ետ ըստ՝ ժամանակի: Ավելացրեք բոլոր հատուկ վերապատրաստումները և վկայականները: Ավելացրեք տպավորիչ արտահայտությունների տեղեկությունը:
<b>Աշխատանքի պատմություն</b>	Արդյո՞ք նա ունի մեզ համար անհրաժեշտ փորձ:	Հնարավորության դեպքում սկսեք վերջին աշխատանքից և գնացեք ետ: Փորձեք խուսափել ժամանակային բացերից կամ բացատրել դրանք: Ավելացրեք տպավորիչ արտահայտությունների տեղեկությունը:
<b>Երաշխավորագրեր</b>	Ունե՞մ արդյոք բավականաչափ տեղեկություն նրանց հետ կապվելու համար:	Պատրաստեք առնվազն մեկ երաշխավորագիր՝ (թույլտվություն ստացեք) ձեր բնավորության համար (ազնվություն և այլն) և մեկ երաշխավորագիր՝ աշխատանքային հմտությունների և ձեռքբերումների համար:
<b>Մրցանակներ կամ շնորհակալագրեր</b>	Նա ունի՞ հատուկ հմտություններ:	Հնարավորության դեպքում սկսեք ամենակարևորից և գնացեք մինչև առավել քիչ կարևորը: Ավելացրեք տպավորիչ արտահայտությունների տեղեկությունը:
<b>Ընդհանուր</b>	Արդյո՞ք լրացված դիմումը կոկիկ և մաքուր է:	Հստակ գրեք: Գրեք գեղեցիկ ձեռագրով:



**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԻՄՈՒՄ-ԹԵՐԹԻԿ**

Անուն. \_\_\_\_\_ Ամսաթիվ. \_\_\_\_\_

Հասցե. \_\_\_\_\_

Հեռախոս. \_\_\_\_\_ Է-փոստ. \_\_\_\_\_

Պաշտոն. \_\_\_\_\_ Ցանկալի աշխատավարձ. \_\_\_\_\_ Հասանելիության ամսաթիվ. \_\_\_\_\_

Երբևէ աշխատե՞լ եք այս ընկերության համար:  Այո  Ոչ Ամսաթիվ. \_\_\_\_\_

Եթե այո, ե՞րբ: \_\_\_\_\_

Երբևէ դատապարտված եղե՞լ եք որևէ հանցագործության համար:  Այո  Ոչ Ամսաթիվ. \_\_\_\_\_

Եթե այո՝ բացատրեք. \_\_\_\_\_

**Կրթություն**

Քոլեջ. \_\_\_\_\_ Հասցե՝ \_\_\_\_\_

Ուսումնառե՞լ եք. \_\_\_\_\_ Ուղղված է. \_\_\_\_\_ Ավարտե՞լ եք:  Այո  Ոչ Վկայական. \_\_\_\_\_

Ավագ դպրոց. \_\_\_\_\_ Հասցե. \_\_\_\_\_

Ուսումնառե՞լ եք. \_\_\_\_\_ Ուղղված է. \_\_\_\_\_ Ավարտե՞լ եք:  Այո  Ոչ Աստիճան. \_\_\_\_\_

**Երաշխավորագրեր**

Լրիվ անունը. \_\_\_\_\_ Ով է հանդիսանում. \_\_\_\_\_ Հեռախոս. \_\_\_\_\_

Լրիվ անունը. \_\_\_\_\_ Ով է հանդիսանում. \_\_\_\_\_ Հեռախոս. \_\_\_\_\_

Լրիվ անունը. \_\_\_\_\_ Ով է հանդիսանում. \_\_\_\_\_ Հեռախոս. \_\_\_\_\_

**Նախորդ աշխատանքները**

Պաշտոնը. \_\_\_\_\_ Նախնական աշխատավարձը. \_\_\_\_\_ Վերջնական աշխատավարձը. \_\_\_\_\_

Պարտականությունները. \_\_\_\_\_

Ում կողմից. \_\_\_\_\_ Ուղղված է. \_\_\_\_\_ Հեռանալու պատճառը. \_\_\_\_\_

Ընկերություն. \_\_\_\_\_ Հեռախոս. \_\_\_\_\_

Պաշտոնը. \_\_\_\_\_ Նախնական աշխատավարձը. \_\_\_\_\_ Վերջնական աշխատավարձը. \_\_\_\_\_

Պարտականությունները. \_\_\_\_\_

Ում կողմից. \_\_\_\_\_ Ուղղված է. \_\_\_\_\_ Հեռանալու պատճառը. \_\_\_\_\_

Ընկերություն. \_\_\_\_\_ Հեռախոս. \_\_\_\_\_

Ես հաստատում եմ, որ իմ պատասխանները ճշմարիտ և ամբողջական են, իմ իմացության չափով:

Աշխատանքի ընդունվելու դեպքում ես հասկանում եմ, որ իմ դիմում-թերթիկի վրա կամ հարցագրույցի ժամանակ տրված սխալ կամ ապակողմնորոշիչ տեղեկությունը կարող է հանգեցնել աշխատանքից ինձ ազատելուն:

Ստորագրություն. \_\_\_\_\_ Ամսաթիվ. \_\_\_\_\_



# ԽՈՐՀԵԼ

## Ի՞ՆՉ ՊԵՏՔ Է ԱՆԵՄ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

**Ժամանակ.** 10 րոպե ժամանակ պահեք Խորհել բաժնի համար:

**Կիրառեք.** Կարդացեք աջ կողմում տրված մեջբերումը կամ մեկ այլ սուրբ գրության հատված: Հանգիստ խորհեք ձեր սովորածի շուրջ: Գրեք ձեր տպավորությունները ներքևում:

---

---

---

---

---

---

**Քննարկեք.** Ինչ-որ մեկը ցանկանո՞ւմ է կիսվել իր մտքերով:

*«Իմաստուն կանեմ քեզ,  
և կտվորեցնեմ քեզ  
այն ճանապարհը, որ  
նորանում պիտի գնաս.  
Կխրատեմ քեզ՝ իմ աչքը  
քեզ վրա կլինի»:*

**ՍԱՐՄՈՍ 32.8**





# ՊԱՐՏԱՎՈՐՎԵԼ

## ԻՆՉՊԵ՛Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՕՐ-ՕՐԻ ԱՌԱՋԱԴԻՄԵԼ:

- Ժամանակ.** 10 րոպե ժամանակ պահեք Պարտավորվել բաժնի համար:
- Կիրառեք.** Ընտրեք ձեր վարժության ընկերոջը: Որոշեք՝ երբ և ինչպես դուք կապ կպահեք միմյանց հետ:

*Վարժության ընկերոջ անունը*

*Կոնտակտային տվյալներ*

**Բարձրաձայն կարդացեք յուրաքանչյուր պարտավորությունը ձեր վարժության ընկերոջը: Խոստացեք պահել ձեր ստանձնած պարտավորությունները: Ստորագրեք ներքևում:**

### ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ես կօգտագործեմ «Իմ մասին 30 վայրկյանում»-ը և տպավորիչ արտահայտությունները առնվազն 40 հոգու հետ, ում ես ճանաչում եմ և ում նրանք են ճանաչում (իմ ծանոթները):

Շրջանակի մեջ առեք ձեր նպատակը.      40      50      60

Ես կաշխատեմ իմ կապերի հետ և կփորձեմ հանդիպել տնօրեններին՝ ունենալով առնվազն 10 անձնական հանդիպումներ հավանական գործատուների հետ:

Շրջանակի մեջ առեք ձեր նպատակը.      10      15      20

Ես կբարելավեմ հարցազրույցի մասնակցելու և դիմելու իմ հմտությունները գործատուների և մյուսների հետ:

Ես կպարապեմ իմ հիմքը գրքուկի այսօրվա սկզբունքը և կուսուցանեմ իմ ընտանիքին:

Ես կավելացնեմ իմ խնայողություններին՝ թեկուզ փոքրիկ գումար:

Ես կզեկուցեմ իմ վարժության ընկերոջը:

*Իմ ստորագրությունը*

*Վարժության ընկերոջ ստորագրությունը*

## ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ԶԵԿՈՒՑԵԼ ԻՄ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ:

**Կիրառեք.** Նախքան հաջորդ ժողովը, օգտագործեք այս պարտավորության դիագրամը ձեր առաջընթացը գրանցելու համար: Մտորև տրված վանդակներում գրեք «Այո», «Ոչ» կամ քանի անգամ եք պահել ստանձնած պարտավորությունը:

Կապ եմ հաստատել ծանոթների շրջանակից առնվազն 40 մարդու հետ (Գրել #)	Հանդիպեցի առնվազն 10 հավանական գործատուների (Գրել #)	Բարելավեցի հարցազրույցին մասնակցելու և դիմելու իմ հմտությունները (Այո/Ոչ)	Պարապեցի <b>Հիմքի</b> սկզբունքը և ուսուցանեցի ընտանիքին (Այո/Ոչ)	Ավելացրել եմ խնայողություններին (Այո/Ոչ)	Ջնկուցել եմ վարժության ընկերոջը (Այո/Ոչ)

**Կարդացեք.** Հիշեք նաև նշել ձեր անձնական ծախսերը Իմ ուղին դեպի ինքնապահովում գրքույկի վերջին էջում:

Ընտրեք որևէ մեկին, որպեսզի հաջորդ ժողովին վարի *Իմ հիսթրի* ձեռնարկի թեման: (Զգիտե՞ք ինչպես վարել *Իմ հիսթրի* թեման: Կարդացեք էջ 13 և դիմացի շապիկի ներսի էջը:)

Խնդրեք որևէ մեկին ասել փակման աղոթքը:

### Դիտողությունները խրախուսվում են

Խնդրում ենք ուղարկել ձեր մտքերը, դիտողությունները, առաջարկները և փորձառությունները [srsfeedback@ldschurch.org](mailto:srsfeedback@ldschurch.org):

# Ռեսուրսներ

## Ի՞ՆՉ Է ՆԱ ՓՆՏՐՈՒՄ. ՄԱՍ I

Ընտրեք դերերը և դերերով ներկայացրեք հետևյալը:

*ԻՐԱՎԻՃԱԿ. Խոսեն (տնօրեն) հարցազրույց է անցկացնում Միգելի (աշխատանք փնտրող) հետ: Հարցազրույցի մեջտեղում:*

*ԽՈՍԵ. Շատ լավ: Այժմ, ինչդրո՞ւմ եմ նկարագրեք ձեր վերջին մեծ ախալը, թե ինչու է դա պատահել և ինչ եք արել այդ առումով:*

*ՄԻԳԵԼ. [Մտածում է] Ի՞նչ հարց է սա: Ի՞նչ է նա ուզում: Կուզենա՞յի խնամալ, թե ինչ է նա փնտրում:*

*ԽՈՍԵ. [Մտածում է] Պարզապես ուզում եմ տեսնել, թե արդյոք նա հասկանում է, թե ինչ սխալ է նա արել և արդյոք լուծել է այդ խնդիրը:*

*ՄԻԳԵԼ. [Մտածում է] Ես գիտեմ՝ ինչ է նա փնտրում: Պետք է բացատրականը դրականի փոխել:*

*ՄԻԳԵԼ. [Բարձրաձայն] Դե, ես հիշում եմ, մի անգամ դեկալպոս կարծում էր, թե ուշացրել եմ ժամկետը: Իրականում այդպես չէր, ես չէի տեղեկացրել նրան հաճախորդի կողմից կատարված փոփոխության մասին: Դրանից հետո, ես անպայման մյուսներին տեղյակ էի պահում, թե ինչ է կատարվում:*

*ԽՈՍԵ. Դա շատ լավ է, Միգել: Երևում է դուք ինչ-որ բան եք սովորել:*

## Վերադարձեք էջ 56-ին

## Ի՞ՆՉ Է ՆԱ ՓՆՏՐՈՒՄ. ՄԱՍ II

Ընտրեք դերերը և դերերով կատարեք հետևյալը: Ի գիտություն վարողին. Երբ ասվում է՝ քննարկել, թող խումբը պատասխանի, նախքան կշարունակեք:

**ՊԱՏՄՈՂ.** Այստեղ են Խոսեն (հարցազրույց վարողը) և Միգելը (համահասկան աշխատակիցը): Խոսեն պատրաստվում է չորս ընդհանուր հարցեր տալ: Մենք կխոսենք,

թե ինչպես Միգելը պետք է պատասխանի: Դուք պատրաստ եք: ԽՈՍԵ. Բարև ձեզ: Դե, ի՞նչ կարող եք ինձ պատմել ձեր մասին:

**ՔՆՆԱՐԿԵՔ. (1) Ի՞ՆՉ Է ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՏՎՈՂԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԻՄԱՆԱԸ: (2) Ի պատասխան, ինչպե՞ս է Միգելն օգտագործում «իմ մասին 30 վայրկյանում» իր բնութագիրը: (Տես ակնարկը աջ կողմում):**

**ՊԱՏՄՈՂ.** Դե լավ, սիսա թե ինչ է տնօրենը իրականում մտածում:

**ԽՈՍԵ.** Կարո՞ղ է նա հատակ պատասխանել: Արդյո՞ք նա որակավորված է:

**ՊԱՏՄՈՂ.** Այսպիսով, Միգելը համահասարակ պետք է ներկայանա՝ փոքր մասին 30 վայրկյանում»-ով:

**ՄԻԳԵԼ.** Ես Միգել Ֆունտանես եմ: Ես դիմել եմ գլխավոր հաշվապահի պաշտոնի

համար: Ես ունեմ վեց տարվա փորձ և դեկլարել եմ հինգ հոգուց բաղկացած հաշվապահական բաժինը: Միսսին մենք անցյալ տարի նվազեցրել ենք մեր ծախսերը 15%-ով և ավելացրել ենք թողարկումը 23%-ով: Ես ունեմ հաշվապահի վկայական և պետական արտոնագիր: Հանգստյան օրերին ես սիրում եմ ֆուտբոլ խաղալ: Ուրիշ ի՞նչ կազենայիք խնամալ իմ մասին:

**ԽՈՍԵ.** Շատ լավ է, շնորհակալություն: Իսկ ուրիշ ի՞նչ ուժեղ կողմեր ունեք:

**ՔՆՆԱՐԿԵՔ. (1) Ի՞ՆՉ Է ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՐՈՂԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԻՄԱՆԱԸ: (2) Ի պատասխան, ինչպե՞ս կարող է Միգելը տպավորիչ արտահայտություն օգտագործել: (Տես ակնարկը աջ կողմում):**

**ՊԱՏՄՈՂ.** Սիսա թե ինչ է իրականում Խոսենի ցանկանում լսել:

**ԽՈՍԵ.** Նա ունի՞ մեզ համար անհրաժեշտ հնոությունները: Կարո՞ղ է արդյունքներով ասարացուցել:

**ՊԱՏՄՈՂ.** Քանի որ դա է ցանկանում Խոսենի խնամալ, ի պատասխան Միգելը համահասարակ տպավորիչ արտահայտություն կարող է օգտագործել:

**ՄԻԳԵԼ.** Ուզում եմ ձեզ մի օրինակ բերել: Ես միշտ ծախսերը կրճատելու ուղիներ եմ փնտրում: Օրինակ մոտ երեք ամիս առաջ

ես մոտեցա իմ դեկլարելին և բացատրեցի, որ շաբաթական 3000 կորցնում էինք ուշացած վճարումների պատճառով: Սկզբում նա կասկածանքով մոտեցավ, բայց ես ցույց տվեցի նրան թվերը: Եվ նա խնդրեց ինձ լուծել այդ խնդիրը: 10 շաբաթվա ընթացքում ես կարողացա 30 օրով կրճատել ուշացած վճարումները յուրաքանչյուր հաշիվապահական գրքի համար, որը հազարներ ինչպե՞ս: Ես կարող եմ այդ խնդրի լուծման հնոությունն օգտագործել ի նպաստ ձեր Մպրոտային կորպորացիայի:

### «Իմ մասին 30 վայրկյանում»

1. Անուն
2. Նպատակ
3. Մասնագիտական որակավորումներ
4. Բնավորության գծեր
5. Հարցով ավարտել

### Տպավորիչ արտահայտություն

1. Բացահայտեք հմտություն կամ ուժեղ կողմ
2. Առանձնահատուկ օրինակ
3. Արդյունք
4. Համապատասխանեցնել կարիքներին

ՊՍՏՄՈՂ. Միս մեկ ուրիշ հարց, որը մենք չենք սիրում լսել:

ԽՈՍԵ. Որո՞նք են ձեր թույլությունները:

**ՔՆՆԱՐԿԵՔ. (1) Ի՞ՆՉ Է ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՐՈՂԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԻՄԱՆԱԼ: (2) Ինչպե՞ս կարող է Միգելը պատասխանել՝ բացասականը փոխելով դրականի: (Տես ակնարկը աջ կողմում):**

ՊՍՏՄՈՂ. Միս թե ինչ է մտածում հարցազրույց վարողը:

ԽՈՍԵ. Նա տեղյա՞կ է՝ ինչ է թույլությունը: Նա ինչ-որ բան արե՞լ է դա լուծելու համար:

ՊՍՏՄՈՂ. Քանի որ դա է ուզում Խոսեն լսել, Միգելը կարողացավ պատասխանել՝ բացասականը դրականի փոխելով:

ՄԻԳԵԼ. Ունեմք ստում են՝ ես չսպից շատ եմ հետաքրքրված օգնելու հաճախորդներին՝ ժամանակին վճարել իրենց հաշիվ-սպրանքագրերը: Այնպես որ, ես քրտնաջան աշխատել եմ հալխասարակչո՞ւնել վճարման արդյունքները հաճախորդներին

սպասարկելու հետ: Եվ ես շատ բան եմ սովորել: Բոլոր հաճախորդների և նրանց կարիքների մասին հոգ տանելով, ես իրականում կարողացա օգնել, որպեսզի ընկերությունը վճարներն այլևի արագ ստանար: Եվ ես պարզևսովճար ստացա անցյալ ամիս՝ որպես հաճախորդների լսվագույն սպասարկող:

ՊՍՏՄՈՂ. Լավ, ահա վերջին ընդհանուր հարցը:

ԽՈՍԵ. Հրաշալի է, Միգել: Շնորհակալություն: Այդ դեպքում, ինչո՞ւ եք ցանկանում աշխատել մեզ համար:

**ՔՆՆԱՐԿԵՔ. (1) Ի՞ՆՉ Է ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՏՎՈՂԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԻՄԱՆԱԼ: (2) Ի պատասխան, ինչպե՞ս կարող է Միգելը տպավորիչ արտահայտություն օգտագործել: (Տես ակնարկը աջ կողմում):**

ՊՍՏՄՈՂ. Այսպիսով, ահա թե ինչ էր մտածում հարցազրույց վարողը:

ԽՈՍԵ. Նա տեղյա՞կ է, թե ինչ է մեզ պետք: Նրան հետաքրքրո՞ւմ է:

ՊՍՏՄՈՂ. Քանի որ դա էր ցանկանում խնայող հարցազրույց վարողը, ի պատասխան Միգելը կարողացավ օգտագործել իր մեկ այլ տպավորիչ արտահայտություն:

ՄԻԳԵԼ. Դե, պարոն Մարտինեզ, հետազոտությունը, որ կատարել եմ ձեր Սպորտային Կորպորացիայի մասին, շատ հետաքրքիր էր: Դուք կենտրոնանում եք սպորտային սարքավորումներ վաճառելու

վրա և հաջողություններ եք գրանցել: Ես լսել եմ, որ դուք սկսում եք նոր, բարելավված սպրանքներ վաճառել: Ես ցանկանում եմ աշխատել հաջողակ և աճող ընկերության հետ: Ես նաև ինչ-որ չափով տեղյակ եմ սպորտից և մարզանքից:

Վերջին տարում ես կանավոր աշխատել եմ որպես ֆուտբոլի մարզիչ և օգնել եմ թիմին բարձրացնել տոկոսությունն ու մարզական արդյունքները: Ես հասկանում եմ, թե դուք ինչ ձեռքբերումներ եք ցանկանում ունենալ, և ես կարող եմ օգնել ձեզ այդ հարցում:

**Վերադարձեք էջ 57-ին**

**Բացասական դրականի փոխելը**

1. Կիսվեք մի թույլությամբ, որը ընդհանուր է շատ մարդկանց համար:
2. Մասնավորապես նկարագրեք, թե ինչպես եք դուք հաղթահարում այդ թույլությունը:
3. Տեղեկություն ավելացրեք ձեր տպավորիչ արտահայտություններից:

**Տպավորիչ արտահայտություն**

1. Բացահայտեք հմտություն կամ ուժեղ կողմ
2. Առանձնահատուկ օրինակ
3. Արդյունք
4. Համապատասխանեցնել կարիքներին



## ՊԱՐԱՊԵՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Նախքան մեր հաջորդ ժողովը, ձեր վարժության ընկերոջ, ընտանիքի կամ ընկերների հետ պարապեք պատասխանել հարցերին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՐՑԵՐ	ԻՆՉ Է ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԿԱՐՈՂԸ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԻՄԱՆԱԼ ԶԵՐ ՄԱՍԻՆ	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ
Ի՞նչ կարող եք ինձ պատմել ձեր մասին:	Կարողանո՞ւմ է նա լավ խոսել: Արդյո՞ք նա որակավորված է:	«Իմ մասին 30 վայրկյանում»
Որո՞նք են ձեր ուժեղ կողմերը:	Արդյո՞ք նրա փորձը համապատասխանում է մեր կարիքներին:	Տպավորիչ արտահայտություններ
Որո՞նք են ձեր թույլ կողմերը:	Արդյո՞ք նա ազնիվ է: Արդյո՞ք նա առաջադիմել է:	Բացասականը փոխեք դրականով
Ինչո՞ւ եք ցանկանում աշխատել մեզ համար:	Արդյո՞ք նա հետազոտություն կատարել է: Արդյո՞ք նա ունի՞ նպատակներ:	Տպավորիչ արտահայտություն
Նկարագրեք ձեր վերջին մեծ սխալը:	Արդյո՞ք նրա սխալի պատճառը տրամաբանական է: Նա դրանից դասեր քաղե՞լ է:	Բացասականը փոխեք դրականով
Ի՞նչ կարծիք ունեք ձեր նախկին ղեկավարի մասին:	Արդյո՞ք նա հարգում է ղեկավարներին:	Տպավորիչ արտահայտություն
Ինչպե՞ս եք արձագանքում ճնշմանը:	Արդյո՞ք նա զբաղվում է խնդիրների լուծմամբ:	Տպավորիչ արտահայտություն
Երբևէ ձեր արտահայտած գաղափարները մերժվե՞լ են:	Արդյո՞ք նա հաստատակամ է: Արդյո՞ք նա դրական է:	Բացասականը փոխեք դրականով
Որո՞նք են ձեր կարիերայի նպատակները:	Նա կօգնի՞ մեզ հաջողություն գրանցել: Արդյո՞ք նա կենտրոնացած է:	«Իմ մասին 30 վայրկյանում»
Ի՞նչ աշխատավարձ եք ակնկալում ստանալ:	Արդյո՞ք նրա ակնկալիքները խելամիտ են:	Հարցով պատասխանեք
Ինձ հարցեր ունե՞ք:	Արդյո՞ք նա հոգատար է: Արդյո՞ք նա հետաքրքրված է:	Հարցով պատասխանեք

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ԵՍ ԲԱՆԱԿՑՈՒՄ ԻՄ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԲԱՎԱՐԱՐՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ: (ՈՉ ՊԱՐՏԱԴԻՐ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ)

- Կարդացեք.** Երբ գործատուն որոշում է մեզ աշխատանք տալ, մենք գուցե քննարկենք մեր աշխատանքային պայմանագիրը: Այն ընդգրկում է՝ մեր աշխատավարձը, աշխատանքային ժամերը, աշխատանքային պայմանները և այլն: Նպատակն է լինել բաց, ազնիվ և որ բոլորի համար արդյունքներն ընդունելի լինեն:
- Քննարկեք.** Ինչո՞ւ է բանակցելը դժվար: Ինչո՞ւ եք դուք բանակցում:
- Կարդացեք.** Ահա հինգ քայլեր, որ մենք կարող ենք կատարել այսպիսի քննարկմանը պատրաստվելու համար:
- Նախօրոք ճշտել մեր կարիքները:
  - Որոշել, թե որոնք են ամենակարևոր և նվազագույն ընդունելի պայմանները:
  - Տեղեկանալ, թե գործատուն ինչ կարող է առաջարկել և ինչն է կարևոր նրա համար:
  - Փնտրել ոգեշնչում, մտածել ուղիներ, որոնց դեպքում երկուսս էլ՝ մենք և գործատուն կշահենք:
  - Այս քննարկումը պարապեք ընտանիքի անդամի կամ ընկերոջ հետ:
- Կիրառեք.** Օգտագործեք հետևյալ աղյուսակը ձեր աշխատանքի հետ կապված կարիքները դիտարկելու համար:

Օրինակները տրված են մոխրագույնով, պարզապես գրեք դրանց վրա:

1. Համարակալեք յուրաքանչյուր կարիքը ըստ ձեր առաջնահերթության: Օգտագործեք «1»-ը որպես զերակա առաջնահերթություն:
2. Ձեր կարծիքով, որն է նվազագույն մակարդակը յուրաքանչյուր կարիքի համար:
3. Քննարկեք դրանք ձեր ամուսնու կամ ընտանիքի հետ: Թող նրանք էլ արտահայտեն իրենց առաջնահերթությունները և միասին որոշեք նվազագույն մակարդակները: Եթե կան տարբերություններ, ապա եկեք համաձայնության:

ԻՄ ԿԱՐԻՔՆԵՐԸ (ավելացրեք մյուս կարիքները)	ԻՄ ԱՐԱՋՆԱՆԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (համարակալեք յուրաքանչյուրը, 1-ը բարձրագույնն է)	ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՌԱՋԱՆԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ (նրանք համարակալում են յուրաքանչյուրը, 1-ը բարձրագույնն է)	ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՎ ԸՆԴՈՒՆԵԼԻ (յուրաքանչյուր կարիքի նվազագույն սահմանը)	ԳՈՐԾԱՏՈՒԻ ԱՌԱՋՆԱՆԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (նրանց ցանկությունները/կարիքները ըստ առաջնահերթությունների, եթե դուք տեղյակ եք)
Վճարում	1	2	3000/ամիս	Վճարման միջակայքը 2200-3200
Աշխատանքային ժամեր	5	1	Կիրակին ոչ աշխատանքային	Մնիրաժեշտության դեպքում աշխատել հանգստյան օրերին
Մաքուր միջավայր	6	5	Սուսն փնտրելու քիմիկատների	Քիմիկատներ, որոնք արագանում են աշխատանքը
Աշխատակիցներ	3	6	Ազնիվ	Ճշտապահ, աշխատասեր
Հնարավորություն	2	4	90-օրյա առաջխաղացում	Թիմային աշխատող
Առողջապահություն	4	3	-----	

**Քննարկեք.** Ի՞նչ սովորեցիք այս վարժությունից:

**Կիրառեք.** Այժմ մտածեք, թե ինչպիսի գործատուի համար կցանկանայիք աշխատել: Որո՞նք են նրանց առաջնահերթությունները: Կարո՞ղ եք պարզել, թե ինչն է առավել կարևոր նրանց համար: Գրեք ձեր գործատուի առաջնահերթությունները վերևում տրված աղյուսակում, նախքան ձեր հարցազրույցը:

**Քննարկեք.** Ձեր փորձի վրա հիմնվելով, ինչպե՞ս կարող եք ձեր կարիքները համապատասխանեցնել գործատուի ցանկություններին:

- Կիրառեք.** Ընտանիքի անդամի կամ ընկերոջ հետ դերերով կատարեք հետևյալը:
1. Կարդացեք հետևյալ իրավիճակը. Իր առաջին հարցազրույցի ժամանակ Կոֆին տեղեկացավ, որ այդ պաշտոնի համար աշխատավարձի միջակայքը կազմում էր օրական 95-105: Այժմ նա ներկայացել է իր երկրորդ հարցազրույցին: Գործատուն առաջարկում է աշխատանք օրական 96-ով: Կոֆին ամենաքիչը հարկավոր է օրական 100: Նա կարող էր նաև օգտվել տրանսպորտային միջոցից և որոշել է չաշխատել կիրակի օրերին:
  2. Ձեզանից մեկը թող վերցնի գործատուի դերը, իսկ մյուսը՝ Կոֆիի դերը: Գործատուն սկսում է՝ Կոֆիին առաջարկելով աշխատանք օրական 96-ով: Նա խնդրում է նրան ամսվա մեջ երկու կիրակի աշխատել: Կոֆին պետք է փորձեր բանակցել՝ հանգելով մի որոշման, որը ընդունելի կլիներ երկու կողմին:
  3. Այնուհետև փոխվեք դերերով և փորձեք կրկին:

**Քննարկեք.** Ինչպե՞ս ընթացավ այն: Դուք հարցերին հարցերով պատասխանեցի՞ք: Դուք մտածո՞ւմ էիք բանակցել այլ արտոնությունների համար:

**Կարդացեք.** Միա մի տարբերակ, թե ինչպես կարող էր Կոֆիի բանակցությունն ընթանալ: Եկեք կարդանք այս աղյուսակը: Ո՞վ է հաղթում: Նրանք լուծեցի՞ն կիրակի օրը աշխատելու հարցը:

**Խորհուրդ.**

*Եթե առաջարկը շատ ցածր է, փորձեք լռել: Նախքան պատասխանելը 10 վայրկյան սպասեք: Հաճախ բանակցող կողմն ավելի լավ առաջարկ կանի լռությունը խախտելու համար:*

ՆԱԽՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ	ԿԱՐԵՎՈՐ Է ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ	ԿԱՐԵՎՈՐ Է ԿՈՖԻԻ ՀԱՄԱՐ	ԻՆՉ Է ԲԱՆԱԿՑՈՒՄ ԿՈՖԻՆ	ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԱՌԱՋԱՐԿ
Աշխատավարձ՝ օրական 96	Ընկերությունը կարող է վճարել օրական մինչև 98 Կոֆիի փորձառության մակարդակն ունեցողին:	Կոֆիին հարկավոր է օրական 100: 100-ից 3-ը նա վճարում է տրանսպորտին՝ աշխատանքի վայր հասնելու համար:	Կոֆին խնդրում է ընկերությանը վճարել օրական 97 և վճարել իր ավտոբուսի ուղեվարձը, որն օրական կազմում է 3:	Ընկերությունը համաձայնվում է Կոֆիին վճարել օրական 97 և վճարել նրա ավտոբուսի ուղեվարձը: Ընկերությունը պայմանավորվածություն ունի ավտոբուսի ընկերության հետ: Նրանք ընդամենը վճարում են օրական 1 Կոֆիի ուղեվարձի համար:

**Քննարկեք.** Իսկ եթե դուք չեք կարողանում հանգել համաձայնությա՞ն: Արդյոք դուք պետք է հրաժարվեք այդ հնարավորությունից, եթե այն չի բավարարում ձեր պահանջները:

**Կարդացեք.** Ձեր բանակցելու հմտությունները զարգացնելով՝ դուք կարող եք հաճախ հասնել համաձայնության, որը ընդունելի կլինի բոլորի համար: Ինչպիսի համաձայնության էլ որ դուք զաք, խնդրեք նրանց գրավոր հաստատել այն որոշակի ամսաթվով: Դա պաշտպանում է բոլորին:

## ԴԻՄՈՒՄ-ԹԵՐԹԻԿԻ ՕՐԻՆԱԿ

### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԻՄՈՒՄ-ԹԵՐԹԻԿ

Անուն. Պուլգարի Ամիթ Անսաթիվ. Ղեկտնմբերի 6, 2013  
 Ազգանուն Անուն

Հասցե. 1234 ցանկացած փողոց, Հայրենաբաղ

Հեռախոս. 1234567890 Է-փոստ. Amit1234@emailcompany.com

Պաշտոն. Անթրոպոլոգ Ցանկալի աշխատավարձ. 70000 Հասանելիության ամսաթիվ. Հունվար 2014

Երբևէ աշխատե՞լ եք այս ընկերության համար:  Այո  Ոչ Անսաթիվ. \_\_\_\_\_

Եթե այո, ե՞րբ: \_\_\_\_\_

Երբևէ դատապարտված եղե՞լ եք որևէ հանցագործության համար:  Այո  Ոչ Անսաթիվ. \_\_\_\_\_

Եթե այո՝ բացատրեք. \_\_\_\_\_

### Կրթություն

Քոլեջ. Որևէ տեխնիկական քոլեջ Հասցե՝ 4321 ցանկացած փողոց, Հայրենաբաղ

Ուսումնառման տարի. 2011 Ուղղված է. 2013 Ավարտե՞լ եք:  Այո  Ոչ Վկայական. Վկայական

Ավագ դպրոց. Որևէ հանրային դպրոց Հասցե. 1234 ցանկացած փողոց, Հայրենաբաղ

Ուսումնառման տարի. 2002 Ուղղված է. 2007 Ավարտե՞լ եք:  Այո  Ոչ Աստիճան. Վկայական

### Երաշխավորագրեր

Լրիվ անունը. Վիվեն Սինկիս Ով է հանդիսանում. Ուսուցիչ Հեռախոս. 1234567891

Լրիվ անունը. Շրապի Պատել Ով է հանդիսանում. Տնօրեն Հեռախոս. 1234567892

Լրիվ անունը. Կամիլա Ռամ Ով է հանդիսանում. Աշխատակից Հեռախոս. 1234567893

**Նախորդ աշխատանքները**

Պաշտոնը. Ղեկավար Նախնական աշխատավարձը. 40000 Վերջնական աշխատավարձը. 45000

Պարտականությունները. Վերահսկելի գծի աշխատողներին

Ում կողմից. 2010 Ուղղված է. 2011 Հեռանալու պատճառը. Շարունակելի ուսումը

Ընկերություն. Որևէ ընկերություն Հեռախոս. 1234567894

*Աշխատանքի*

Պաշտոնը. Վերապատրաստող Նախնական աշխատավարձը. 30000 Վերջնական աշխատավարձը. 32000

Պարտականությունները. Վերապատրաստելի գծի աշխատողներին

Ում կողմից. 2008 Ուղղված է. 2010 Հեռանալու պատճառը. Նոր աշխատանքը

Ընկերություն. Այլ ընկերություն Հեռախոս. 1234567895

Ես հաստատում եմ, որ իմ պատասխանները ճշմարիտ և ամբողջական են, իմ իմացության չափով:  
Աշխատանքի ընդունվելու դեպքում ես հասկանում եմ, որ իմ դիմում-թերթիկի վրա կամ հարցազրույցի  
ժամանակ տրված սխալ կամ ապակողմնորոշիչ տեղեկությունը կարող է հանգեցնել աշխատանքից ինձ  
ազատելուն:

Ստորագրություն. Անիթ Պուլպազարի Ամսաթիվ. Ղեկտեմբերի 6, 2013

## ՌԵԶՅՈՒՄԵԻ ՕՐԻՆԱԿ

### Վիլյամ Օվուսու

Հասցե. 1234 որևէ փողոց, Ակկրա, Գանա

Հեռ. 1234567896

Է-փոստ. owusu1234@emailcompany.com

### Անձնական տեղեկություն

Լրիվ անուն	Վիլյամ Օվուսու
Սեռը	Արական
Ծննդյան թիվը	Ապրիլի 16, 1980
Ծննդավայր	Կումասի, Գանա
Ամուսնական կարգավիճակը	Ամուրի

### Կրթությունը

2007–2011	Վկայական Որևէ Տեխնիկական ինստիտուտից
2000	Ավարտել եմ Որևէ ավագ դպրոց

### Աշխատանքային փորձ

2004-2006	աշխատել եմ որպես լիաժամկետ միսիոներ
2007-2011	աշխատել եմ որպես թիմի ղեկավար որևէ ռեստորանում
2011–	աշխատում եմ Որևէ Լիմուզին տրամադրող ընկերությունում՝ որպես պատվերների ամրագրման գործակալ

### Ուսումնական դասընթացներ

2009	Ավարտել է Էլեկտրոնային աղյուսակների դասընթաց
2013	Ավարտել եմ հաճախորդների սպասարկման դասընթաց
2012	Ավարտել եմ փոքր բիզնեսի դասընթաց

### Ունեմ համակարգչի հետ աշխատելու փորձ

2003	Էլեկտրոնային աղյուսակներ, տվյալների բազաներ, համացանց/ Է-փոստ
------	---------------------------------------------------------------

### Լեզուներ

Աշանթի թվի	Մայրենի լեզու
Անգլերեն	Լավ

### Հետաքրքրություն և հոբբիներ

Գրքեր, սպորտ, համացանց

### Երաշխավորագրեր

1. Սանդրա Օսեյ	Հեռ. 1234567897
2. Էրիկ Կատոկա	Հեռ. 1234567898







# 5

*Ինչպե՞ս կարող  
եմ արագացնել իմ  
աշխատանքի որոնումը:*

---

Աշխատանքի իմ որոնումը

# ՎԱՐՈՂՆԵՐԻ ՇԱՄԱՐ

## Ժողովի օրը.

- Ձանգահարեք կամ հաղորդագրություն ուղարկեք խմբի բոլոր անդամներին: Խնդրեք նրանց 10 րոպե շուտ գալ՝ իրենց պարտավորությունների մասին զեկուցելու համար:
- Պատրաստեք ժողովի նյութերը:

## Ժողովից 30 րոպե առաջ.

- Աթոռները դասավորեք սեղանի շուրջն այնպես, որ բոլորը մոտ լինեն:
- Գրատախտակին գծեք այս պարտավորության աղյուսակը:

Խմբի անդամի անունը	Կապ եմ հաստատել ծանոթների շրջանակից առնվազն 40 մարդու հետ (Գրել #)	Հանդիպել եմ առնվազն 10 հավանական գործատուների (Գրել #)	Ջարգացրել եմ հարցազրույցին մասնակցելու և դիմելու իմ հմտությունները (Այո/Ոչ)	Պարապել եմ Հիմքի սկզբունքը և ուսուցանել իմ ընտանիքին (Այո/Ոչ)	Ավելացրել եմ խնայողությունների (Այո/Ոչ)	Ջնկուցել եմ վարժության ընկերոջը (Այո/Ոչ)
Գլորիա	52	14	Կ	Կ	Կ	Կ

## Ժողովից 10 րոպե առաջ.

- Ջերմորեն ողջունեք մարդկանց, երբ նրանք ներս են մտնում:
- Երբ խմբի անդամները ներս մտնեն, խնդրեք նրանց լրացնել գրատախտակի պարտավորության աղյուսակը:
- Ժամապահ նշանակեք:

## Երբ սկսում եք՝

- Խնդրեք բոլորին անջատել հեռախոսները և այլ սարքերը:
- Բացման աղոթք ասել (և ցանկության դեպքում՝ օրհներգ կատարել):
- Ուշացողներին ցածր ձայնով խնդրեք անջատել իրենց հեռախոսները և լրացնել պարտավորության աղյուսակը մինչ խումբը շարունակում է քննարկումը:
- 20 րոպե ժամանակ պահեք *Իմ հիմքը* գրքույկի համար:
- Լրացրեք սկզբունք 5-ը՝ *Իմ հիմքում*: Այնուհետև վերադարձեք այս աշխատանքային տետրին և շարունակեք կարդալ հաջորդ էջը:



# ԶԵԿՈՒՑԵԼ

## ՊԱՇԵ՛Լ ԵՄ ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

- Ժամանակ.** 20 րոպե ժամանակ պահեք Ձեկուցել բաժնի համար:
- Կիրառեք.** Եկեք զեկուցենք մեր պարտավորությունների մասին: Ովքեր պահել են իրենց բոլոր պարտավորությունները, խնդրում եմ կանգնել: (Ծափահարել:)
- Կարդացեք.** Այժմ բոլորդ կանգնեք: Եկեք միասին կրկնենք մեր թեմայի խոսքերը.

**«Եվ իմ նպատակն է՝ ապահովել իմ սրբերին. քանզի բոլոր բաներն իմն են»:**

*Վարդապետություն և Ուխտեր 104.15*

**Առ Տերը հավատքով մենք միասին աշխատում ենք դառնալ ինքնապահով:**

- Կարդացեք.** Եկեք նստենք:
- Քննարկեք.** Պարապե՞լ էք լավ պատասխաններ տալ հարցազրույցի հիմնական հարցերին: Որևէ մեկը օգտագործե՞լ է դրանք հարցազրույցի ժամանակ: Ի՞նչ սովորեցիք ձեր ընտանիքի հետ բանակցելու մտքերը քննարկելու արդյունքում: Պարապեցի՞ք ինչպես բանակցել: Ունե՞ք մտահոգություններ:



# ՍՈՎՈՐԵԼ

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ԱՐԱԳԱՑՆԵԼ ԻՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՆՈՒՄԸ:

**Ժամանակ.** 60 րոպե ժամանակ պահեք Սովորել բաժնի համար:

**Կարդացեք.** Մենք ձեռք ենք բերել հզոր գործիքներ, որոնք կօգնեն մեր աշխատանքի որոնման հարցում.

- «Իմ մասին 30 վայրկյանում»
- Տպավորիչ արտահայտություններ
- Բացասականը փոխել դրականի
- Հարցերին հարցերով պատասխանել
- Պատասխանել հարցազրուցի ընդհանուր հարցերին
- Դիմում-թերթիկներ լրացնել
- Բարելավել արտաքին տեսքը և վերաբերմունքը

Այս ժողովի ընթացքում մենք կսովորենք՝ ինչպես միասին օգտագործել բոլոր այդ գործիքները, որոնք կօգնեն արագացնել մեր աշխատանքի որոնումը:

**Ձևարկեք.** Ինչպե՞ս եք զգում այժմ ունենալով այս բոլոր գործիքները, որոնք կօգնեն աշխատանքի որոնման հարցում:

**Կարդացեք. ՇԱԲԱԹՎԱ ՀԱՐՑ—Ինչպե՞ս կարող եմ արագացնել իմ աշխատանքի որոնումը:**

**ՇԱԲԱԹՎԱ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ—Ձգալիորեն ավելացնել իմ ռեսուրսները, կապերը և անձնական հանդիպումները:**

Մեր խմբից մի քանի հոգի գուցե արդեն կատարում են Արագացված աշխատանքի որոնումը: Այս ժողովին մենք բոլորս կարագացնենք մեր աշխատանքի որոնումը:

## ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՆՈՒՄ

- Կարդացեք.** Այժմ ժամանակն է, որպեսզի օգտագործենք այդ բոլոր գործիքները և արագացնենք աշխատանք գտնելու հաջողությունը:
- Դիտեք.** «Ռաֆայել. աշխատանք 6 օրում»: (Տեսանյութ չկա՞: Կարդացեք «Աշխատանքի ամենօրյա որոնում. Ալբայի պատմությունը», էջ 88:)
- Քննարկեք.** Ի՞նչն օգնեց Ռաֆայելին կամ Ալբային հաջողության հասնել Աշխատանքի արագացված որոնման հարցում:
- Կիրառեք.** Աշխատանքի արագացված որոնումը աշխատանք փնտրող ամենօրյա հզոր ռազմավարություն է: Որոշ տարածքներում այս մոտեցումը նվազեցրել է աշխատանք գտնելու ժամանակը 200-ից մինչև 20 օր: Անհրաժեշտ է քրտնաջան աշխատանք կատարել՝ օրական հատկացնելով երկուսից չորս ժամ կամ ավելի: Դրա համար անհրաժեշտ է օրական երեք վարժություն կատարել.
1. Գտեք 15 նոր ռեսուրս:
  2. Այդ ռեսուրսներից 10 կապեր հաստատեք:
  3. 2 անհատական հանդիպում կամ հարցազրույց անցկացրեք:

**Դիտեք.** «Ամենօրյա աշխատանքի որոնում. Ռեսուրսներ» (Չկա՞ տեսանյութ, կարդացեք էջ 88:)

**Կիրառեք.** Հենց հիմա սկսեք լրացնել հաջորդ էջի աղյուսակը՝ առաջին սյունակում գրելով որքան հնարավոր է շատ ռեսուրսներ: Դրանք մարդիկ, վայրեր և ձեզ համար օգտակար տեղեկություն տրամադրող աղբյուրներն են: Տրված են մի քանի օրինակներ: Շարունակեք լրացնել մինչև մեր հաջորդ ժողովը՝ օգտագործելով 91 էջի ձևաթուղթը: Դատարկ ձևաթղթի ավելի շատ օրինակներ տպեք, երբ շարունակ ավելացնում եք ռեսուրսների ցանկը:

**Դիտեք.** «Ամենօրյա աշխատանքի որոնում. Կապեր» (Չկա՞ տեսանյութ, կարդացեք էջ 89:)

**Կիրառեք.** Այժմ հաջորդ էջին գրեք որքան հնարավոր է շատ մարդկանց անուններ, ում հետ գուցե կապ կհաստատեք մինչև մեր հաջորդ ժողովը: Հիշեք, որ չպիտի շփոթվեք: Աշխատեք օրական 10 մարդ գտնել:

**Դիտեք.** «Ամենօրյա աշխատանքի որոնում. Հանդիպումներ» (Չկա՞ տեսանյութ, Կարդացեք էջ 89-ը:)

**Կարդացեք.** Այժմ հաջորդ էջին գրեք որքան հնարավոր է շատ մարդկանց անուններ, ում հետ գուցե հանդիպեք նախքան մեր հաջորդ ժողովը: Մտածեք, թե երբ և որտեղ կարող եք հանդիպել նրանց: Հիշեք, որ յուրաքանչյուր հանդիպման ժամանակ 30 վայրկյանում ներկայացնեք ձեզ:

**Դիտեք.** «Ամենօրյա աշխատանքի որոնում. Բոլորը միացնելով իրար» (Չկա՞ տեսանյութ, Կարդացեք էջ 90-ը:)

**Կիրառեք.** Այժմ նայեք հաջորդ էջի աղյուսակին: Ի՞նչ կանեք դուք առաջինը, երկրորդը, երրորդը: Ամեն օր ռեսուրսներ գտնելու, կապեր հաստատելու և անհատական հանդիպումներ ունենալու ծրագիր կազմեք: Որոշեք, թե երբ կարող եք այդ ամենն անել և խնդրեք ձեր ընտանիքին կամ վարժության ընկերոջն օգնել ձեզ: Աղոթեք Տիրոջ առաջնորդության համար:

**ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ, ԿԱՊԵՐԻ ԵՎ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻ  
ՁԵՎԱԹՈՒՂԹ**

ՌԵՍՈՒՐՍՆԵՐ (ցուցակ կազմեք)	ԿԱՊԵՐ (հեռախոս, Է-փոստ)	ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ (դեմատղեմ)
Համացանցի կայքեր	Քվորումի կամ Սփոփող Միության անդամներ	Հավանական գործատուներ
Լրագրեր	Մարդիկ, որոնց հետ աշխատել եք	Տնային ուսուցիչներ
Աշխատանքի տեղավորման ծառայություններ	Ուսուցիչներ	Եկեղեցու անդամներ
Ինքնապահովման կենտրոն	Մարդիկ, ում դուք հանդիպում եք խանութում	

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԱԳԱՑՎԱԾ ՈՐՈՆՄԱՆԸ ՇԵՏԿԵԼՈՒ ԶԵՎԱԹՈՒՂԹ

**Կարդացեք.** Տրված է աշխատանքի արագացված որոնմանը հետևելու ձևաթղթի օրինակը: Հետամուտ եղեք ձեր ռեսուրսներին, կապերին և հանդիպումներին՝ օգտագործելով էջ 92-ի վրա տրված ձևաթուղթը: Բազմացրեք օրինակներ այնքան շաբաթների համար, որքան անհրաժեշտ է:  
(Նշում կատարեք վանդակներում և գրառումներ ավելացրեք: Ցույց տվեք օրվա ընդհանուրը:)

### ՕՐ 1

Ռեսուրսներ.                 Օրվա ընդհանուրը 15

Կապեր.             Օրվա ընդհանուրը 10

Հարցազրույցներ.     Օրվա ընդհանուրը 2

Գրառումներ.

*Գանձապահի աշխատանքը զբաղեցված էր: Նրանք ասացին, որ փորձեմ շուկայում: Նրանք գուցե թափուր աշխատատեղ ունեն:*

### ՕՐ 2

Ռեսուրսներ.                 Օրվա ընդհանուրը 15

Կապեր.            Օրվա ընդհանուրը 8

Հարցազրույցներ.     Օրվա ընդհանուրը 2

Գրառումներ.

*Խոսեն չկարողացավ հանդիպել այսօր: Նա ասաց, որ հինգշաբթի գամ:*

### ՕՐ 3

Ռեսուրսներ.                 Օրվա ընդհանուրը 14

Կապեր.             Օրվա ընդհանուրը 10

Հարցազրույցներ.     Օրվա ընդհանուրը 3

Գրառումներ.

*Շուկայում լրացրեցի Մարիայի տված աշխատանքի դիմում-թերթիկը:*





# ԽՈՐՀԵԼ

## Ի՞նչ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆԵԼ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՇԱՄԱՐ:

**Ժամանակ.** 10 րոպե ժամանակ պահեք Խորհել բաժնի համար:

**Կիրառեք.** Կարդացեք աջ կողմում տրված մեջբերումը կամ մեկ այլ սուրբ գրության հատված: Հանգիստ խորհեք ձեր սովորածի շուրջ: Գրեք ձեր տպավորությունները ներքևում:

---

---

---

---

---

---

**Քննարկեք.** Ինչ-որ մեկը ցանկանո՞ւմ է կիսվել իր մտքերով:

*«Փնտրեք ջանասիրաբար, աղոթեք անդադար և եղեք հավատացող, և բոլոր բաները միաժամանակ կգործեն ձեր բարիքի համար, եթե դուք ուղիղ քայլեք»:*

**ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՆՏԵՐ 90.24**



# ՊԱՐՏԱՎՈՐՎԵԼ

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՕՐ-ՕՐԻ ԱՌԱՋԱԴԻՄԵԼ:

- Ժամանակ.** 10 բույն ժամանակ պահեք Պարտավորվել բաժնի համար:
- Կիրառեք.** Ընտրեք ձեր վարժության ընկերոջը: Որոշեք երբ և ինչպես դուք կապ կպահեք միմյանց հետ:

*Վարժության ընկերոջ անունը*

*Կոնտակտային տվյալները*

**Բարձրաձայն կարդացեք յուրաքանչյուր պարտավորությունը ձեր վարժության ընկերոջը: Խոստացեք պահել ձեր ստանձնած պարտավորությունները: Ստորագրեք ներքևում:**

### ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Ես կգտնեմ օրական առնվազն 15 նոր ռեսուրս (շաբաթական առնվազն 75 ռեսուրս):**

Շրջանակի մեջ առեք ձեր նպատակը.      75      80      85

**Ես օրական առնվազն 10 կապ կհաստատեմ (շաբաթական առնվազն 50 կապ):**

(Դրանց թվում պետք է լինեն այն մարդիկ, ում հետ դուք նախկինում կապ եք հաստատել:)

Շրջանակի մեջ առեք ձեր նպատակը.      50      55      60

**Ես կանցկացնեմ օրական առնվազն 2 անհատական հանդիպում հավանական գործատուների և մյուսների հետ (այս շաբաթ առնվազն 10 հանդիպում):**

Շրջանակի մեջ առեք ձեր նպատակը.      10      12      14

Ես կպարապեմ Իմ հիմքը գրքույկի այսօրվա սկզբունքը և կուսուցանեմ իմ ընտանիքին:

Ես կավելացնեմ իմ խնայողություններին՝ թեկուզ փոքրիկ գումար:

Ես կգեկուցեմ իմ վարժության ընկերոջը:

*Իմ ստորագրությունը*

*Վարժության ընկերոջ ստորագրությունը*

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ԶԵԿՈՒՑԵԼ ԻՄ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ:

**Կիրառեք.** Նախքան հաջորդ ժողովը, օգտագործեք այս պարտավորության դիագրամը՝ ձեր առաջընթացը գրանցելու համար: Մտորև տրված վանդակներում գրեք «Այո», «Ոչ» կամ քանի անգամ եք պահել ստանձնած պարտավորությունը:

Ռեսուրսներ. գտել եմ առնվազն 15/օրական, 75/շաբաթական (Գրեք #)	Կապեր. հաստատել եմ առնվազն 10/օրական, 50/շաբաթական (Գրեք #)	Սնձնական հանդիպումներ. ունեցել եմ առնվազն 2/օրական, 10/շաբաթական (Գրեք #)	Պարապել եմ <b>Հիմքի</b> սկզբունքը և ուսուցանել իմ ընտանիքին (Այո/Ոչ)	Ավելացրել եմ խնայողություններին (Այո/Ոչ)	Զննկուցել եմ վարժության ընկերոջը (Այո/Ոչ)

**Կարդացեք.** Ընտրեք որևէ մեկին, որպեսզի հաջորդ ժողովին վարի Իմ հիմքը թեման: (Զգիտե՞ք ինչպես վարել *Իմ հիմքը* թեման: Կարդացեք էջ 13 և դիմացի շապիկի ներսի էջը:)

Խնդրեք որևէ մեկին ասել փակման աղոթքը:

### Դիտողությունները խրախուսվում են

Խնդրում ենք ուղարկել ձեր մտքերը, դիտողությունները, առաջարկները և փորձառությունները [srsfeed-back@ldschurch.org](mailto:srsfeed-back@ldschurch.org):

# ՌԵՏՈՒՐԱՆԵՐ

## ԱՄԵՆՕՐՅԱ ԱՃԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՆՈՒՄ. ԱԼԲԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ընտրեք մեկին, որ կարդա հետևյալը:

Գործազրկության արտաբերում ես հայտնվել էի անհույս վիճակում, և միայն իմ Երկնային Հայրը կօգնեի ինձ լուծել իմ խնդիրը: Նա ոգեշնչել էր ինչ-որ մեկին գալ և հրավիրել ինձ այցելելու ինքնապահովման կենտրոն, որտեղ նրանք սկսել էին աշխատանքի որոնման ծրագիրը, որը կոչվում էր Աշխատանքի արագացված որոնում: Դա արագ աշխատանք գտնելու ռազմավարություն է: Ինչպիսի՞ օրինություն:

Դա ինձ օգնեց գտնել ռեսուրսներ, որի շնորհիվ մշտական աշխատանք գտա պետական կարևոր կազմակերպությունում: Ինձ ընդունեցին, որպեսզի դեկալատեմ կապի բաժինը: Ես չեմ կասկածում, որ դա հնարավոր դարձավ իմ աղոթքների և Աստծո պատասխանների շնորհիվ:

**Վերադարձեք էջ 81-ին**

## ԱՄԵՆՕՐՅԱ ԱՃԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՆՈՒՄ. ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Հերթով կարդացեք հետևյալը:

Մտք գործությունների միջոցով մեզ ուսուցանել են, որ «նարդիկ պետք է ջերմեռանդ ներգրավված լինեն բարի գործերի մեջ և շատ բաներ անեն իրենց իսկ ազատ կամքով: . . . Քանզի գրություն կա նրանց մեջ, որով նրանք գործակալն են իրենց կամքի»: Եվ այս պատվիրանը գալիս է խոստումով. «Որքան որ նարդիկ բարիք գործեն, նրանք ոչ մի դեպքում չեն կորցնի իրենց վարձքը» (Վե՛ն 58.27–28):

Արդյունավետ աշխատանք որոնողները հասկանում են, որ «գրություն կա նրանց մեջ», և Աստված կօգնի նրանց, երբ նրանք «ջերմեռանդ ներգրավված» դառնան: Հատկապես մենք կքննարկենք մեկ արդարացված աշխատանք փնտրելու ռազմավարություն երեք մասերով: Դա կոչվում է Աշխատանքի արագացված որոնում:

Առաջինը, հաջողակ աշխատանք փնտրողները սովորում են ամեն օր գտնել 15 նոր ռեսուրս: Երկրորդ, նրանք ամեն օր 10 կապեր են հաստատում: Եվ երրորդ, նրանք անցկացնում են առնվազն 2 դեմատրեմ հանդիպումներ կամ հարցազրույցներ:

Նախ, Աշխատանքի արագացված որոնման մոտեցումը կարող է ճնշող թվալ: Քննարկելով յուրաքանչյուր տարրը, դուք կտեսնեք, որ այն իրոք հնարավոր է և հաջողություն բերող:

Եկեք սկսենք ռեսուրսներից: Ի՞նչ է ռեսուրսը: Ռեսուրսը մարդն է, վայրը կամ նյութը, որն օգնում է աշխատանք փնտրողին գտնել ճիշտ հնարավորությունը:

Մարդիկ կարող են ընդգրկել ընկերներ և ընտանիք, Եկեղեցու անդամներ և դեկալատներ, գործատուներ կամ գործընկերներ, դպրոցի ուսուցիչներ և կարիերայի խորհրդատուներ, մարդիկ խանութում, գրեթե բոլորին, ովքեր կարող են ձեզ աշխատանքի վերաբերյալ օգտակար տեղեկատվություն և լրացուցիչ ռեսուրսներ տրամադրել:

Վարդեր կարող են հանդիսանալ առևտրի պալատները, զբաղվածության տեղական նախարարությունները և քաղաքացիական կամ մասնագիտական ընկերակցությունները: Այդ վայրերից յուրաքանչյուրն օգտակար տեղեկություններ է տրամադրում:

Եվ ձեր որոնումը ընդլայնող միջոցներ են հանդիսանում գործարար և հեռախոսային տեղեկագրքերը, ընկերությունների վեբ-ջեյրը, համացանցը, առևտրային ամսագրերն ու լրագրերը, օրաթերթերը և այլ լրատվամիջոցները:

Ամեն օր կազմեք առնվազն արդյալի 15 ռեսուրսների ցանկ:

**Վերադարձեք էջ 82-ին**

## ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՆՈՒՄ. ԿԱՊԵՐ

Հերթով կարդացեք հետևյալը:

Այժմ եկե՛ք գրուցենք կապերի մասին: Կապը միայն ռեզյումե ուղարկելը կամ աշխատանքային դիմում-թերթիկ լրացնելը չէ: Բոլոր ռեսուրսներից, որոնք դուք բացահայտեցիք, սրբազան պետք է 10 աշխատանքային կապեր ստեղծե՛ք:

Կապերը աշխատանքի հետ կապված մարդկային փոխհարաբերությունն է՝ աշխատանքի համար դիմելը, ռեզյումե կամ շնորհակալական գրություն ուղարկելը, ընկերներին, ընտանիքին և Եկեղեցու անդամներին տեղեկացնելը, որ աշխատանք եք փնտրում, կարելի է՝ տեքստային

հատորդագրություններով կամ է-փոստով: Դուք նաև կարող եք գործակցել մյուս ծանոթների, և, իհարկե, հավանական գործատուների հետ: Տարբեր հնարավորություններ փնտրե՛ք մարդկանց հետ շփվելու համար և նրանց տեղեկացնելու, որ դուք աշխատանք եք փնտրում: Հիմնականում մարդիկ ուրախությամբ ձեզ կծանոթացնեն իրենց ծանոթների հետ: Այդ կապերը կհանգեցնեն հարցազրույցների, որի սրդյունքում աշխատանք կգտնե՛ք:

### Վերադարձե՛ք էջ 82-ին

## ԱՄԵՆՕՐՅԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՆՈՒՄ. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Հերթով կարդացեք հետևյալը:

Վերջապես սրդյունավետ աշխատանք որոնողները առկա են ամեն օր ամբողջ աշխարհում մարդու հետ անձնապես հանդիպելու կարևորությունը: Մա գուցե լինի ձեր ամենօրյա ստավիլ սրժեքային քայլը: Ինչո՞ւ: Անձնական հանդիպումների կամ հարցազրույցների սրդյունքում այնլի լավ հատորդակցություն և հասկացողություն է ձեռք բերվում: Հաճախ մարդիկ հիմնականում «խոսում» են մարմնի լեզվով և դեմքի արտահայտություններով: Եվ այս ոչ բանավոր ուղերձները չեն փոխանցվում է-փոստով կամ հեռախոսով: Անձնապես մարդիկ կարող են տեսնել և զգալ, թե որքան լավ եք դուք:

Անձնական հանդիպումները հաճախ նաև թույլ են տալիս ձեզ տեսնել և զգալ միջավայրը, որտեղ դուք գուցե աշխատե՛ք: Դուք կարող եք տեսնել, թե ինչպես են մարդիկ շփվում և որքան ընկերական կամ ուրախ են նրանք, տվյալ կազմակերպության հաջողությունը, ինչպիսի կարիքներ կամ հնարավորություններ կան, և դուք ինչպես կարող եք բավարարել այդ կարիքները: Ցանկացած տեսակի հարցազրույցներ մեծ հնարավորություններ են ընձեռում:

Պարտադիր չէ, որ ամեն օր բոլոր անձնական հանդիպումները լինեն հավանական գործատուների հետ: Դուք նաև կարող եք հանդիպել մյուսների հետ, այդ թվում՝ ընկերների և ընտանիքի, ընկերների ընկերների, ինչպես նաև քարտուղարների, ռադիոյների, խորհրդատուների կամ ուղիների հետ, ովքեր անում են այնպիսի աշխատանք, որ դուք եք ցանկանում ձեռք բերել: Պարզապես հանդիպե՛ք մարդկանց հետ: Նրանց ներկայացե՛ք 30 վայրկյանում և օգտագործե՛ք վերջին հարցը՝ հանդիպում ինդրելով աշխատանքի ղեկավարների և այլ մարդկանց հետ: Շարունակե՛ք փորձել, ցույց տալ ձեր սրժեքը, խնդրե՛ք, որ օգնեն և խորհուրդ տան: Հրաշալի բաներ տեղի կունենան:

Այսպիսով, սա է Աշխատանքի սրբազան փնտրումը: Ամեն օր, եթե դուք գտնե՛ք 15 ռեսուրս և ստեղծե՛ք 10 կապ, հեշտությամբ 2 անձնական հանդիպում կունենա՛ք: Դուք կզարմանա՞ք, թե որքան է սա սրբազան ձեր աշխատանքի որոնման ընթացքը: Կատարե՛ք դա մեծ հավատքով և դրները կբացվեն այնպես, որ երբեք չէ՛իք մտածի, որ հնարավոր կլինե՛ր:

### Վերադարձե՛ք էջ 82-ին

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՄԵՆՕՐՅԱ ՈՐՈՆՈՒՄ. ԲՈԼՈՐԸ ՄԻԱՑՆԵԼՈՎ ԻՐԱՐ

Հերթով կարդացեք հետևյալը:

*Աշխատանքի արագացված որոնման երեք մասերը առանձին քայլեր չեն: Երբ սկսեք քայլեր կատարել, կոտեսնեք, որ ռեսուրսներն ամենուր են: Ամեն օր սկսեք՝ ռեսուրսներ այելացնելով՝ ձեր ցուցակին: Այդ ընթացքում դուք կնուսածեք ինչպես կապ հաստատել մարդկանց հետ, իսկ կապերը հաճախ հանգեցնում են հանդիպումների:*

*Ձեր ինքնապահովման խումբը ռեսուրսների, կապերի և հանդիպումների մեծ աղբյուր է: Ընման աղբյուր են հանդիսանում նաև Եկեղեցու անդամ ընկերները, հարևանները կամ գործընկերները: Կապեր հաստատելով՝ շարունակեք այելացնել*

*ռեսուրսները: Անձնական հանդիպումների ժամանակ փորձեք լրացուցիչ կապեր ձեռք բերել: Լրացուցիչ հարցազրույցներ խնդրեք նրանցից, ում հանդիպում եք:*

*Ներկայացեք 30 փայլկյանում: Աշխատանքի արագացված որոնումը հնարավոր է և կարող է լինել հաճելի գործընթաց: Ուրեմն մի ապասեք: Խոսեք բոլորի հետ: Միշտ փնտրեք Սուրբ Հոգու առաջնորդությունը և սրժանի մնացեք: Մանրակրկիտ գրատումներ կատարեք և հետևեք: Տերը մշտապես ողի ցույց կտա:*

**Վերադարձեք Էջ 82-ին**

**ՌԵՍՈՒՐՆԵՐԻ, ԿԱՊԵՐԻ ԵՎ ՆԱԴԻՊՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱԹՈՒՂԹ**

ՌԵՍՈՒՐՆԵՐ (ցուցակ կազմեք)	ԿԱՊԵՐ (հեռախոս, է-փոստ)	ՆԱԴԻՊՈՒՄՆԵՐ (անձնակազմ)

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԱԳԱՑՎԱԾ ՈՐՈՆՄԱՆԸ ՀԵՏԵՎԵԼՈՒ ՁԵՎԱԹՈՒՂԹ**

Լշեր վանդակներում և գրառումներ կատարեք: Ցույց տվեք օրերի ընդհանուրները:

**ՕՐ 1**

Ռեսուրսներ.	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Օրվա ընդհանուրը _____
Կապեր.	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Օրվա ընդհանուրը _____
Հանդիպումներ.	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Օրվա ընդհանուրը _____
Նշումներ.		

**ՕՐ 2**

Ռեսուրսներ.	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Օրվա ընդհանուրը _____
Կապեր.	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Օրվա ընդհանուրը _____
Հանդիպումներ.	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Օրվա ընդհանուրը _____
Նշումներ.		

**ՕՐ 3**

Ռեսուրսներ.	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Օրվա ընդհանուրը _____
Կապեր.	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Օրվա ընդհանուրը _____
Հանդիպումներ.	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Օրվա ընդհանուրը _____
Նշումներ.		

**ՕՐ 4**

Ռեսուրսներ.	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Օրվա ընդհանուրը _____
Կապեր.	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Օրվա ընդհանուրը _____
Հանդիպումներ.	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Օրվա ընդհանուրը _____
Գրառումներ.		

**ՕՐ 5**

Ռեսուրսներ.	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Օրվա ընդհանուրը _____
Կապեր.	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Օրվա ընդհանուրը _____
Հանդիպումներ.	<input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/> <input type="checkbox"/>	Օրվա ընդհանուրը _____
Նշումներ.		



## ԿԱՊԵՐԻՆ ՆԵՏԵՎԵԼՈՒ ՁԵՎԱԹՈՒՂԹ

### ԿԱՊ

Անձնավորություն կամ կազմակերպություն. \_\_\_\_\_

Հեռախոս. \_\_\_\_\_ Հասցե. \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Ինձ երաշխավորել է. \_\_\_\_\_

**Ես կապ հաստատեցի այս անձնավորության**

**հետ**  Այո  Ոչ Ամսաթիվ. \_\_\_\_\_

ԸՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ.

1. \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_

3. \_\_\_\_\_

ՆԵՏԵՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. \_\_\_\_\_ Կատարվել է մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_ Կատարվել է մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

3. \_\_\_\_\_ Կատարվել է մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

ՆՈՐ ՄԻՋՆՈՐԴՆԵՐ.

1. Անուն. \_\_\_\_\_ Հեռախոս. \_\_\_\_\_ Ֆաքս. \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Հասցե՝ \_\_\_\_\_

2. Անուն. \_\_\_\_\_ Հեռախոս. \_\_\_\_\_ Ֆաքս. \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Հասցե՝ \_\_\_\_\_

### ԿԱՊ

Անձնավորություն կամ կազմակերպություն. \_\_\_\_\_

Հեռախոս. \_\_\_\_\_ Հասցե. \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Ինձ երաշխավորել է. \_\_\_\_\_

**Ես կապ հաստատեցի այս անձնավորության**

**հետ**  Այո  Ոչ Ամսաթիվ. \_\_\_\_\_

ԸՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ.

1. \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_

3. \_\_\_\_\_

ՆԵՏԵՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. \_\_\_\_\_ Կատարվել է մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

2. \_\_\_\_\_ Կատարվել է մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

3. \_\_\_\_\_ Կատարվել է մինչև (ամսաթիվ). \_\_\_\_\_

ՆՈՐ ՄԻՋՆՈՐԴՆԵՐ.

1. Անուն. \_\_\_\_\_ Հեռախոս. \_\_\_\_\_ Ֆաքս. \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Հասցե՝ \_\_\_\_\_

2. Անուն. \_\_\_\_\_ Հեռախոս. \_\_\_\_\_ Ֆաքս. \_\_\_\_\_

Է-փոստ. \_\_\_\_\_ Հասցե՝ \_\_\_\_\_





# 6

*Ինչպե՞ս կարող եմ ինձ լավ  
դրսևորել աշխատանքում  
և շարունակել  
հաջողություններ  
գրանցել:*

---

Աշխատանքի իմ որոնումը

# ՎԱՐՈՂՆԵՐԻ ՇԱՄԱՐ

## Ժողովի օրը.

- Ձանգահարեք կամ հաղորդագրություն ուղարկեք խմբի բոլոր անդամներին: Խնդրեք նրանց 10 րոպե շուտ գալ՝ իրենց պարտավորությունների մասին զեկուցելու համար:
- Պատրաստեք ժողովի նյութերը:

## Ժողովից 30 րոպե առաջ.

- Աթոռները դասավորեք սեղանի շուրջն այնպես, որ բոլորը մոտ լինեն:
- Գրատախտակին գծեք հետևյալ աղյուսակը.

Խմբի անդամի անունը	Ռեսուրսներ. գտել եմ առնվազն 15/ օրական, 75/ շաբաթական (Գրեք #)	Կապեր. հաստատել եմ առնվազն 10/ օրական, 50/ շաբաթական (Գրեք #)	Անձնական հանդիպումներ. առնվազն օրը 2 անգամ, շաբաթը 10 անգամ (Գրեք#)	Պարապել եմ ԻՄ հիմքը սկզբունքը և ուսուցանել իմ ընտանիքին (Այո/Ոչ)	Ավելացրել եմ խնայողություններին (Այո/Ոչ)	Ջնկուցել եմ վարժության ընկերոջը (Այո/Ոչ)
Գլորիա	80	53	11	Կ	Կ	Կ

## Ժողովից 10 րոպե առաջ.

- Ջերմորեն ողջունեք մարդկանց, երբ նրանք ներս են մտնում:
- Երբ խմբի անդամները ներս մտնեն, խնդրեք նրանց լրացնել գրատախտակի պարտավորության աղյուսակը:
- Ժամապահ նշանակեք:

## Երբ սկսում եք՝

- Խնդրեք բոլորին անջատել հեռախոսները և այլ սարքերը:
- Բացման աղոթք ասել (և ցանկության դեպքում՝ օրհներգ կատարել):
- Ուշացողներին ցածր ձայնով խնդրեք անջատել իրենց հեռախոսները և լրացնել պարտավորության աղյուսակը մինչ խումբը շարունակում է քննարկումը:
- 20 րոպե ժամանակ պահեք *Իմ հիմքը* գրքույկի համար:
- Լրացրեք սկզբունք 6-ը՝ *Իմ Հիմքում*: Այնուհետև վերադարձեք այս աշխատանքային տետրին և շարունակեք կարդալ հաջորդ էջը:



## ԶԵԿՈՒՑԵԼ

### ՊԱՇԵՂ ԵՄ ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

- Ժամանակ.** 20 րոպե ժամանակ պահեք Ձեկուցել բաժնի համար:
- Կիրառել.** Եկեք զեկուցենք մեր պարտավորությունների մասին: Ովքեր պահել են իրենց բոլոր պարտավորությունները, խնդրում եմ կանգնել: (Օտփահարել:)
- Կարդացեք.** Այժմ բոլորդ կանգնեք: Եկեք միասին կրկնենք մեր թեմայի խոսքերը.

**«Եվ իմ նպատակն է՝ ապահովել իմ սրբերին. քանզի բոլոր բաներն իմն են»:**

*Վարդապետություն և Ուխտեր 104.15*

**Առ Տերը հավատքով մենք միասին աշխատում ենք դառնալ ինքնապահով:**

- Կարդացեք.** Եկեք նստենք:
- Քննարկեք.** Ի՞նչ սովորեցիք ռեսուրսներ գտնելով, կապեր հաստատելով և անձնական հանդիպումներ ունենալով:



# ՍՈՎՈՐԵԼ

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ԼԱՎ ԴՐՍԵՎՈՐԵԼ ԻՆՉ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ:

**Ժամանակ.** 60 րոպե ժամանակ պահեք Սովորել բաժնի համար:

**Կարդացեք.** Լավ աշխատանք գտնելուց հետո մենք պետք է պահենք և մեզ լավ դրսևորենք այդ աշխատանքում: Մենք պետք է լինենք հնարավորինս լավագույն աշխատակիցները:

**Կարդացեք.** **ՇԱՐՄԹՎԱ ՀԱՐՑ—Ինչպե՞ս կարող եմ աշխատանքում ինձ գերազանց դրսևորել և շարունակել հաջողություններ գրանցել:**

**ՇԱՐՄԹՎԱ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ—Ես (1) աշխատանքում ինձ լավ կդրսևորեմ, (2) կհաստատեմ իմ արժանիքները իմ գործատուի մոտ և (3) կծրագրեմ իմ կարիերան:**

**Դիտեք.** «Դա իմ խնդիրը չէ» (Չկա՞ տեսանյութ, կարդացեք էջ 108:)

**Քննարկեք.** Ինչո՞ւ տնօրեն Ջոզեֆը խնդրեց Գլորիային և Էնթոնիին, որ իրենք լուծեին իրենց խնդիրները:

**Դիտեք.** «Դա իմ խնդիրն է» (Չկա՞ տեսանյութ, Կարդացեք էջ 109:)

**Քննարկեք.** Պատասխանատվություն ստանձնելով՝ Գլորիան և Էնթոնին ավելի արժեքավոր դարձան իրենց գործատուի համար: Ինչո՞ւ:

**Կարդացեք.** Մենք մեզ ավելի լավ կդրսևորենք աշխատանքում, եթե օգտագործենք այն բոլոր գործիքները, որ ձեռք ենք բերել աշխատանք փնտրելիս, դրանք են.

1. Կապեր ստեղծել և մեր ծանոթների շրջանակը կառուցել:
2. Մյուսների հետ հստակ հաղորդակցվել, լավ վերաբերմունք դրսևորել և լավ տեսք ունենալ:
3. Տրնաջան աշխատել և հաստատել մեր արժանիքները մեր գործատուին:

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆՈՒՄ, ՈՐ ՕԳՆԵՄ ԻՄ ԳՈՐԾԱՏՈՒԻՆ ՀԱԶՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԵԼ:

- Կարդացեք.** Գործատուները որոշ աշխատակիցների ավելի շատ են գնահատում, քան մյուսներին: Արժեքավոր աշխատակիցներն ավելի շատ գումար կամ արտադրանք են ստեղծում ընկերության համար, քան ընկերությունը ծախսում է նրանց վրա:
- Քննարկեք.** Ի՞նչ օգուտ եք ստանում, երբ օգնում եք ձեր գործատուին:
- Կիրառեք.** Մտածեք այդ երեք աշխատակիցների մասին, կարծես թե դուք եք այդ ընկերության տնօրեն Ջոզեֆը: Դուք որոշակի գումար եք ծախսում ձեր աշխատակիցներից յուրաքանչյուրի վրա՝ աշխատավարձի, սարքավորումների և այլնի տեսքով: Իսկ յուրաքանչյուր աշխատակից գումար է բերում՝ ստեղծելով ապրանք, վաճառելով կամ հաճախորդներին սպասարկելով:

### ԲԵՆԻԱՄԻՆ



Բերում է. 50000  
Ծախս է ընկերության համար. 53000

---

Շահույթ/Կորուստ. **-3000**

### ԳԼՈՐԻԱ



Բերում է. 26000  
Ծախս է ընկերության համար. 25000

---

Շահույթ/Կորուստ. **1000**

### ԱՆՋԵԼԱ



Բերում է. 45000  
Ծախս է ընկերության համար. 25000

---

Շահույթ/Կորուստ. **20000**

Տեղափոխեք ձեր աթոռն այնպես, որ խոսք ձեր կողքին նստած անձնավորության հետ: Միասին պատասխանեք հետևյալ հարցերին.

1. Ո՞վ է առավել արժեքավոր աշխատողը:
2. Ո՞վ է ամենաքիչ արժեքավորը:
3. Եթե 2000-ի դրամական ձեր պարզևը պետք է տայիք ինչ-որ մեկին, ո՞ւմ կտայիք:
4. Եթե ձեր առավել քիչ արժեքավոր աշխատակիցը չառաջադիմեր, դուք արդյո՞ք կհեռացնեիք նրան:
5. Եթե մեկ այլ ընկերություն փորձեր աշխատանքի ընդունել ձեր լավագույն աշխատակցին և նրան տանել ձեր մոտից, դուք նրա աշխատավարձը կբարձրացնեի՞ք, որպեսզի ձեզ մոտ պահեիք:

Ձեր պատասխաններով կիսվեք ամբողջ խմբի հետ:

- Քննարկեք.** Ամբողջ խմբով քննարկեք, թե ինչպես կարող եք ավելի արժեքավոր աշխատակից դառնալ:

**Կիրառեք.** Տեղափոխեք ձեր աթոռն այնպես, որ խոսեք ձեր կողքին նստած անձնավորության հետ: Խոսեք յուրաքանչյուր հարցի մասին և գրեք ձեր մտքերը:

Ձեր ներկայիս աշխատանքի կամ այն աշխատանքի համար, որ փնտրում եք, ինչպե՞ս կկարողանայիք.

1. Նոր հաճախորդներ ավելացնել բիզնեսին:

---

---

2. Ներկայիս հաճախորդներին ավելի գոհ և նվիրված դարձնել:

---

---

3. Ներկայիս հաճախորդներին համոզել ավելի շատ գնել:

---

---

4. Ավելացնել արտադրանքի արժեքը և զինը:

---

---

5. Օգնել հաճախորդներին ավելի արագ կամ նույնիսկ նախապես վճարել:

---

---

6. Օգնել, որպեսզի ընկերությունն այլ եղանակներով ավելացնի եկամուտը:

---

---



## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆԵԼ ՕԳՆԵԼՈՒ ԻՄ ԳՈՐԾԱՏՈՒԻՆ ԿՐՃԱՏԵԼ ԾԱԽՍԵՐԸ:

- Կարդացեք.** Որպես արժեքավոր աշխատակիցներ, մենք նաև ծախսերը կրճատելու ուղիներ ենք փնտրում:
- Քննարկեք.** Ինչպե՞ս դուք կարող եք օգնել կրճատել ծախսերը:
- Կարդացեք.** Երկրորդ տեսանյութում Էնթոնին լավ գաղափար ուներ. մեքենան դնել սպասարկման գրաֆիկի մեջ: Նա սովորում էր խնայել իր գործատուի գումարը: Այս աղյուսակը ցույց է տալիս տարբերությունը: Էնթոնիի գաղափարը գործատուի համար մեծ գումարներ կխնայի՝ հինգ տարում 14500: Երբ Էնթոնին ցույց կտա դա իր ղեկավարին, գործատուն հստակ կտեսնի Էնթոնիի արժեքը:

	ԾԱԽՍԵՐԸ ՍՈՍՆՑ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՖԻԿԻ		ԾԱԽՍԵՐԸ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԳՐԱՖԻԿՈՎ		
	Վերանորոգել	Փոխարինել	Սպասարկում	Վերանորոգել	Փոխարինել
ՏԱՐԻ 1	2000		100	0	0
ՏԱՐԻ 2	2000		100	500	0
ՏԱՐԻ 3		10000	100	0	0
ՏԱՐԻ 4			100	500	0
ՏԱՐԻ 5	2000		100	0	0
<b>Ընդհանուր ծախսեր</b>	16000		1500		

- Կիրառեք.** Տեղափոխեք ձեր աթոռն այնպես, որ խոսեք ձեր կողքին նստած անձնավորության հետ: Հերթով: Տեսեք, թե քանի պատասխաններ կարող եք գտնել:
1. Միմյանց նկարագրեք ձեր աշխատանքը կամ այն աշխատանքը, որ փնտրում եք:
  2. Ձեր յուրաքանչյուր աշխատանքի համար գտեք բոլոր գաղափարները, թե ինչպես կարելի է՝
    - Խնայել ժամանակ
    - Բարելավել գործընթացը
    - Ավելի բարեխղճորեն վերաբերվել մեքենաներին կամ արտադրանքին
    - Նվազեցնել սխալները
  3. Գրի առեք լավ գաղափարները և փորձեք դրանք իրագործել ձեր աշխատատեղում, մինչև մեր հաջորդ ժողովը: Եթե դեռևս աշխատանք չունեք, ուղիներ փնտրեք՝ ինչպես կարող եք պատրաստվել իրագործելու ձեր գաղափարները, երբ աշխատանք գտնեք:
- 
-

## ԻՆՉՊԵ՞Ս ԵՄ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆՁՆՈՒՄ ԻՄ ԿԱՐԻԵՐԱՅԻ ՀԱՄԱՐ:

- Կարդացեք.** Միասին կարդացեք այց կողմում տրված մեջբերումը:
- Քննարկեք.** Չեր ներկայիս աշխատանքը (կամ այն աշխատանքը, որ փնտրում եք) կօգնի՞ ձեզ դառնալ ինքնապահով: Հավատո՞ւմ եք, որ Տերը կօգնի ձեզ պատրաստվել ավելի լավ աշխատանքների համար: Ինչպե՞ս Նա կանի դա:
- Դիտեք.** «Նա պալատ է կառուցում» (Չկա՞ տեսանյութ, կարդացեք էջ 110:)
- Քննարկեք.** Ի՞նչ սովորեցիք այս տեսանյութից: Ի՞նչ զգացիք:
- Կիրառեք.** Տեղափոխեք ձեր աթոռն այնպես, որ խոսեք ձեր կողքին նստած անձնավորության հետ:
1. Նկարագրեք ձեր ներկայիս աշխատանքը կամ այն աշխատանքը, որ փնտրում եք:
  2. Նկարագրեք աշխատանքը, որ դուք ցանկանում եք ունենալ երկուսից չորս տարի հետո: Արդյո՞ք դա նույն, թե մեկ ուրիշ աշխատանք է:
  3. Քննարկեք, թե ինչպես կլինեն, եթե բավականաչափ գումար ունենայիք տաճար այցելելու, միսիա ծառայելու կամ մյուսներին օգնելու համար:
  4. Այս վանդակներում գրեք, թե ինչ եք քննարկել:

«Քանզի Տեր Աստվածն ասել է, որ. Որքան որ դուք կպահեք իմ պատվիրանները, դուք կբարգավաճեք երկրում»:

### ՉՆԵՓԻ 4.4

ՈՐՏԵՂ ԵՔ ԴՈՒՔ ԱՅԺՄ

ՈՐՏԵՂ ԵՔ ՑԱՆԿԱՆՈՒՄ ԼԻՆԵԼ

### ՈՉ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԺՈՒԹՅՈՒՆ. ԻՆՉՊԵՍ ԳՏՆԵՄ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ, ՈՎ ԿՕԳՆԻ ԻՆՉ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՍՆԵԼ

#### (ՄԻ ԿԱՏԱՐԵՔ ԱՅՍ ԿԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ԺՈՂՈՎԻ ՓԱՄԱՆԱԿ:)

Ցանկության դեպքում կարող եք այս վարժությունն անել մինչև մեր հաջորդ ժողովը. Խորհրդատուն կօգնի ձեզ տեղեկանալ աշխատավայրի չգրված կանոններին և ակնկալիքներին: Ուսումնասիրեք էջ 111:

## ԻՆՉ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԱՐԻՔԸ ԵՍ ԿՈՒՆԵՆԱՄ ԻՄ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՀԱՍՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

- Կարդացեք.** Այժմ, երբ մենք գիտենք՝ ուր ենք ցանկանում գնալ, ինչպե՞ս կարող ենք հասնել այնտեղ: Եկեք կարդանք այց կողմում տրված սուրբ գրության հատվածը:
- Քննարկեք.** Արդյո՞ք Քրիստոսը կարող է ձեզ օրհնել նյութապես: Դա կօգնի՞ ձեզ աշխատանք գտնել, աշխատանքը պահել և ձեր կարիերայում առաջադիմել:
- Կարդացեք.** Տերը մեզ փորձառություններ կտա մեր աշխատանքում՝ օգնելով հմտություններ և գիտելիք ձեռք բերել: Նա նաև ակնկալում է մեզանից, որ գիտելիք ձեռք բերենք ուսումնասիրելով և պատրաստովելով: Շատ աշխատանքներ են հասանելի միայն նրանց, ովքեր հատուկ աստիճան կամ վկայական ունեն: Կրթությունը թույլ է տալիս մեզ առաջադիմել աշխատանքում և դառնալ ավելի արժեքավոր մեր գործատուների համար:
- Կիրառեք.** Թվարկեք հմտություններն ու գիտելիքը, որ անհրաժեշտ կլինեն ձեր ապագա աշխատանքում: Թվարկեք, ինչ միջոցներով կարող եք ձեռք բերել դրանք: Որո՞նք են հաջորդ քայլերը, որ պետք է անեք ձեր ճանապարհին: (Օրինակը տրված է:)

«Քանզի դուք չէիք գա այսքան հեռու, եթե դա չլիներ Քրիստոսի խոսքով և անխախտ հավատքով նրա հանդեպ, ամբողջովին ապավինելով նրա արժանիքներին, որը հզոր է փրկելիս»:

**2 Նեփի 31.19**

ՑԱՆԿԱԼԻ ՊԱՇՏՈՆՆԵՐ	ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳԻՏԵԼԻՔ	ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳԻՏԵԼԻՔ ՁԵՈՔ ԲԵՐԵԼՈՒ ՈՒՂԻՆԵՐ	ՀԱՋՈՐԴ ՔԱՅԼ
Շինարարության մեկնեցեր	Ինժեներական հմտություններ Օրագրման հմտություններ Խնդիրներ լուծելու հմտություններ Հաղորդակցման հմտություններ	Դասընթացներ մասնագիտական կամ տեխնիկական ուսումնարանում կամ ճարտարագիտական քոլեջում	Իմ հաջորդ քայլը ծրագրելու համար միանալ «Կրթություն հանուն ավելի լավ աշխատանքի» ինքնապահովման խմբին:



# ԽՈՐՀԵԼ

## Ի՞նչ ԿԱՐՈՂ ԵՄ ԱՆԵԼ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

**Ժամանակ.** 10 րոպե ժամանակ պահեք Խորհել բաժնի համար:

**Կիրառեք.** Կարդացեք աջ կողմում տրված մեջբերումը կամ մեկ այլ սուրբ գրության հատված: Հանգիստ խորհեք ձեր սովորածի շուրջ: Գրեք ձեր տպավորությունները ներքևում:

---

---

---

---

---

---

**Քննարկեք.** Ինչ-որ մեկը ցանկանո՞ւմ է կիսվել իր մտքերով:

*«Ականջ արեք Տիրոջ խոսքերին: . . . Մի կասկածեք, այլ եղեք հավատացող»:*

**ՄՈՐՄՈՆ 9.27**



# ՊԱՐՏԱՎՈՐՎԵԼ

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՕՐ-ՕՐԻ ԱՌԱՋԱԴԻՄԵԼ:

- Ժամանակ.** 10 րոպե ժամանակ պահեք Պարտավորվել բաժնի համար:
- Կիրառեք.** Ընտրեք ձեր վարժության ընկերոջը: Որոշեք՝ երբ և ինչպես դուք կապ կպահեք միմյանց հետ:

*Վարժության ընկերոջ անունը*

*Կոնտակտային տվյալներ*

**Բարձրաձայն կարդացեք յուրաքանչյուր պարտավորությունը ձեր վարժության ընկերոջը: Խոստացեք պահել ձեր ստանձնած պարտավորությունները: Ստորագրեք ներքևում:**

### ԻՄ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Եթե դեռևս աշխատանք չունեմ, ես կարագացնեմ իմ աշխատանքի որոնումը:
- Ես կբարելավեմ իմ աշխատանքը՝ պատասխանատվություն ստանձնելով իմ կարիերայի համար:
- Ես կպարապեմ իմ հիմքը գրքուկի այսօրվա սկզբունքը և կուսուցանեմ իմ ընտանիքին:
- Ես կավելացնեմ իմ խնայողություններին՝ թեկուզ փոքրիկ գումար:
- Ես կզեկուցեմ իմ վարժության ընկերոջը:

*Իմ ստորագրությունը*

*Վարժության ընկերոջ ստորագրությունը*

## ԻՆՉՊԵ՞Ս ԿԱՐՈՂ ԵՄ ՋԵԿՈՒՑԵԼ ԻՄ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ:

**Կիրառեք.** Նախքան հաջորդ ժողովը, օգտագործեք այս պարտավորության դիագրամը ձեր առաջընթացը գրանցելու համար: Ստորև տրված վանդակներում գրեք «Այո» կամ «Ոչ»:

Արարգացրել եմ իմ աշխատանքի որոնումը (Այո/Ոչ)	Բարելավել եմ իմ աշխատանքը (Այո/Ոչ)	Պարապել եմ շիմքի սկզբունքը և ուսուցանել իմ ընտանիքին (Այո/Ոչ)	Ավելացրել եմ խնայողություններին (Այո/Ոչ)	Ջնկուցել եմ վարժության ընկերոջը (Այո/Ոչ)

**Կարդացեք.** Մեր հաջորդ ժողովին մենք կրկին կանցկացնենք ինքնապահովման ստուգաբաններ, որպեսզի հավաստիանանք՝ արդյոք դարձել ենք ավելի ինքնապահով: Մենք պետք է բերենք մեր *Իմ ուղին դեպի ինքնապահովում* գրքույկները:

Ընտրեք որևէ մեկին, որպեսզի հաջորդ ժողովին վարի *Իմ հիմքը* թեման: (Չգիտե՞ք ինչպես վարել *Իմ հիմքը* թեման: Կարդացեք էջ 13 և դիմացի շապիկի ներսի էջը:)

Խնդրեք որևէ մեկին ասել փակման աղոթքը:

### Դիտողությունները խրախուսվում են

Խնդրում ենք ուղարկել ձեր մտքերը, դիտողությունները, առաջարկները և փորձառությունները [srsfeed-back@ldschurch.org](mailto:srsfeed-back@ldschurch.org):

### Ծանոթագրություն վարողի համար.

Հաջորդ ժողովին բերեք *Իմ ուղին դեպի ինքնապահովում* գրքույկների հինգ հավելյալ օրինակներ:

Հաջորդ ժողովները ինչ-որ կերպ կտարբերվեն մինչ այժմ եղած ժողովներից: Նախքան հաջորդ ժողովը, կարդացեք նյութը և պատրաստվեք պատասխանել հարցերին:

# Ռեսուրսներ

## ԴԱ ԻՄ ԽՆԴԻՐԸ ՉԷ:

Ընտրեք դերերը և դերերով ներկայացրեք հետևյալը:

**ՁՈՋԵՖ (ՏԼՕՐԵՆ).** Գլորիա, դուք երեք ժամ ուշացել եք:

**ԳԼՈՐԻԱ.** Կներե՞ք, Ջոզեֆ: Քնելու կարիք ունե՞ի: Անցած գիշեր որդիս հիվանդ էր, և ես շատ ուշ եմ քնել:

**ՁՈՋԵՖ.** Դա իմ խնդիրը չէ:

**ԳԼՈՐԻԱ.** Բացի այդ այս առավոտ իմ զարթոցիչը չաշխատեց:

**ՁՈՋԵՖ.** Դա իմ խնդիրը չէ:

**ԳԼՈՐԻԱ.** Այնպես որ մինչև պատրաստվեցի, ուշացա սառձիկն ավտոբուսից:

**ՁՈՋԵՖ.** Կրկին, իմ խնդիրը չէ:

**ԳԼՈՐԻԱ.** Երբ ավտոբուսի կանգառ հասա, սրարգեցի, որ ինձ մոտ ավտոբուսի տունս հասնար գունար չունեի:

**ՁՈՋԵՖ.** Միևնույն է, իմ խնդիրը չէ:

**ԳԼՈՐԻԱ.** Արդյա՞հա, բաց թողեցի երկրորդ ավտոբուսը, որովհետև պետք է վերադառնայի տուն գունարը վերցնելու:

**ԷՆԹՈՆԻ.** Կներե՞ք, որ ձեզ ընդհատում եմ, բայց այն մեքենան սարքին չէ և հեղուկ է դուրս տալիս ավան տեղից:

**ՁՈՋԵՖ.** Ո՞ր մեքենան:

**ԷՆԹՈՆԻ.** Չգիտեմ ինչպես է այն կոչվում: Այն գտնվում է ետևի անկյունում դարակների մոտ: Թոնասն այստեղ չէ այսօր, և նա է ստիդաբար այդ մեքենան աշխատեցնում:

**ՁՈՋԵՖ.** Դա իմ խնդիրը չէ:

**ԷՆԹՈՆԻ.** Ես սկսեցի օգտագործել մեքենան և այն կանգնեց:

**ՁՈՋԵՖ.** Դե, Դա իմ խնդիրը չէ:

**ԷՆԹՈՆԻ.** Հախանաբար այն ձեռնարկ ունի, բայց չգիտեմ, որտեղ է այն:

**ՁՈՋԵՖ.** Դե լավ, լավ: Երկուսդ էլ սպասե՛ք: Էնթոնի, Գլորիա, երկուսով լուծե՛ք հարցերը:

**Վերադարձե՛ք էջ 98-ին**



## ԴԱ ԻՄ ԽՆԴԻՐՆ Է

Ընտրեք դերերը և դերերով ներկայացրեք հետևյալը:

**ՁՈԶԵՖ.** *Էնթոնի, զանգիր Թունասին և խնացիր, թե երբ կվերադառնաս հաճախորդի հետ հանդիպումից: Մեզ այդ մեքենայի հասարակելու է հարկավոր:*

**ԷՆԹՈՆԻ.** *Ես գիտեի, որ մեզ հեղուկ հարկավոր կլիներ: Ես արդեն գնացել եմ, գնել եմ և լիցքավորել եմ այն:*

**ՁՈԶԵՖ.** *Ի՞նչ: Չես սպասել Թունասի՞ն: Ես չեմ ուզում որ նորից միջոցներ մեքենան:*

**ԷՆԹՈՆԻ.** *Ես այժմ սամեն ինչ գիտեմ այդ մեքենայի մասին: Ես գտա ձեռնարկը, տարաւտուն, ուսումնասիրեցի այն, վերադարձաւ և վերանորոգեցի մեքենան: Այժմ ես կարող եմ հոգ տանել սամեն ինչի հասար, երբ Թունասը հանդիպում ունի հաճախորդի հետ:*

**ՁՈԶԵՖ.** *Հրաշալի է:*

**ԷՆԹՈՆԻ.** *Դա դեռ սամենը չէ: Ես կազմել եմ մեքենայի տեխնոլոգիան ժամանակակցույց հետագա խնդիրներից խոստովելու հասար:*

**ՁՈԶԵՖ.** *Շնորհակալութեամբ, Էնթոնի: Բակասար ըստ ըստ եմ գնահատում խնդիրը լուծելու քո կարողութեամբ:*

**ԷՆԹՈՆԻ.** *Անշուշտ: Դա իմ խնդիրն է:*

**ՁՈԶԵՖ.** *[Ինքնիրեն] Դե, Էնթոնին իրոք առաջ է գնացել: Նա այսօր խակասար վճարեց ինքն իր հասար:*

**ՁՈԶԵՖ.** *Գլոխ, Ինչպե՞ս ես տեղ հասել: Անջելան զանգահարեց և ստաց, որ չի կարող այսօր աշխատանքի գալ, դուրսիցս*

*ախտորոսի վարորդները գործարդու են սնում: Կարծեցի դու և Բենջամինը նույնպես չէիք կարողանալու գալ:*

**ԳԼՈՐԻԱ.** *Բուսցա, որ ախտորոսի վարորդները ցանկանում էին գործարդու սնել, այնպես որ երկու օր առաջ պայմանավորվեցի Բենջամինի հետ, որ գործարդուի դեպքում նա իր մեքենայով ինձ աշխատանքի բերեր:*

**ՁՈԶԵՖ.** *Հրաշալի է, որ նախօրոք արդարես ես մտածել:*

**ԳԼՈՐԻԱ.** *Նաև մտածեցի, որ այսօր բենզակցակայաններում երկար հերթեր կլինեն, այնպես որ Բենջամինին գումար տվեցի և խնդրեցի, որ երեկ բենզին լցներ, մինչև գործարդուի որոշում կայացներ:*

**ՁՈԶԵՖ.** *Դու գումար ունեի՞ր դրա հասար:*

